

ՇՈՂՈՄ-ԱԼԵՅԽԵՄ

ՍՏԵՄՊԵՆՅՈՒ

Հրեական սիրավեպ

Արտատպված է՝ Շոլոմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964:  
Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:

## Ստեֆանյուի տոհմաբանությունը

Ստեֆանյու մականունը նրան ժառանգաբար անցել էր հորից, որը ծագումով Մազեպովկայից քիչ հեռու Ստեֆանյու գյուղից էր: Նրա հանգուցյալ հայրը ինչպես և ինքը, երաժիշտ էր, որին անվանում էին Բերլ-Բաս կամ Բերլ ստեֆանացի: Նա ոչ միայն կոնտրաբաս նվագող էր, այլև հրաշալի բաղին, այսինքն՝ հանգախոս և մասխարա: Հարսանիքներում մեկ կտեսնեիր արջապար կտար, մեկ աչքերի կոպերը շուռ տալով, կույր մուրացկանի տնազը կաներ, մեկ կներկայացներ ծննդկանի, որը ոչ իր ձայնով ճչում է. «Վա՛յ, տատմեր ջան, երդվում եմ բոլոր սրբերով, էլ էսպես բան չի լինի երբեք»... Կամ էլ, կպատահեր, հարսանիքի սրահի մեջտեղում բաց կթողներ ջրի շիթ՝ ստիպելով տղամարդկանց հավաքել իրենց երկար սերթուկների փեշերը, իսկ կանանց՝ շրջագգեստների... Կամ էլ հանկարծ, աննկատելի, հարսի մոր գոգնոցին մի ինչ-որ գվարձալի բան կկախեր կամ էլ դրա նման մի ուրիշ բան կհնջարքեր:

Երաժիշտի իր փեշակը Ստեֆանյուն ժառանգել էր ապուպապերից: Նրա հայրը՝ Բերլ-Բասը, ինչպես մենք արդեն գիտենք, եղել էր կոնտրաբաս նվագող: Պապը, ռեֆ Շմուլիկը՝ փողհար, պապի հայրը՝ կիմբալահար Ֆայվուշը — կիմբալա, իսկ պապի պապը՝ Էֆրայիմ-Ֆայուլը... Մի խոսքով, Ստեֆանյուի յոթ պորտը երաժիշտներ էին:

Հոգուտ մեր Ստեֆանյուի, պետք է ճշմարիտն ասել, որնա չէր ամաչում իր փեշակից, ինչպես երբեմն պատահում էր ուրիշ երաժիշտների հետ: Եվ զարմանալու ոչինչ չկա, Ստեֆանյուն հոչակ ուներ ոչ միայն Մազեպովկայում, նրա անունը դրողում էր համարյա աշխարհով մեկ: Հանա՞ք բան է, հապա ասացեք Ստեֆանյու...

Ամեն մի հրեա իրեն մեծ պատիվ էր համարում Նիսոն Բելզերի երգելը, բաղին Գողիկի կատակներն ու երգերը կամ Ստեֆանյուի նվագը լսելը: Հենց միայն դրանից դուր կարող էր դատել, որ Ստեֆանյուն մի սովորական երաժիշտ չէր և եթե այդ բոլոր «մեծերի» հետ հավասարապես փառք էր վայելում, դա բնավ էլ պատահական չէր:

Հրեաները սիրում են երաժշտություն և խելքները դրանից հասնո՞ւմ է, դժվար թե որևէ մեկը այդ առարկի: Թող որ նրանց այնքան էլ հաճախ բախտ չէ վիճակվում լսելիքը քաղցրացնել երաժշտությամբ, բայց ասացեք ինդրեն, այդ ո՞ր ուրախությունից պիտի հրեան հանկարծ սկսի երգել կամ պարի մեջ մտնել: Համենայն դեպս, ինչ կուզեք ասեք, հրեայի խելքը հասնում է թե երաժշտությունից, թե երգից, թե մյուս արվեստներից:

Եթե մեզ մոտ, ավան է գալիս մի որևէ հայտնի կանտոր, ոչ այլ կերպ, քան տոմսով են սինագոգ թողնում, իսկ հարսանիքների մասին ասելն անգամ ավելորդ է. հարսանիքները, ինչպես հայտնի է, առանց երաժշտության չեն լինում: Լսել, թե ինչպես է խնջույքի սեղանի շուրջը գեղգեղում նվագախումբը՝ կատարելով որևէ թախձանուշ մի երգ (ուրախը հետո կլինի), դրա համար մենք պատրաստ ենք զոհել ամեն ինչ: Ժողովուրդը նստած, երանության մեջ ականջ է դնում: Իսկ երաժիշտները նվագում են մի տխուր վշտալուր եղանակ: Ջութակը աղեկտուր մերթ հառաչում է, մերթ լալիս, մյուս գործիքները ձայնակցում են նրան՝ արձակելով նույնալար սրտահույզ հնչյուններ:

Մռայլ ամպ է սահում ունկնդիրների դեմքով, հոգին ճնշում է թախիծը, քաղցր, բայց և այնպես թախիծ: Յուրաքանչյուրը մտախոհ իջեցնում է գլուխը, մատներով շոշափելով ափսեն, կամ մատով

գլորելով թարմ հալայի<sup>1</sup> գնդիկներ՝ ընկնում է խոհերի գիրկը, անուրախ մտքերի աշխարհը: Ամեն մարդ իր վիշտն ունի, իր հոգսը, բայց հոգսն անկարող է հրեային կտրել աշխարհից: Եվ իրար են ձուլվում թախճանուշ մեղեդիներն ու տխուր խոհերը, ջուրակի ամեն մի հառաչ տնքոցով ու ցավով արձագանք է գտնում հարսանեկան հյուրերի սրտերում: Մարդկային սիրտը և հատկապես հրեայինը, մի ջութակ է ասես, սեղմում ես լարերին — դուրս ես քաշում ամեն տեսակի, բայց ամենից շատ թախճալուր հնչյուններ... Իսկ այդ բանը միայն մեծ երաժիշտի ձեռքից կգա, իսկական վարպետի, այնպիսին, ինչպիսին Ստեմպենյուն է:

Եվ այ թե վարպե՛տն էր Ստեմպենյուն: Պատահում էր, ջութակը ձեռքն առնելով, աղեղը վրայով տանում էր թե չէ, ջութակը սկսում էր խոսել: Եվ այն էլ ինչպե՛ս՝ կենդանի, իսկական մարդկային ձայնով. այդտեղ կա և աղերս, և կշտաբանք, սրտակտուր հառաչանք, տանջալից ճիչ, որ գալիս է սրտի խորքերից... Ստեմպենյուն խոնարհում է գլուխը մի կողմ: Սև, երկար խոպոպները անկանոն թափվում են լայն ուսերին: Սև աչքերը, փայլատակող աչքերը նայում են վեր, իսկ հրաշալի դեմքը մահվան դալկություն է ստանում... Եվս մի ակնթարթ, և չկա՛ Ստեմպենյուն: Միայն տեսնում ես, թե ինչպես է ձեռքը թռչում վեր ու վար, վեր ու վար, և ծորում են հնչյունները և հոսում են մեղեդիները, բայց ամենից շատ տխրագին, վշտալի, որոնք ցավագին արձագանք են գտնում սրտերում:

Լսողները քարանում են, համբանում հիացմունքից: Սրտները փափկում է, արցունքներ են երևում աչքերում: Մարդիկ հառաչում են, մարդիկ տնքում են, մարդիկ լալիս... Իսկ Ստեմպենյուն: Ո՞ւր է Ստեմպենյուն: Ո՞ւր է այնտեղ Ստեմպենյո: Հարցրեք իրեն, թե որտեղ է գտնվում, նա ինքն էլ չի կարողանա ասել: Նա իրենն է շարունակում աղեղը անվերջ տանում է վեր ու վար, վեր ու վար և ուրիշ ոչ մի բանի հետ գործ չունի... Ավարտելով նվագը, Ստեմպենյուն նետում է ջութակը և ձեռքը տանում սրտին: Աչքերն այրվում են, ինչպես պսակադրության մոմերը: Հրաշալի դեմքն ամբողջովին փայլում է:

Հյուրերն ասես սթափվում են երազից, տխուր, բայց հոգեթով երազից: Բոլորը խմբովին արտահայտում են իրենց հիացմունքը, ախ քաշում, հառաչում, զմայլվում, գովում երաժիշտին ըստ ամենայնի և գովելուց չեն կշտանում:

— Այս ի՛նչ բան էր, Ստեմպենյո: Օ՛հ Ստեմպենյո...

Իսկ կանայք: Ի՛նչ ասենք այստեղ կանանց մասին: Հազիվ թե Դատաստանի նախօրեին, իրենց թանկագին հանգուցյալներին հիշելիս, նրանք այսպես աղեկտուր արտասուք թափեն, ինչպես թափում են այն բուրբուխներին, երբ նվագում է Ստեմպենյուն: Սողոմոնի տաճարի կործանման պատճառով թափված արցունքը ոչինչ է արցունքի այն հեղեղի առաջ որ թափում են կանայք Ստեմպենյուի նվագը լսելիս:

— Տե՛ր աստված, թող քո օրինությամբ իմ կրտսեր աղջկա հարսանիքին ես էլ կարողանամ Ստեմպենյուին հրավիրել, ո՛վ արդարն աստված:

Այսպիսի ցանկություններ էին շնչում կանայք, մաքրելով թաց, արցունքից ուռած աչքերը և կարմրած քթերը, ըստ որում, երազկոտ ետ են գցում գլուխները, ցուցադրելով պարանոցի մանյակը, իսկ ոսկե ականջօղերը, մատանիները, կրծքագարդերը, շղթաները և մյուս զարդարանքները փայլում են, փողփողում ծիածանի բոլոր գույներով:

Իսկ աղջիկները հո, ձեռքից գնացել էին: Նրանք կանգնած են անշարժ, ասես տեղում մեխված և լայն բացված աչքերով նայում են Ստեմպենյուին ու նրա ջութակին: Ոչ մեկը չի շարժվում, աչք չի

---

<sup>1</sup> Հալա — հրեական ոլործուն սպիտակ հաց:

թարթում: Իսկ սրտիկը տրոփում է սեղմիրանի տակ, և հաճախ հոգու խորքից դուրս է թռչում մի թաքուն հառաչանք...

## II

### Ստեմպենյուն և իր նվագախումբը

Դժվար է պատկերացնել այն ոգևորությունը, այն աղմկալի հրճվանքը, որ համակում էր բնակիչներին Ստեմպենյուի և նրա խմբի հայտնվելու ժամանակ:

— Տեսե՛ք, տեսե՛ք, ջրաղացի հետևից քառաձին հրեներևաց, կա-չկա փեսայի հարագատներն են: Ի՞նչ էք կարծում:

— Չէ, իմ կարծիքով, երաժիշտներն են: Դա Ստեմպենյուն է գալիս իր նվագախմբով:

— Ո՛վ, Ստեմպենյո՞ւն: Ստեմպենյուն արդեն այստե՞ղ է: Ա՛յ թե փառավոր հարսանիք է անելու Խայիմ-Բենցիոն Գլուկը, չիբան դուրս գա դրա կողին հա՛:

Շառագույնը խաղում է ջահել կանանց այտերին: Աղջիկները շտապում են սանրելու և հյուսելու իրենց երկար ծամերը: Մանչերը վարտիքները քշտած վագում են Ստեմպենյուին ընդառաջ: Նույնիսկ ընտանիքի հայրերն էլ, որ արդեն բեղ ու մորուքի տեր են, նրանք էլ չեն կարողանում թաքցնել իրենց հրճվանքի ժպիտը, նրանց մեծ բավականություն է պատճառում անվանի երաժիշտի ժամանումը Խայիմ-Բենցիոն Գլուկի տունը: Եվ ինչու չուրախանան, դա էլ հո փողով չի՞:

Այդ ընթացքում, երբ քառաձին ուղևորվում է դեպի իջևանատուն, փողոցում արդեն ասեղ գցելու տեղ չկա, բոլորն ուզում են Ստեմպենյուին ու նրա խմբին տեսնել և յուրաքանչյուրը թեկուզ մի ըռպեով կանգ է առնում փակ ֆուրգոնի մոտ:

— Տե՛ս հալա, ոնց է խցկվում,— լսվում է մի բացականչություն, և ամեն մեկը ինչպես պետքն է հրում է մյուսին, աշխատելով ընկնել առաջին շարքերը:— Տեսե՛ք, սրան մի տեսե՛ք, ոնց է արմունկները գործի դրել: Անպայման ուզում է առաջ ընկնել: Ախր ի՞նչ կա էդտեղ, որ չեք տեսել, երաժիշտներ են էլի, ինչպես բոլոր երաժիշտները...

Այսպես են գոռում մարդիկ ամեն կողմից, որը, սակայն, չի խանգարում հենց այդ գոռացողներին համառորեն հրմշտելով խցկվել երաժիշտների ֆուրգոնի մոտ:

Այդ ընթացքում եկվորները միմյանց ետևից սկսում են դուրս գալ ֆուրգոնից:

Ամենից առաջ իջնում է Կոնտրաբաս Իոկլը, որը կոնտրաբաս է նվագում. դա մի բարկացկոտ տղամարդ է, թաց քթով և ականջները բամբակ խցկած: Նրա ետևից իջնում է Կլարնետ-Լեյբուշը, հաստ շրթունքներով, քունը գլուխը միմարդ: Ապա — ոչ անհայտ բաղին Կուզիկ-Խայկլը: Ապա թուխ, զգզված, մի պարթև, ջահել տղամարդ, հսկայական կախ հոնքերով, անասելի փրչոտ, մի կատարյալ վայրենի անապատական, դա Շնեյեր-Մեյերն է՝ երկրորդ ջութակը: Նրանց ետևից դուրս են ցատկում երկու-երեք տղաներ արտասովոր այլանդակ արտաքինով՝ ուռած թշերով, կուլ գնացած աչքերով և թիակների նման խոշոր, ահարկու ատամներով, դրանք էլ աշակերտներն են: Առայժմ նրանք ձրի են նվագում, բայց ժամանակի ընթացքում նրանք էլ կդառնան իսկական երաժիշտներ: Եվ, վերջապես, բոլորից հետո ծուռտիկ ոտներով դուրս է գլորվում Մեխյան իր թմբուկով, որը իր չափերով բավականին գերազանցում է տիրոջը: Մեխյանին նոր է սկսել մորուք

ծել, շիկավուն մորուք, և այդ դեմքի միայն մի կողմում. նրա մյուս կիսադեմը՝ ձախը, լերկ է ինչպես անապատ:

Երեխաներն էլ նույնպես, հասկանալի է, ձեռնպահ չեն այս ամենից երբ ավան է ժամանում Ստեմպենյուն իր նվագախմբով: Մեկ էլ տեսար, մի ինչ-որ չարաձճի, աննկատելի խցկվելով երաժիշտների արանքը ինչքան ուժ ունի, բռունցքով հարվածում է թմբուկին կամ քաշում կոնտրաբասի հաստ լարը: Գազազած Կոնտրաբաս-Իռկլը տեղնուտեղը անխնա հասցնում է տղայի ծոծրակին:

Այդ միջոցին փողոցում աճում է իրարանցումը: Ահա հանդիսավորությամբ ժամանեց նաև ինքը՝ փեսացուն, իսկ նրա ետևից մի քանի տասնյակ պատանիներ, որոնք գնացել էին գյուղից դուրս, ջրաղացների մոտ դիմավորելու փեսային: Մի խոսքով, Յամպոլ ավանում ուրախությո՜ւն է, ցնծությո՜ւն...

Եվ ոչ միայն Յամպոլում, այլև Ստրիչում և մյուս բոլոր տեղերում, որոնք արժանանում են Ստեմպենյուի այցելությունների: Նույն բանն է տեղի ունենում և Մազեպովկայում, ուր Ստեմպենյուն հասստատվել է ընդմիջտ... Փառաբանված երաժիշտը ամենուր առաջ է բերում հիացմունքի փոթորիկ:

### III

#### Ստեմպենյուի նախապատրաստությունը

Այս ի՞նչ հրճվանք է Մազեպովկայում:

Ռեբ Խայիմ-Բենցիոն Գլուկը պսակում է կրտսեր աղջկան՝ Ռիվկելեին: Ուրեմն, ինչո՞ւ չուրախանալ: Այդպիսի մի հարսանիքի արժե ներկա գտնվել, չէ՞ որ ինչ էլ լինի, Գլուկը տեղի առաջին հարուստն է: Շա՛տ ժողովուրդ կլինի, ոմանք կգան բարի կամեցողությամբ, ոմանք նախանձից դրդված, ոմանք քաղաքավարությունից, ոմանք էլ կգան հանուն այն բանի, որ փայլեն կնոջ նոր ականջօղերով կամ մանյակով... Բայց մարդկանց մեծ մասամբ հրապուրում է Ստեմպենյուն:

Մի խոսքով, ժողովուրդ է որ գալիս է, համարյա ամբողջ Մազեպովկան գալիս է ուրախանալու Խայիմ-Բենցիոնի դստեր՝ Ռիվկելեի հարսանիքին: Իսկ Աիզիկ-Նաֆտոլյայի, նրա կնոջ ու զավակների մասին խոսելն էլ ավելորդ է, որովհետև, նախ և առաջ՝ Աիզիկ-Նաֆտոլյան Խայիմ-Բենցիոնի հետ կապված է թե ջրաղացի և թե խանութի գործերով, այսպես ասած՝ կոմպանյոններ են, և երկրորդ՝ միմյանց ազգական են գալիս, ճիշտ է, չնայած բավականին հեռավոր: Նրա կինը Խայիմ-Բենցիոնի կնոջ հեռավոր ազգականն է մորական կողմից: Այսպես ասած՝ նապաստակի ջրի, ջրի ջուրը:

Եվ զարմանալի չէ, որ Աիզիկ-Նաֆտոլյայի կինը՝ Դվոյա-Մալկան, ինչպես վայել է ազգականուհուն, ամենից շատ է ասենք, անհանգստանում, դեսուդեն ընկնում: Ճիշտը որ նա ոչինչ էլ չի անում, բայց տասը մարդու չափ ճչում է, հրամայում, կարգադրում, ձեռքերը թափահարում...

Դվոյա-Մալկայի հարսը՝ գեղեցկուհի Ռոխելեն, կանգնած է հարսի մոտ, իշխանուհու նման զուգված-զարդարված: Նրա խոշոր, կապույտ աչքերը շափաղ են տալիս ինչպես ադամանդներ, այտերը շիկնել են նոր բացված վարդերի նման: Նա մի ձեռքով բռնել է հարսի մազերը, որոնք նախքան քողը գցելը, կանայք լալով ու ծիսական երգեր ասելով քանդել էին, իսկ մյուս ձեռքով

շոյում է իր ձյունասպիտակ պարանոցը, բնավ չնկատելով, որ երկու սև, փայլատակող աչքեր սևեռուն նայում են իրեն:

Հարսանիքի առթիվ վարձված ծառաները՝ տղամարդիկ ու կանայք, վազվզում են խաշվածների նման: Խնամիները գոչում են.

— Վա՛յ, աստված իմ: Հարսին «բազմեցնելու» ժամանակն է: Հերիք է տանջեք խեղճ երեխեքին: Այս ամառվա երկար օրով բերանները մի փշրանք էլ չեն դրել<sup>2</sup>:

Չորսբոլորը գոչում են. «Ժամանա՛կն է, ժամանա՛կն է»: Բայց դա բնավ դրությունը չի փոխում:

Աիգիկ-Նաֆտոյան, թավշե գդակը գլխին, ձեռքերը մեջքին դրած ետ ու առաջ է քայլում, իսկ Դվոյա-Մալկան կոկորդով մեկ բռռում է: Ինչպես փեսայի, այնպես էլ հարսի բարեկամները ձեռքները տարածած սլանում են սենյակով, որպես թե սրտները գնում է գործ անելու համար, բայց չգիտեն ինչից սկսեն:

— Ինչո՞ւ ոչինչ չեն անում,— հարցնում են փեսայի հարազատները:

— Ինչո՞ւ գործի չեն կաշում,— վրդովվում են հարսնացուի հարազատները:

— Ո՞վ է տեսել էսպես բան:— Ճշում են փեսայի հարազատները,— սոված կոտորեցին երեխեքին:

— Ո՞վ է լսել էսպես բան:— Դժգոհում են հարսնացուի հարազատները,— երեխեքին սոված տանջեցին:

— Թե ինչ են էսքան վազվզում:

— Թե ինչ են անօգուտ դեսուդեն ընկնում:

— Բոլորը վազում են, բոլորը իրար են անցել, բայց գործը տեղից չի շարժվում: Սա ի՞նչ կարգ է:

— Վազվզում են, աղմկում, իսկ երբ բանը հասնում է գործ անելուն, ո՛չ ոք չկա:

— Վե՛րջ տվեք ասեկոսեին: Գործի անցեք: Հերիք է աննպատակ դեսուդեն վազեք:

— Որտե՞ղ են երաժիշտները,— հարցնում են փեսայի հարազատները:

— Երաժիշտները որտե՞ղ են,— կրկնում են հարսի հարազատները:

Երաժիշտները զբաղված են իրենց գործով, շփում են աղեղները, լարում գործիքները: Կոնտրաբաս-Իոկլը քաշում է մի տղայի ականջից՝ քթի տակ մոլտալով. «Ա՛յ դու փուչ անպիտան: Ես քեզ ցույց կտամ, թե լարը ձիգ տալը ոնց կլինի»: Մեխչա-դիոյչին բազմախորհուրդ քորում է դեմքի այն մասը, ուր հազիվ նշմարվում է վտիտ բուսականությունը: Բադլան Խայկլը զրուցում է ինչ-որ ծանոթ մեղամեղի<sup>3</sup> հետ, երկու մատով վերցնում նրանից մի պտղունց բոնոթի և ինչպես ծակ տոպրակից՝ սփռում իր կատակներն ու սրախտությունները: Մյուս նվագողները՝ թիականման աստամներով, ուռած դեմքերով տղաները, երաժիշտներին հատուկ իրենց լեզվով ինչ-որ կարևոր գործի շուրջը քչփչում են Ստեմպենյուի հետ:

<sup>2</sup> Վաղեմի սովորության համաձայն հարսն ու փեսան պսակից առաջ պետք է մի ամբողջ օր ոչինչ չուտեին:

<sup>3</sup> Հրեական հոգևոր դպրոցի ուսուցիչ:

— Ո՞վ է այն աղջնակը, որ կանգնած է հարսի մոտ,— հարցնում է Ստեմպենյուն, հայացքով ցույց տալով գեղեցկուհի Ռոխելիին:— Գնա, Ռախմիել, — դիմում է նա ուռած դեմքով երաժիշտ տղաներից մեկին,— գնա հոտմտա, թե ով է նա: Դե չո՛ւստ, չո՛ւստ:

Ռախմիելը չի ստիպում, իրեն երկար սպասել:

— Նա աղջնակ չէ,— զեկուցում է նա,— արդեն կնիկ է: Աիզիկ-Նաֆտոլյայի հարսն է, սկվիրցի է: Իսկ ա՛յ, նա, որ պոլթի է տալիս թավշե գրակով,— տեսնո՞ւմ եք,— դա էլ նրա մարդն է:

— Ա՛յ փչանաս դու, Ռախմիել, փչանաս,— գոչում է Ստեմպենյուն, որի տրամադրությունը լավ էր:— Ինչպես շուտ այդ ամենն իմացար: Էյ, իսկապես, շատ սիրունն է: Տե՛ս է, ոնց է աչքերը ֆոֆոացնում:

— Եթե ցանկանում եք,— ասում է ուռած Ռախմիելը,— կգնամ նրա հետ մի քիչ լեզվիս կտամ:

— Գետնի տակն անցնես, Ռախմիել: Քեզ ո՞վ է խնդրում, որ միջևորդ դառնաս: Ես ինքս կգնամ լեզվիս կտամ:

— Ապա ցուլացրու սև աչքերդ ջութակի վրայից,— անսպասելի կտրում է նրանց խոսքը Շնեյեր-Մեյերը:— Քանդի՛ր մարդկանց ջղերը քո ջութակով:

Ստեմպենյուն վերցնում է ջութակը և աչքով անելով, նշան տալիս նվագախմբին: Երաժիշտները լարում են իրենց գործիքները:

#### IV

### Ստեմպենյուի ջութակը

Վերջապես կամոքն աստծո հարսին նստեցրին բարձր օթոցին:

Ա՛յ, զգում եմ, որ գրիչս անգոր է նկարագրելու, թե Ստեմպենյուն ինչպես «բազմեցրեց» հարսին: Դա սովորական նվագ չէր, ջութակի դատարկ տզվզոց, այլ իսկական սրբագործություն՝ վեհագույն զգացմունքներով և ազնվությամբ թափանցված: Ստեմպենյուն կանգնեց հարսի առջև և դիմեց նրան ջութակի լեզվով, երկար, սրտառուչ, փայլուն լեզվով պատմելով աղջկական ազատ կյանքի մասին, որ ուներ և նրան սպասող կնոջ ծանր մռայլ ճակատագրի մասին: Եվս մի քանի րոպե, և վե՛րջ աղջկական ազատությանը: Գլխին կզցեն քողը, նրա տակ կծածկվեն երկար, շքեղ մազերը... Ներող եղիր և հավիտյանս մնաս բարո՛վ, ուրախ պատանեկություն: Քեզ սպասում է կնոջ դառն ճակատագիրը: Օ՛հ, որքան տխուր է, ներիր ինձ, տեր իմ աստված:

Այդպես էր ասում Ստեմպենյուի ջութակը: Այն ո՞ր կինն էր, որ չէր հասկանում Ստեմպենյուի գրույցի իմաստը, հասկանում առանց խոսքերի, և ամբողջ սրտով զգալով, տաք արցունք էին թափում:

«Մի՞ թե վաղուց էր, որ ես ինքս էլ մի այդպիսի նորահարս էի, մտքի մեջ ընկած խորհում էր երիտասարդ մի կին, կուլ տալով արցունքները: Վաղո՞ւց էր, որ ես էլ հենց այդպես նստած էի հերարձակ և մտածում էի, որ բարի հրեշտակները ճախրում են գլխիս վերևում, որ սահման չկա իմ երջանկությանը: Իսկ հիմա... Ավա՛ղ, հիմա...»

— Տե՛ր աստված, օրհնանքը անպակաս լինի,— աղոթքի նման շնջում էր մի տուն լիքը հասած աղջիկների մայր տարեց մի կին,— օրհնանքը անպակաս լինի, տեր աստված, մի լավ բախտի արժանացրու մեծ աղջկանս: Բայց նա թող ինձնից բախտավոր լինի և թող ապրի իր մարդու հետ ոչ այնպես, ինչպես ես... Ների՛ր, տեր իմ աստված, հանցավոր մտքերս...

Այսպիսի խոհեր էին հուզում կանանց սրտերը, իսկ Ստեմպենյուն շարունակում է նվագել, նրա ջութակը շարունակում է խոսել, շարունակում է երգել թախճանուշ եղանակը, նրան ձայնակցում է ամբողջ խումբը: Ամեն ինչ քարացել է, ոչ ոք չի շարժվում: Լռությո՛ւն: Բոլորը, բոլորը ուզում են լսել Ստեմպենյուին: Կանայք լռել են, տղամարդիկ մտքի մեջ ընկել, ջահել տղաներն ու աղջիկները բարձրացել են աթոռների ու նստարանների վրա, բոլորը, բոլորը ուզում են լսել Ստեմպենյուին:

Սը՛ս, լռեցեք, սուս արեք:

Ստեմպենյուն նվագում է և սիրտդ հալչում է, ինչպես մեղրամում, միայն լսում ես ինչպես է տրոփում՝ տը՛կ, տը՛կ, տը՛կ... Միայն տեսնում ես նրա ձեռքը, որ թռչում է վեր ու վար, վեր ու վար... Եվ ծավալվում են կախարդիչ հնչյունները, հոսում են դյութական մեղեդիները, թախճալուր, տխրանուշ, որ քանդում են սիրտդ, տակնուվրա անում հոգիդ: Ամբոխը քարացել է, շունչը պահել, սրտները լցվում են ավետափ, փափկանում, արցունքներ են երևում աչքերում: Մարդիկ հառաչում են, մարդիկ տնքում են, մարդիկ լալիս... Իսկ Ստեմպենյուն: Որտե՞ղ է Ստեմպենյուն: Չկա: Անհետացել է Ստեմպենյուն, անհետացել է և նրա ջութակը, միայն հնչյունները, քաղցր հնչյուններն են, որ ողողում են սենյակը...

Իսկ գեղեցկուհի Ռոխելեն, որ նախքան այդ երբեք չէր տեսել Ստեմպենյուին, Ռոխելեն, որ գիտեր նրա գոյության մասին, բայց կյանքում երբեք ներկա չէր եղել նրա չքնաղնվագածությանը, լսում է նրա կախարդական հնչյունները, դյութական մեղեդիները և չի հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ. այդ հնչյունները և՛ տանջում են, և՛ գուրգուրում: Ինչ է այդ: Ռոխելեն նայում է այնտեղ, որտեղից հորդում են այդ քաղցրալուր ձայները, և տեսնում է մի գույգ հրաշագեղ, բոցավառ, սևորակ աչքեր, որ շեշտակի նայում են իրեն, նրանք խոցում են իրեն, ինչպես սրած նետեր: Այդ հրաշալի, այդ բոցավառ աչքերը նայում են իրեն, թարթում են իրեն և խոսում իրեն՝ անբարբառ: Ռոխելեն ուզում է շրջել հայացքը և չի կարողանում:

«Ահա թե ինչպիսի՛ն է Ստեմպենյուն», մտածում է Ռոխելեն:

Այդ ընթացքում հարսի «բազմելու» ծեսը ավարտվում է, փեսայի ու հարսի հարազատները իրար են խառնվում. ջահելներին պսակի տանելու ժամանակն է:

— Ո՞ւր կորան մումերը,— հարցնում են փեսայի հարազատները:

— Մումերը ո՞ւր կորան,— հարցնում են հարսի հարազատները:

Նորից աղմուկ, նորից իրարանցում: Բոլորը անհանգստանում են, վազում, անհայտ է թե ուր, հրմշտում, միմյանց ոտքի կոշտուկը տրոքում, պատռում ինչ-որ մեկի շրջագետտի փեշը, քրտնում, ամբողջ ուժով հայիռում մատուցողներին, սրանք էլ իրենց հերթին՝ նորապսակների հարազատներին, իսկ սրանք էլ իրենց մեջ են միմյանց օձիքից ձավար հավաքում: Մի խոսքով, ինչքա՛ն ասես զվարճալի է:

Պսակից հետո Ստեմպենյուն օգտվելով խառնաշփոթությունից, թողեց նվագախումբը: Ահա նա արդեն կանանց ամբոխի մեջ է՝ գեղեցկուհի Ռոխելեի, Աիզիկ-Նաֆտոլյայի հարսի մոտ: Նա ժպտալով խոսում է Ռոխելեի հետ շփում իր փարթամ մազերը: Ռոխելեն թեթևակի շիկնել է և

հայացքը խոնարհած, նրա տասը հարցին հազիվ մի պատասխան է տալիս: Այդ էր պակաս, որ ոչ այս, ոչ այն, գրույց քոքի երաժշտի հետ, այն էլ ուրիշների ներկայությամբ...

## V

### Ստեմպենյուի առաջին հանդիպումը Ռոխելեին

Ստեմպենյուի մասին ինչեր ասես, որ չեն պատմում: Լուրեր են պտտվում, որպես թե նա ծանոթ է կախարդների ու վհուկների և ուրիշ պիղծ ոգիների հետ, և որպես թե նրա համար հեշ քան է հարսնացուին փեսացուից խլելը և որպես թե նա մի այնպիսի կախարդանք գիտե, որ հերիք է թաք մի անգամ նայի մի որևէ աղջկա, որ աղջկա սրտում սեր բռնկվի:

Շատ մայրեր գիտեն Ստեմպենյուի կախարդական գործությունը, և դրա համար իրենց հարսնացու աղջիկներին աչքի լույսի նման պահպանում են: Երբ մի որևէ աղջիկ խոսում է Ստեմպենյուի հետ, նրա կողքին անմիջապես հայտնվում է այդ աղջկա ավագ քույրը, մորաքույրը, կամ հորաքույրը, կամ թեկուզ մի որևէ ամուսնացած կողմնակի կին... Ճիշտ է, Ստեմպենյուի համար դրանում հաճելի բան չկա, բայց թե մեծ փորձանք չէ: Նրա փառքը դրանից չի պակասի: Նման ասեկոսեն ի՞նչ կապ ունի երաժշտության հետ: Բոլորն էլ գիտեն, որ Ստեմպենյուն գլխից ձեռք քաշած հանդուգնի մեկն է: Է՛հ, ինչ անենք: Ստեմպենյուին հո նրա համար չէ՞ն հարսանիք կանչում, որ ազգակցական կապեր հաստատեն:

Օրհնյա՛լ լինի ձեր ճակատագիրը, հրեա կանայք, և թող երկինքն օրհնի ձեր ամուսիններին, ձեզ շնորհած հրաշալի պարզևի՝ ազատության համար: Հե՛յ վախ աղքատ աղջիկներին, որ տանջվում են գերության շղթաներում: Նրանք չեն ազատվում աչալուրջ հսկողությունից այնքան ժամանակ, մինչև նրանց գլխին չեն գցում հարսանեկան քողը: Միայն այդ ժամանակ է աղջիկը դառնում կին, ազատ, երջանիկ կին:

Ռոխելեն ամուսնացած լինելով, Ստեմպենյուից խուսափելու ոչ մի պատճառ չունեք, երբ նա ջութակը ձեռքին, ժպիտը շրթունքներին մոտեցավ իրեն: Ինչի՞ց վախենար: Ումի՞ց թաքնվեր: Նրա սկեսրայրը՝ Աիզիկ Նաֆտոյան, ամբողջովին զբաղված է հարսանեկան գործերով, ձեռքերը մեջքին դրած ման է գալիս, հսկում ծառաներին, որպեսզի արագ շարժվեն: Իսկ սկեսուրը՝ Դվոյա-Մալկան, այնպես է քրտնամոխել, որ եթե կեղծամբ գլխից հանեն, չի իմանա: Ռոխելեի մոտով անցնելիս, ճիշտ է, նա մի պահ կանգ առավ նայելու, թե Ստեմպենյուն այդ ի՞նչ բանի էր իր հարսի հետ, բայց իսկույն ևեթ մտածեց.

«Հիմարություն է: Դատարկ խոսակցություն: Քոռ կոպեկ էլ չարժե»:

Եվ շարունակեց վազել, որ ծառաներին կարգադրի, շտապեցնի:

Աիզիկ-Նաֆտոյան և իր կինը կառավարում էին մեծ վարպետությամբ: Ծառաները սլանում էին խաշվածների նման: Հարսի և փեսայի հարազատները, ինչպես կարգն է, բարբաջում էին առանց լռելու: Հյուրերն էլ ձեռքները լվալով<sup>4</sup>, շտապում էին նստոտել երկար նստարաններին երկար սեղանների շուրջը տեղ գրավել, որոնց վրա ուղղաձիգ շարքերով շարված էին հենց նոր թխած կարկանդակները: Հանկարծ տազնապ բարձրացավ. տակառի ջուրը հատել էր:

— Ջուր որտեղի՞ց ճարենք,— հարցնում են փեսայի հարազատները:

<sup>4</sup> Ուտելուց առաջ ձեռքերը լվանալ. ձեռք, որ գալիս է հրեական կրոնից:

— Որտեղի՞ց ջուր ճարենք,— կրկնում են հարսի հարազատները:

— Ջո՛ւր,— ճշում է Դվոսյա-Մալկան՝ թեթևակի խոստում:

— Ջո՛ւր, ջո՛ւր,— ձայնակցում է նրան Աիզիկ-Նաֆտոլյան՝ հույժ զբաղված մարդու տեսք առնելով և սերթուկի ետևի փեշերն իրար տալով:

Ստեպանյուն օգտվում է այդ նոր իրարանցումից, որ էլի մի քանի խոսք փոխանակի Ռոխելեի հետ: Ռոխելեի դեմքը մտածկոտ էր, կենտրոնացած: Խոշոր, կապուտակ աչքերը Ստեպանյուի մոտով նայում էին ինչ-որ հեռուն: Իսկ լսողությունը որսում էր նրա ամեն մի բառը:

Իսկ խոսելու մեջ վարպետ էր: Ստեպանյուն: Լա՛վ էր խոսում գրողի տարածը: Նա խոսակցին խճճում էր բառերի նուրբ ոստայնով և որպես փորձված գայթակղիչ, անքթիթ նայում նրա աչքերին: Ո՛չ, աչքերին չէր նայում, սրտին էր նայում, հենց սրտին:

Ստեպանյուն խոսում էր, իսկ Ռոխելեն՝ լսում: Մենյակում մի այնպիսի աղմուկ էր տիրում, որ կողմնակի մարդկանց ականջին միայն հատուկենտ բառեր կարող էին հասնել:

— Դա ձեր Մոյշե-Մե՞նդլն է,— հարցրեց Ստեպանյուն հայացքով ցույց տալով մի երիտասարդ տղամարդու, որ բռնել էր խոսակցի սերթուկի մերակից և ճգնելով ինչ-որ բանում նրան համոզել, կատաղի քաշքշում էր:

— Այո, իմ Մոյշե-Մենդլն է,— պատասխանեց Ռոխելեն և ասես վիրավորվելով, քաշվեց մի անկյուն:

Ռոխելեն իսկապես որ իրեն վիրավորված զգաց և այդ իսկ բռնակից արժանի չհամարեց անգամ մի հայացք նետել այն անկյունը, ուր նստած էին երաժիշտները: Ստեպանյուն հետո շատ պտտվեց նրա շուրջը: Նա, այդ Ստեպանյուն անտանելի էր զգվանք պատճառելու աստիճանի՝ իր հանդուգն շարժումներով և անպատկառ հայացքով: «Ֆի՛, ամոթ՛ ու խայտառակություն: Մի օրինավոր կնոջ համար նրա մոտ կանգնելն անգամ անվայել է», մտածում էր Ռոխելեն, նորից մոտենալով հարսին: Նա արդեն պատրաստ էր մոռացության տալու Ստեպանյուի գոյությունն անգամ:

Բայց ի՛նչ է այս: Ինչու հանկարծ բոլորը սթափվեցին: Այդ Ստեպանյուն է, որ խմբի նվագակցությամբ նորից սկսեց «Տրտմությունը»: Իսկույն ամեն ինչ լռեց. ոչ ձայն, ոչ շշուկ: Մտախոհ կանգնած են տղամարդիկ, սակվեցին կանայք, տղաներն ու աղջիկները բարձրանում են աթոռներին նստարաններին: Բոլորն ուզում են լսել Ստեպանյուին:

Ալզիկ-Նաֆտոլյան գլուխը մի կողմ թեքած, գիտակի տեսք առած, ունկնդրում է ջութակի երգին: Դվոսյա-Մալկան ավսեն ձեռքին սառել մնացել է տեղում կանգնած: Նույնիսկ ծառաները՝ տղամարդիկ սերթուկների փեշերը վեր խրած և արախիները՝ շրջագգեստները քշտած, քարացել են սենյակի մեջտեղում... Իսկ Ստեպանյուն... Ուր է Ստեպանյուն: Չկա՛... Ոչ ոք նրան չի տեսնում, ոչ ոք չի նկատում նրա ջութակը, նրանք միայն լսում են աստվածային հնչյունները, որոնք ողողում են սենյակը:

Իսկ գեղեցկուհի Ռոխելեն, որ մինչ այդ երբեք չէր լսել Ստեպանյուին, արբենում է զարմանահրաշ հնչյուններով և չի հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ, հնչյուններն ասես գուրգուրում են նրան, սիրտը լցված է ավեափ... Նա նայում է այնտեղ, որտեղից հոսում են այդ հնչյունները և տեսնում է հրաշագեղ սև աչքերը, որոնք համառորեն նայում են իրեն, սրած նետերի նման թափանցում ներս: Այդ հրաշագեղ, հրացայտ, սևորակ աչքերի հայացքը ուղղված է իրեն, այն

վաղաքշում է, խոսում ինչ-որ անբարբառ... Ռոխելեն խոնարհում է հայացքը: Նա նայում է շուրջը և տեսնում նույն սևորակ, հրացայտ աչքերը...

## VI

### Հարսանեկան խնջույքից հետո

Հարսանեկան ընթրիքը վաղուց վերջացել է: Արդեն թնդացել են բոլոր «տուշերը», արդեն նորապսակներին մատուցել են բոլոր նվերները, հարսը բոլոր հյուրերի հետ արդեն պարել վերջացրել է «կուսության պարը», բայց ուրախությունը դեռ գագաթնակետին է: Հյուրերից յուրաքանչյուրը մի որևէ պար է պատվիրում երաժեշտներին: Սաագործ Իոնսյուն պարում է «Կազաչկա», նրան իր հսկա փորով շորորալեն ընդառաջ է գնում հարսի մայրը: Հասարակությունը ափ է տալիս, իսկ հարգարժան մսագործը իսկի չի էլ նկատում, թե կնոջ հետ է պարում, թափ է առնում ու ճարպկորեն ծնկապար տալիս: Հարսի մայրը կողքեկողք ընկնելով, ոտքերով դռնում է և լայն ժպտում ռեբ Իոնսյուն, այդ ժպիտը լողում է նրա լուսնանման կլոր դեմքին:

Խրախճանքը բորբոքվում է: Պարող տղամարդիկ, թող վիրավորական չթվա, արդեն պարում են ներքնագգեստով: Ահա Աիգիկ-Նաֆտոյան նույնպես կանգնած է առանց սերթուկի՝ երևան հանելով սպիտակ շապկի երկար թևքերը: Հեշտ չէր նրա համառությունը կոտրելը և համոզելը, որ սերթուկը հանի: Ինչ-որ մեկը նրա գլուխն է խոթում ուրիշի գդակը և քաշում մինչև աչքերը: Բոլորը նայում են նրան զինուց մշուշված հայացքով և հռհռում: Նույնիսկ նրա հարազատ որդին, Մոյշե-Մենդլը (Ռոխելեի ամուսինը), նա էլ է բռնել հոր վերնաշապկի սպիտակ թևքերից ու համառորեն քաշում է պարի մեջ:

— Ոտներդ մի՛ խնայիր,— գոչում է Մոյշե-Մենդլը հորը, թռչելով համարյա մինչև առաստաղը:

Երաժիշտները նվագում են արդեն առանց Ստեմպենյուի: Նրանք ջանում են ամբողջ ուժով: Նվագախումբը այժմ դեկավարում է ուռած թշերով, թիականման ատամներով երաժիշտ տղաներից մեկը: Սև, քրջոտ Շնեյեր-Մեյերը՝ երկրորդ ջութակը, ննջում է: Կոնտրաբաս Բոկլը՝ խոնկում: Իսկ ջահել երաժիշտները կրակ են կտրել: Եվ ամենից շատ՝ Մեխչա-դիոլչին: Նա կատաղի հարվածում է: Նրա շիկակարմիր գլուխը համարյա չի երևում, երևում են միայն ուսերը, որ վերուվար են լինում և ծուտիկ ոտները, որ դադար չունեն: Իսկ Ստեմպենյու՛ն: Նա ջահել կանանց արանքներով ետ ու առաջ է գնում, կամաց-կամաց մոտենալով Ռոխելեին:

— Սկեսուրս, տուն չգնա՞նք,— դիմեց Ռոխելեն Դվոսյա-Մալկային, որ աչքերը չռած նայում էր Աիգիկ-Նաֆտոյային, նրա՝ բոլորին ի տես ցուցադրված սպիտակ շապկի թևքերին և գլխարկին, որ խոթել էին գլուխը:

— Դե, ինչ, գնանք, աղջիկս, գնանք: Վաղուց ժամանակն է: Վաղը շուկայի օր է, գոնե մի քիչ պետք է քնել: Մի տես է՛, պարը ոսկորներն է ընկել:

Եվ Դվոսյա-Մալկան հարսի հետ գնում է:

Մութ կապույտ երկնքի մի ծայրը սկսել էր թեթևակի պայծառանալ. լուսաբացը մոտ էր: Կանչեց մի աքաղաղ տասնյակ ուրիշներ ողջույնի ծուղ-բու-դուով ձայնակցեցին նրան: Ինչ-որ տեղ, հեռվում մի շուն հաչեց: Բոլոր խրճիթները դեռևս ընկղմված են խոր քնի մեջ: Միայն մսագործ Գերշ-Բերի տանը

ճրագ կա. նա լուսաբացից մեկ ժամ առաջ արթնանում է, որպեսզի վաղորդյան անդորրում խորասուզվի սուրբ գրոց ընթերցանության մեջ...

— Ի՞նչ կասես, Ռոխելե, Գնեսիի աղջկա մասին: Աստված իմ, ո՛նց էր ջարդուփշուր լինում: Դե ո՞նց է, նա քեզ դուր եկա՞վ:

Իր մտքերով տարված, Ռոխելեն չպատասխանեց: Ո՞վ գիտե, ում մասին էր մտածում նա հիմա:

— Սկեսուրս,— անսպասելի ասաց նա,— ես ախր այսօր առաջին անգամ լսեցի Ստեմպենյուին:

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, զավակս: Ո՛նց թե առաջին անգամ: Իսկ մեր էն հարուստի, ոեք Լեյբեցի տանը չե՞ս լսել: Իսկ Նեխեմյե Եզնիկի: Իսկ Բենցիոնի աղջկա՝ Սառայի, վերջապես հենց իրեն՝ Յադիկի՞ տանը:

— Չեմ հիշում,— պատասխանեց Ռոխելեն:— Ես շատ էի լսել՝ Ստեմպենյու հա՛ Ստեմպենյու... բայց նրան երբեք չէի լսել:

— Դե ճիշտ է, ո՞նց պիտի հիշես, դու դեռ մի պստիկ ձագ էիր, երբ Ստեմպենյուն նվագեց Սվիրի ռեբելի աղջկա հարսանիքին: Ա՛յ թե հարսանիք էր, հա: Իմ բոլոր բարեկամներին ու մտերիմներին հենց էր տեսակ հարսանիք կցանկանում: Կարո՞ղ ես երևակայել, ես այն ժամանակ Իոսելեով հղի էի... Դա ո՞ր ամսին էր... Երևի վեցերորդ... Է՛, չէ, ութերորդ... Էդ ո՞ւր, Ռոխելե: Մեր տունը հրես, իսկ դու ուղիղ՝ Գնեսիենց: Ա՛յ քեզ օյին, հա՛, հա՛, հա՛:

— Սա ի՞նչ բան էր,— պատասխանեց Ռոխելեն՝ շուրջը նայելով:— Իսկապես որ ծիծաղելի է, հա՛, հա՛, հա՛:

Հարս ու կեսուր քրքջալով մտան տուն: Հարկավոր էր գոնե մի քիչ քնել, առավոտյան Մազեպովկայում մեծ շուկա է լինելու, ի՛նչ շուկա, մի իսկական տոնավաճառ:

## VII

### Ռոխելեի քունը չի տանում

Ա՛յ քեզ փորձանք, Ռոխելեն քնել չի կարողանում: Մի կողքից մյուսն է շրջվում, վերմակը մերթ զգոմ է, մերթ նորից քաշում վրան... Քունը փախել է: Որքան էլ ցանկանում է Ստեմպենյուի մասին չմտածել, չի հաջողվում, նրա կերպարանքը, աստված գիտի թե ինչու և ինչի համար, համառորեն կանգնում է նրա հայացքի առջև: Նա ամուր, շատ ամուր փակում է կուպերը, բայց նորից տեսնում է Ստեմպենյուին, տեսնում նրա սև, հրացայտ աչքերը, որոնք շեշտակի նայում են Ռոխելեին ու կանչում, գրավում իրեն մոտ:

— Ա՛խ, նրա իզն ու թոզը վերանա,— դժգոհ ասում է նա,— գոնե Մոյշե-Մենդլը գար:

Նա բացում է աչքերը և նորից տեսնում է Ստեմպենյուին իր ջութակի հետ: Նրան թվում է, դեռ լսում է նրա կախարդական հնչյունները:

---

<sup>5</sup> Յադիկ (արդար) կամ ռեբե (գիտնական) խասիդների հոգևոր առաջնորդը (եբրայական կրոնա-միստիկական հոսանք):

— Ինչպե՞ս էր նվագում: Ա՛խ, ինչպե՞ս էր նվագում, իզուր չեն նրա մասին այնպիսի հրաշքներ պատմում...

Ռոխելեն հիշում է Ստեֆանյուի պատմությունները, որ լսել է ընկերուհիներից դեռ մանուկ օրերում, երբ ապրում էր Սկվիրում և գրել կարդալ էր սովորում «օրհորդաց վարժապետի»՝ Մոսլ Շպրայզի մոտ: Եվ որքա՛ն բան էր լսել Ստեֆանյուի մասին նա իր ընկերուհիներից: Պատմում էին օրինակ, թե ինչպես մեկ անգամ Ստեֆանյուն նշանած աղջկան խլում է փեսացուից, և թե ինչպես հարսնացուն չտանելով խայտառակությունը, մահանում է, և նրան պսակում են արդեն մահացած, սև դիակառքի մեջ... Հիշում էր հետո, թե ինչպես Ստեֆանյուն վրեժ է լուծում մի աղջկանից, որը նրան անվանել էր շառլատան... Այն մասին, թե ինչպես մեկ անգամ, մի հարուստ կալվածատեր կոմսի հարսանքատանը նվագելիս, կոմսի աղջիկը, հազվագյուտ գեղեցկության մի աղջիկ, սիրահարվում է ջութակահարին և հայտարարում. «Թեկուզ մեռնեմ էլ, բայց Ստեֆանյուն իմը պիտի լինի»:

Լսելով այդ խոսքերը, կոմսը իր մոտ է կանչում Ստեֆանյուին և սկզբում սպառնալիքներով, իսկ հետո խաթորով, սկսում է համոզել, որպեսզի քրիստոնեություն ընդունի և ամուսնանա իր պանի դստեր հետ՝ խոստանալով, որպես օժիտ երեք գյուղ: Բայց Ստեֆանյուն նրան ֆրանսերեն պատասխանում է (Ստեֆանյուն, ինչ խոսք, գիտեր և՛ գերմաներեն, և՛ ֆրանսերեն), որ իր տասանոցը չի փոխի օտարի ոսկու լեռների հետ: Այդ ժամանակից Ստեֆանյուն քարեպաշտ հրեաների մեջ մեծ պատիվ է վայելում և նույնիսկ ինքը՝ ցաղիկն էլ է նրան հարգում: Կոմսի աղջիկը լսելով Ստեֆանյուի այդպիսի պատասխանը, նետում է իրեն գետը...

Եվ նման շատ ու շատ արտառոց բաներ էին պատմել ընկերուհիները Ռոխելելին, որ լսելն անգամ սուկալի էր:

Ռոխելեն հիշում է նաև ընկերուհիներից մեկին, որը հավատացնում էր, որ Ստեֆանյուն որպես թե ուներ մի ինչ-որ սրվակ՝ «սիրադեղով» լի: «Անհեթեթություն՝ նա», մտածում է Ռոխելեն հիշողության մեջ վերականգնելով բոլոր այդ պատմությունները: Մի գրոշ անգամ չէի տա ես այդ խմիչքին և մի այդպիսի, թող ներվի ասել, սիրուն: Իմ Մոյշե-Մենդլը առանց այդպիսի սիրադեղի էլ սիրում է ինձ... Իսկ ես՝ նրա՞ն: Իսկ ես՝ Մոյշե-Մենդլի՞ն...

Ռոխելեն շրջվեց, դեմքը արեց պատին և մտքի մեջ ընկավ... Առաջին անգամն էին այդպիսի խոհեր գալիս գլուխը, «Ա՛յ քեզ զարմանալի բան: Հիմարություն: Մատից ծծած բաներ: «Ինչ գործ ունի այստեղ՝ սիրում եմ, չեմ սիրում»: Համենայն դեպս, չեմ ատում...»:

Եվ իսկապես, ինչ բանի համար չսիրի ամուսնուն: Մայշե-Մենդլը մի ինչ-որ այլանդակի մեկը չէ, աստված փրկի ազատի: Նա ժամանակակից մարդ է, քունքերի երկար մազերը՝ պեյսիները գցում է ականջների ետևը, որպեսզի չերևան, կարդում է օրաթերթեր: Միրում է գրույցի ժամանակ փայլել մի որևէ սուր խոսքով, ջահելների շրջանում զվարճանալ... Միանգամայն կանոնավոր մի երիտասարդ: Ճիշտ է, իրեն՝ կնոջ հետ դեռևս վերաբերվում է ինչ-որ տարօրինակ, լրջորեն մի երկու խոսք չի խոսի: Մի բան կասի ու իսկույն կշրջվի, որպես թե շտապում է սինագոգ կամ թե շուկա: Գոնե մի ժամ կնոջ մոտ նստի, մի որևէ բան պատմի, մի սրտալի խոսք ասի, ինչպես սովորաբար ընդունված է. մի վայրենի, ուրիշ ոչինչ:

Բայց Ռոխելեն մի՞ թե այդ էր երագել, երբ դեռ նշանված աղջիկ էր: Այն ժամանակ նրան թվում էր, թե բոլորը նախանձում են իրեն, որ այդպիսի հրաշք փեսացու ունի: Նա հավատացած էր, որ Մոյշե-Մենդլից ավելի լավ փեսացու(որքան լավն էր նա այն ժամանակ) ամբողջ աշխարհում չէր գտնի, և որ ինքը լինելու է աշխարհի ամենաերջանիկ կինը... Իսկ հիմա: Նրա ընկերուհիները ապրում են

ուրախ-զվարթ, նրանցից մեկը ամուսնու հետ տեղափոխվել է մի մեծ քաղաք և այնտեղից հիացմունքով լի նամակներ է գրում, մյուսն արդեն իր սեփական տուն ու տեղն ունի և նույնիսկ Խանա-Միրը, որ ամուսնացել է հինգ երեխա ունեցող մի որբնայրի մարդու հետ, նա էլ է երջանիկ: Իսկ ինքը՝ Ռոխելեն: Ավա՛ դ, նա ոչինչ չունի հպարտանալու: Ամբողջ շաբաթ նստած է դուռը երեսին փակ, ասես մի թռչուն լինի վանդակում գերված: Կեր, խմիր, քնիր: Սկեսուրն ու սկեսրայրը համբերությունից հանում են իրենց անխոնջ հոգածությամբ: Գիշեր թե ցերեկ Ռոխելե՛ն հա Ռոխելե՛ն: Հապա Մոյշե-Մենդը իր սովորություններով, իր կցկտուր խոսքերով... Ինչ է ինքը՝ նրա համար... Մը՛ս... Ինչ-որ մեկը ծեծում է դուռը: Այդ երևի նա է, Մոյշե-Մենդը: Սկեսուրը գնաց դուռը բանալու:

— Մոյշե-Մե՛նդ:

— Հը՛, ի՞նչ է:

— Այդ դո՛ւ ես, Մոյշե Մենդը, — հարցնում է մայրը:

— Ա՛յ թե պար եկանք հա՛: Ոչուփուչ դառնան նրանք: Բը՛ռռ...

— Ի՞նչ ես դուրս տալիս, — ասում է մայրը, — պատկիր քնիր:

— Ոչուփուչ դառնան: Լա՛վ խմեցինք: Բեռլ-Մենաշեն հա՛, հա՛, հա՛:

— Տեր ընդ քեզ, Մոյշե-Մենդը, ինչեր ես դուրս տալիս, — գոչում է Դվոսյա-Մալկան՝ վառելով լուցկին:

— Սկեսուրս, մի՞ թե չեք տեսնում, որ հարբել, գինու տիկ է դարձել, աստծու սիրուն մումը վառեք, թե չէ կընկնի, քիթը կջարդի:

— Ի սեր աստծո, մի թաս էլ տվե՛ք... Դե՛, ես նրանց ամենքին գրողի ծոցը կը...

Քրթմնջալով քթի տակ ինչ-որ անորոշ բաներ, Մոյշե-Մենդը փովեց մահճակալին, և իսկույն նեթ լավեց նրա խլացուցիչ խոմփոցը: Քնեց նաև Դվոսյա-Մալկան: Վաղուց արդեն ննջում են նաև երեխեքը: Ամեն կողմից լսվում էտուլոց ու խոմփոց: Ամենքը քաղցր քնած են այդ տանը: Միայն Ռոխելեն է, որ չի կարողանում քնել, ինչ ուզում էս արա: Քուն չկա ու չկա: Լուսնի պայծառ շողերը պատուհանից ընկել են ներս: Լույսի գունատ, երկար մի շերտ ընկել է մահճակալի վրա, ուր մեկնված պատկած է Մոյշե-Մենդը: Նրա բերանը բաց է, գլուխը ետ գնացած, պարանոցը ձգված, որից դուրս է ցցվել այլանդակորեն սուր կլանը: Նայելն անգամ զզվելի է:

Ռոխելեն չի ցանկանում նայել, բայց ակամա նայում է: Երբեք Մոյշե-Մենդը չի թվացել այդքան զզվելի, ինչպես է այն հիմա: Նա անկախ իր կամքից նրան համեմատում է այն թեթևսուլիկի՝ Ստեմպենյուի հետ: Մի՞ թե դա հենց նույն Մոյշե-Մենդն է, որը դեռևս ոչ վաղուց իր նշանածն էր՝ սպիտակ դեմքով, գեղեցիկ, հաճելի ժպիտը շուրթերին, վառվռուն աչքերով: Ո՛ւր չքացավ նրա գեղեցիկ կերպարանքը, նրա դուրեկան շարժուձևը, նրա սրամտությունները: Մի՞ թե դա նույն Մոյշե-Մենդն է:

Եվ նորից Ռոխելեն ամուսնուն հետ՝ Ստեմպենյուի հետ: Համեմատում է ուրիշի հետ:

Հեռու, հեռու, հանցավոր մտքեր: Մի՛ պղտորեք առաքինի կնոջ անարատ հոգին:

## VIII

### Հարսանեկան ճաշ նվիրված «Մազերը կապելու» ծեսին<sup>6</sup>

Մյուս օրը, երբ Խիենան՝ սինագոգի սուրհանդակը, եկավ Դվոսյա-Մալակայենց մոտ, ցանկանալով հայտնել, որ հարսի մայրը, ինքը՝ հարսը, փեսացուն և բոլոր խնամիները, Դվոսյա-Մալակային՝ հանդերձ ընտանյոք հրավիրում են հանդիսավոր ճաշկերույթի, Ռոխելեն արդեն մազերը կապել էր ու դերձակ Դովիթ-Մեխանիկի վերջին նորաձևությամբ կարած զգեստը հագել: Երկնակապույտ մետաքսե շրջագգեստ էր նրա հագին՝ սպիտակ հաշյաներով ու լայն թևքերով, ինչպես այն ժամանակ հագնում էին Մազեպովկայում, ուր նորաձևությունը միշտ ուշանում էր մի քանի տարով: Գլխին զգած մետաքսե ծակոտկեն թաշկինակի տակից թափանցում էին գլխին կապած թաշկինակը և հյուսքերը, ավա՛ղ ուրիշինը, նրա սեփական հյուսքերը վաղուց արդեն կրած և թաքցված են մարդկային աչքերից հավիտյանս հավիտենից: Հետո նա հագավ հավուրս պատշաճի բոլոր զարդերը՝ մարգարտի մի քանի շար, երկար ոսկե շղթա, ականջօղեր, կրծքազարդ, ապարանջաններ, մատանիներ:

Զուգված-զարդարված նստել է Ռոխելեն իր սենյակում, ուր Մոյշե-Մենդլը դեռևս պառկած է երեկվա դիրքով՝ պարանոցը ձգած, բերանը բաց և կատաղի խոմփում է:

«Ինչպիսի՛ տարբերություն փեսացու Մոյշե-Մենդլի և ամուսին Մոյշե-Մենդլի միջև: Այն Մոյշե-Մենդլը լեցուն էր հմայքով, աչքերը փայլում էին ինչպես պսակադրության մումեր, ձայնը նուրբ էր, փաղաքուշ և ամբողջ կերպարանքով դուրեկան: Իսկ սա... Ինչպիսի՛ հիմար ու լողլող կերպարանք: Կուրծքը՝ նեղ, մեջքը՝ կորացած, նոսր ու շիկամազ՝ այտամորուքներ: Թե որտեղից հայտնվեց նրա այս այծի մորուքը»:

Եվ նրա մտքերը ակամա նորից ու նորից վերադառնում են այն թրևկանին, որի կերպարանքը ամբողջ գիշեր չթողեց քնել:

«Դարդ տամ, դարդը մոռանաս», շարունակում է մտորել Ռոխելեն, ես ի՛նքս եմ մեղավոր, ինքս: Ստեմպենյուն էլ մի նոր փորձանք եղավ գլխիս: Թե ինչ ցավս էր կտրվել ոչ այս, ոչ այն երաժիշտի հետ խոսքի բռնվել: Ֆի՛, ինչպիսի խայտառակություն... Ի՛նչ կասեին մարդիկ, եթե նկատեին, թե ես ինչպես եմ կանգնել ու խոսում նրա հետ: Դեռ լավ է, որ շուրջը խառնաշփոթություն էր տիրում: Իսկ ի՞նչ կասեր Մոյշե-Մենդլը»:

Նա փաղաքուշ ժպիտով մոտեցավ ամուսնուն, խոնարհվեց սնարին և տվեց անունը: Մոյշե-Մենդլը բացեց մոխրավուն աչքերը և չհասկացող հայացքով երկար նայեց կնոջը:

— Մոյշե-Մենդլ,— կրկնեց նա ավելի ու ավելի խոնարհվելով:— Մոյշե-Մենդլ, չե՞ս ճանաչում ինձ, ի՞նչ ես նայում, երևում է խիստ եմ դուր գալիս քեզ:

— Հանգի՛ստ թող ինձ... Քնել եմ ուզում:— Եվ դեմքը անելով պատին, նորից սկսեց ահավոր խոմփալ:

<sup>6</sup> Հնում մազեր պահելը կնոջ մոտ համարվում էր մեծ ամոթ: Նույնիսկ հասած աղջիկներն էլ տղամարդկանց ներկայությամբ պետք է գլուխը թաշկինակով ծածկեին: Ամուսնացած կինը պարտավոր էր կարճ կտրել մազերը, նույնիսկ խուզել, կապելով գլխաշոր կամ դներով կեղծծամ: Նորապսակ հարսի մազերը կտրելու և կապելու արարողությունը կատարվում էր պսակի հաջորդ օրը, որի առթիվ լինում էր հանդիսավոր ճաշկերույթ:

— Հարսնացուն ու փեսացուն, նրանց ծնողներն ու ազգականները խնդրում են ձեզ, ձեր սկեսրոջը, ձեր ամուսնուն շնորհի բերել «մազերը կտրելու» ճաշկերույթին:

Այսպես մի շնչով վրա տվեց սինագոգի սուրհանդակը, գլուխը խրելով դռնից ներս: Բայց տեսնելով Ռոխելեին ամուսնու սնարին կռացած, ետ ընկրկեց:

Ռոխելեն հարսին գտավ դեռևս մազերով: Ընկերուհիները ջերմագին համբուրվեցին, և ինչպես սովորաբար լինում է երկու նորատի ամուսնացած կանանց հանդիպման ժամանակ, շուտով նրանց միջև սկսվեց մի աշխույժ գրույց:

Հյուրերն սկսեցին կամաց-կամաց հավաքվել: Սեղանների վրա արդեն բազմել են մուրաբաները, կարկանդակները, նուշով թխված օղաբլիթները, մեղրահաց, շտրուտել:

Ինչպես և երեկ, արդեն այստեղ են աղքատները և սինագոգի սպասավորները: Հարսի հայրը՝ Խաիմ-Բենցիոնը, թավշե կարտուզով և հարթ սանրած մազերով, իրեն կորցրած վագում է սենյակով մեկ: Հարսի մայրը, որի ձայնը իսպառ խոպոտել է, դարձյալ հրամայում է, քշում՝ մեկին դես, մյուսին դեն, կարգադրում, ճշում՝ ինչքան ուժ ունի:

— Դուք ուզում եք, աստված մի արասցե, ինձ մահվան դո՞ւռը հասցնել: Տորթն մեղրով բողկը դրել են հենց այն տեղ, որտեղ պետք է օղին ու թասերը դրվեն: Վա՛յ ինձ, թշվառականիս: Թեկուզ միջիցդ պայթի: Ա՛յ թե հարսանիք է հա՛, բեռով փող նստեց և ի՛նչ... համեցե՛ք: Նույնիսկ երաժիշտներն էլ չեն եկել: Դե արի ու մի պայթի:

— Լռի՛ր, սուս արա,— բռռում է Խաիմ-Բենցիոնը:— Համը հանեցիր: Սրան տեսեք, մեզ երջանկացրեց, հրամայում է, կարգադրում և ոչինչ չի անում: Միայն գոռալ գիտե: Ասա տեսնեմ, ինչո՞ւ ես գոռում: Ի՛նչ է, առաջին անգա՞մն ես աղջիկ պսակում: Հապա մի սրան նայեցեք հիացեք, նույնիսկ ձայնն էլ է կտրվել: Ամբողջ քաղաքը հյուր է կանչել, ինքն էլ գլուխը կորցրած վազվզում է ու գոռում: Մեկ հարցնող լինի՛ ինչու, ինչ բանի համար:

— Ո՛վ է գոռում, գիժ: Ո՛վ է գոռում:

— Ես չգիտեմ ով է գոռում: Ինքդ ասա, լսենք:

— Բհարկե, ո՛չ ես: Այդ դու ես գոռում:

— Ե՞ս եմ գոռում: Ահա՛ թե ինչ: Միգուցե ընդհակառակը:

— Ահա՛, ինքդ ես գոռում, Խաիմ-Բենցիոն: Խելքդ գցել ե՞ս, ինչ է:

— Ողջո՞ւյն, հարգանք ու պատիվ փեսային ու հարսին, նրանց ծնողներին, բոլոր հարազատներին թանկագին հյուրերին: Մի տո՛ւշ նվագեք:

Այս բարձրագոյ աղաղակով բաղին Խայկյը վերսկսեց հարսանեկան հանդեսը: Երաժիշտները ձեռք զարկեցին գործիքներին... Հյուրերը սերթուկների փեշերով սրբելով ձեռքերը, քշտելով թևքերը, անցան ձեռնալվայի: Հետո բոլորը նստեցին երկար սեղանների շուրջը, և սկսվեց հարսանեկան հանդիսավոր ծիսակատարությունը:

Հենց այդ ժամանակ էլ Ստեմպենյուն ձեռքն առավ ջութակը: Ինչպես երեկ երեկոյան, նա այսօր էլ հրաշքներ կարտարեց՝ կրկնելով երեկվա մեղեդիները և ավելացնելով նորերը: Հասարակությունը լսում էր վերացած և հիացմունքից իրեն կորցրած: Բոլորի հայացքները ուղղված էին նրան՝

Ստեմպենյուին: Միայն Ռոխելեն էր, որ նույնիսկ չէր նայում այն կողմը, ուր նստած էին երաժիշտները, բայց և այնպես տեսնում էր նրան և զգում, որ նա նայում է իրեն: Միայն այն բանից հետո, երբ Ստեմպենյուն դադարեց նվագելուց, և սրահում փոթորկեց հիացմունքի աղմուկը, Ռոխելեն բարձրացրեց հայացքը և տեսավ... Ստեմպենյուին:

— Ի՞նչ կասեք: Ինչպես էր հը՞, — ասաց հարսը Ռոխելեին:

— Ո՞վ, — չհասկանալով հարցրեց Ռոխելեն:

— Էլ ո՞վ պիտի, Ստեմպենյուն: Լավ էր, այնպես չէ: Իսկական՝ հրաշագո՛րծ:

Ռոխելեն ոչինչ չպատասխանեց, նա զգաց, որ դեմքը շառագունում է:

— Դուք շոգո՞ւմ եք, Ռոխելե: Դուք շոգում եք, այնպես չէ՞:

— Այո, շոգ է, սաստիկ շոգ է: Ես մի քիչ դուրս գամ, թարմ օդ շնչեմ, — ասաց նա և վեր կացավ սեղանից:

Մատուցող կանայք ու տղամարդիկ, որոնց նա անվերջ դիպչում էր, խոնարհաբար զիջում էին ճանապարհ, բայց այդ ոչ հարգանքից, որ տածում էին դեպի նա, որքան նրա մետաքսե հագուստի ազդեցիկ տեսքից: Սակայն այդքան հեշտ չէ դռանը հասնելը: Ամենից առաջ նա ստիպված էր անցնել երաժիշտների մոտով, որոք նրան ասես ուտում էին հայացքով և միաժամանակ ինչ-որ անհասկանալի խոսքեր նետում՝ «անթիկա աղուննա՛կ. պետք է հետը լեզու թրջել»: Երբ Ռոխելեի հայացքը հանդիպեց Ստեմպենյուի հայացքին, սիրտը այնպես տրոփեց, ինչպես չէր տրոփել երբեք. դրանից նա ավելի շիկնեց: Ռոխելեի վրա, ինչպես այրվող տնից, հորդեց տապը: Իսկ այդտեղ, հակառակի նման հենց շեմքի վրա, բեմադրեմ հանդիպեց նորահարսի հորը՝ Խաիմ-Բենցիոնին և մի նոր պատմություն տեղի ունեցավ: Խաիմ-Բենցիոնը, որ չափից դուրս աստվածավախ մարդ էր, վախենում էր կանանցից ինչպես սատանայից: Նա այդ միջոցին պետք է ետ ընկրկեր, բայց արի տես, որ դեպի աջ ցատկեց: Եվ քանի որ Ռոխելեն էլ գնաց դեպի աջ, նրանք մազ մնաց, որ ճակատները իրար զարկեն, այդտեղ Խաիմ-Բենցիոնի միտքը գործեց, և նա նետվեց դեպի ձախ: Ցավոք սրտի, Ռոխելեն էլ մտածեց նույնը և նա էլ շարժվեց՝ ձախ: Խաիմ-Բենցիոնը իսկույն մտածեց, որ պետք է գնալ աջ: Բայց չէր հասցրել մի քայլ զցել, երբ Ռոխելեն թարսի նման նորից հայտնվեց նրա դիմաց: Ով է իմանում, նրանք որքան կպտտվեին դեմհանդիման, եթե օգնության չգար իսպառ խոպոտածտանտիկինը: Նա իր սովորության համաձայն, ինչ-որ բանի շուրջը աղմկալից վեճի մեջ մտավ ամուսնու հետ, և Ռոխելեին վերջապես հաջողվեց դուրս պրծնել դեպի մաքուր օդ...

## IX

### Ռոխելեի անցյալը և Խաե-Էթլի սիրավեպը

Բանից դուրս եկավ, որ փողոցում ավելի շոգ էր, քան ներսում: Հուլիսյան տոթ կեսօր էր: Արեգակը կանգնած էր ուղիղ գլխավերևում անգթորեն այրում էր: Մագեպովկայի փայտամած և հարդածածկ տանիքների վրա, ինչպես գետի ալիքներ, դողում և տատանվում էին արեգակի շողերի վառ խուրձերը:

Ռոխելեի հայացքը ընդգրկեց շուկայի լայն և ամայի հրապարակը: Կարմիր վարագուրավոր կրպակները բաց են. դռների առջև աթոռակների վրա նստոտած են կանայք և աներևակայելի արագությամբ գուլպա են գործում, կողքերին՝ մաղեր՝ մրգերով, կարկանդակներով, օղահացերով:

Մի այծ թաքուն մոտենում է, պատրաստ չարիք գործելու, բայց նրան քաշում են վռնդում են: Հեռվում երևում են երկու եզ, որ քաշում է մինչև ծայրը խրձերով լի սայլը: Փոշու ամպերի մեջ, սայլի ետևից դանդաղ քայլում է բոկոտն մի տղա՝ ոչխարենու գդակով, պարկը գցած ուսը, երկար ճիպոտը ձեռքին, կողքից, լեզուն դուրս գցած, վագում է մի մեծ շուն:

Ռոխելեն երկար նայում է այդ առօրյա ծանոթ պատկերին և համեմատում իր տոնական մետաքսե, երկարավուն զգեստի, մարգարիտների, ապարանջանների, ականջօղերի, մատանիների հետ և զգում, թե որքան օտար է իրեն շրջապատող այդ առօրյա փոքրիկ աշխարհը: Իսկապես, ո՛վ է ինքը: Ոչ այս և ոչ այն. ոչ շուկայում առևտուր անող կին և ոչ կոմսուհի: Պարզապես ժողովրդից ելած մի հրեա կին, որ ազատ է որևէ հոգսից ու պարտականությունից. մարդու է գնացել և ապրում է սկեսրոջ ու սկեսրայրի հետ, ամեն ինչ գտնում պատրաստի, մատը մատին չի տալիս: Իսկ ամուսինը կամ սինագոգում է, կամ ձեռնափայտը ձեռքին պոլթի է տալիս շուկայում և ամեն հանդիպողի հետ կանգնում, զավզակություն անում:

Եվ ահա հիմա, կանգնելով փողոցում և անմիջական առնչվելով բնության հետ, Ռոխելեն, թերևս, առաջին անգամ իր կյանքում խորհեց, թե որն էր գոյության իմաստը: Իր համար միանգամայն անսպասելի, նա հասկացավ, որ ինչ-որ բան պակասում է իրեն: Իսկ թե ինչ, նա դեռևս պարզորոշ չէր գիտակցում:

Ռոխելեն մի սովորական հրեա կին էր, ոչնչով չէր փայլում, ոչնչով աչքի չէր ընկնում իր շրջապատում: Նա ծնվել էր ու մեծացել մի բազմանդամ ընտանիքում: Ծնողները առանձնապես չէին փայփայել: Մե՛ծ բան է, աղջիկ է, էլի: Է՛հ, որ ծնվել ես, ապրիր քեզ համար:

Որպեսզի պարապ քարշ չգար և որպեսզի տանը մի երեխա պակաս լիներ, նրան դեռ փոքրուց եղբայրների հետ ուղարկեցին խեղեր սովորելու, իսկ երբ մի քիչ մեծացավ, սովեցին Մոսկով-Շպրայգին, որը աղջկան վայելչագրություն վորեցրեց:

Այդտեղ, ինչպես լինում է, Ռոխելեն ընկերուհիներ ունեցավ, ինչպես մեծ, այնպես էլ իրենից փոքր: Բայց նա ավելի սեր ուներ իրենից մեծ աղջիկների հետ, որովհետև նրանք շատ պատմություններ գիտեին, հրաշալի, հետաքրքիր պատմություններ: Ընկերուհիներն էլ Ռոխելեին էին սիրում՝ նրա զրնգուն ձայնի, նրա լավ երգելու համար:

— Մի բան երգի՛ր, Ռոխելե, երգի՛ր, սիրելիս, երգիր: Մի՛ ամաչիր, էստեղ տղաներ չկան:

Տղաների կամ մեծահասակների ներկայությամբ Ռոխելեն ամաչում էր երգել: Եվ հենց ընկերուհիներն էլ էին ասում, որ տղաների ներկայությամբ երգելն անվայել բան է: Չի կարելի...

— Դե երգիր, Ռոխելե: Քեզ պիտի խնդրե՞նք, ինչ է:

Եվ Ռոխելեն հնազանդվելով նրանց, իր բարակ, թավշյա ձայնով ծոր էր տալիս:

*Լալիս է աղավնին մոխրավուն,  
Լալիս է, դունդունում ու կանչում —  
Ինչ-որ տեղ ես ունեմ մի ընկեր սիրասուն,  
Ա՛խ ինչու նա ինձ մոտ չի գալիս:*

Ռոխելեն երգում էր այնպիսի ապրումներով, որպես թե իսկապես հասկանալիս լիներ, թե ինչ ասել է սեր: Ընկերուհիներն էլ, ըստ երևույթին, այդ բառի մեջ ուղղակի դնում էին նրա իսկական իմաստը, որովհետև բավական էր Ռոխելեն սկսեր երգել, որ նրանք մտքի մեջ ընկնեին, սկսեին հառաչել, իսկ երբեմն էլ արցունք թափել: Ռոխելեի երգելը ամենից շատ սիրում էր նրա ավագ

ընկերուհիներից մեկը՝ Խաե-Էթըր, մի սիրուն, բայց որբ աղջիկ: Նա այն հրեա աղջիկներից էր, որի կենսագրությունը նույնքան կարճ է, որքան այն աղոթքը, որ ասում են ջուր ըմպելուց առաջ: Ահա նրա կյանքի պատմությունը:

Ժամանակով, ոչ շատ վաղուց, Մկվիր քաղաքում ապրում էին երկու եղբայր: Մեկին ասում էին Արն, մյուսին՝ Լեյբ: Արնը երկար չապրեց աշխարհում, իսկ նրա ետևից էլ գերեզման գնաց նաև կինը, թողնելով միակ աղջկան, Խաե-Էթլին: Հորեղբայրը՝ Լեյբը, ողորմաց թշվառ որբուկին և ժառանգության հետ միասին, որ մնացել էր հորից, վերցրեց իր մոտ: Պետք է ճիշտը ասել, հորեղբայրը այնպես վարվեց եղբոր աղջկա հետ, կարծես օտար լինեք, ժառանգությունը վերցրեց իր ձեռքը, իսկ աղջկան տվեց մի ստոր, մի անպիտան մարդու, որը նրան տանջում է անվերջ: Եվ թշվառ Խաե-Էթըր մահանում է մատաղ հասակում, քսաներկու տարին բոլորած:

Խաե-Էթըր Ռոխելեի ամենամոտ ընկերուհին էր: Նրանք հոգի էին տալիս միմյանց համար: Մեկ անգամ, մի շաբաթ օր, նրանք նստել էին լուսամուտի մոտ, սանրած, հարդարած մազերով: Եվ ինչպես ընդունված է՝ տոնօրյա զգեստներով: Ռոխելեն, ըստ սովորության, մի երգ էր երգում, իսկ Խաե-Էթըր լսում էր: Դա մի պարզ երգ էր:

Ախ, ուր ես դու գնո՞ւմ  
Ախ, ուր ես դու գնո՞ւմ,  
Եվ ինձ այստեղ թողնո՞ւմ...

— Ռոխելե՛, հոգիս, մեկ էլ երգիր,— խնդրում էր Խաե-Էթըր:— Մի անգամ էլ երգիր:

— Մի անգա՞մ էլ,— զարմանում էր Ռոխելեն:— Է՛հ, ինչ կա, մեկ էլ կերգեմ:

Ախ, ուր ես դու գնո՞ւմ,  
Ախ, ուր ես դու գնո՞ւմ,  
Եվ ինձ այստեղ թողնո՞ւմ...

Հանկարծ Ռոխելեն նկատում է, որ Խաե-Էթըր գլուխը դնում է ձեռքերին, ուսերը ջղաձգորեն սկսում են ցնցվել Ռոխելեն լռում է և լսում ընկերուհու հեծկլտոցը:

— Տեր ընդ քեզ, Խաե-Էթըր, ինչո՞ւ ես լալիս: Հանկարծ ի՞նչ ընկավ միտքդ, որ արցունք ես թափում: Ասա ինձ, ի՞նչ է պատահել, Խաե-Էթըր, որ այդպես լցվեցիր:

— Օ՛յ, Ռոխելե,— պատասխանում է Խաե-Էթըր, արցունքները շաղ տալով:— Օ՛յ, Ռոխելե: Այդ երգը... քո երգը...

— Իմ ե՞րգը: Ի՞նչ կա այս երգի մեջ, և ինչ կա այդտեղ լալու:

— Օ՛յ, Ռոխելե, մի՛ հարցնի, մի՛ քննի: Վայ ինձ: Կրծքիս մեջ կրակ կա: Այրում է, ա՛յ, այստեղ: Տեսնո՞ւմ ես:

Եվ Խայա-Էթըր ձեռքը դնում է սրտին: Ռոխելեն նայում է ապշած, տարակուսած:

— Ի՞նչ ես այդպես նայում, Ռոխելե: Չե՞ս հասկանում: Դե, իհարկե, դու ինչ կարող ես հասկանալ... Այնպես ծանր է ինձ համար, ես այնպե՛ս մենակ եմ, այնպե՛ս և լքված: Պետք է քեզ պատմեմ, ամեն, ամեն ինչ պատմեմ:

Եվ Խաե-Էթըր կրտսեր ընկերուհուն հայտնում է տխուր, բայց և սովորական մի պատմություն, թե ինչպես էին իրեն ծաղր ու ծանակի մատնել հորեղբայրն ու մանավանդ այն չար վհուկը, նրա կինը:

Եվ եթե չլիներ հորեղբոր կրտսեր որդին՝ Բինիոմինը, նա վաղուց փախած կլիներ տնից կամ գետում խեղդված: Այդ Բինիոմինը իր կյանքի միակ ուրախությունն էր, չէ՞ որ միասին էին մեծացել: Նա մոտիկ էր իրեն, քան հարազատ եղբայրը, իսկ հիմա նա գնում է և թողնում է իրեն դժբախտության մեջ, որպես մի բոլորովին օտար, բոլորովին օտար մի մարդ:

— Չեմ հասկանում, Խան-Էթլ, թե ինչ ունես տանջվելու: Եթե նույնիսկ հարազատ եղբայրդ էլ գնար, այդ էլ ցավ չէ, իսկ նա հորեղբորդ որդին է:

— Օ՛յ, Ռոխելե, դու չես կարող հասկանալ, թե նա որքան հարազատ էր ինձ, նա հոգուս միջին էր, դե որպես հարազատ, նույնիսկ ավելի, հավատա՛ ինձ: Երբ ես տեսնում էի Բինիոմինին, կարծես աչքերիս լույս էր իջնում, իսկ երբ գնա՛ց...

— Բինիոմինը, այն պարտավոր էր գնալ, Խան-Էթլ: Չէ՞ որ նա ամուսնացել է:

— Օ՛յ, Ռոխելե, հարազատս, այդ մի ասիր ինձ, լսել չես կարող: «Բինիոմինը ամուսնացել է» բառերը զրկում են ինձ վերջին ուժերից: Երբ լսում եմ այդ սոսկալի խոսքերը, զգում եմ, որ վերջս եկել է: Դու այդ չես կարող հասկանալ, Ռոխելե, թող աստված տա՝ երբեք չիմանաս: Մի՛ նայիր ինձ այդպես, Ռոխելե: Բինիոմինը ինձ խոսք էր տվել ու երդվել, որ միայն ի՛նձ հետ կամուսնանա:

— Հապա ինչո՞ւ քեզ հետ չամուսնացավ:

— Ռոխելե, դու այնպիսի հարցեր ես տալիս, կարծես երեխա լինես: Նշանակում է՝ ինձ վիճակված չէր, նշանակում է, այդ նրա՛ն, մեր դժբախտության պատճառը հանդիսացողին էր վիճակված...

— Բայց չէ՞ որ Բինիոմինը երդվում էր:

— Հետո ինչ: Նա միշտ պատրաստվում էր հորեղբորս ասելու, բայց վախենում էր. դե դու գիտես հորեղբորս, Բինիոմինն էլ հետաձգում էր այսօր, վաղը, այնքան, մինչև որ նրան նշանեցին: Երբ ես նրան հիշեցրի այդ մասին, նա ասաց, որ մինչ հարսանիքը դեռ շատ կա, որ նա դեռ կհասցնի խոսել: Իսկ ժամանակն անցավ... Եվ եկավ այդ օրը, իմ կյանքի ամենաչարագուշակ օրը... Ես ներկա եղա նրա հարսանիքին, սեփական աչքերով տեսա, թե ինչպես Բինիոմինը նրա մատին հագցրեց նշանի մատանին, լսեցի, թե ինչպես աղոթք շնջաց: Կանտորը երգիչների հետ երգեց, իսկ Բինիոմինը խոնարհեց հայացքը, որպեսզի չտեսնի ինձ: Բայց ես գիտեմ, որ նա տեսնում էր ինձ: Օ՛յ, Ռոխելե, դրանիցհետո ես ինչպես ապրեմ աշխարհում: Որտեղից ուժ հավաքեմ, որ այդ վիշտը տանեմ:

— Դե, ուրեմն, Խան-Էթլ, քո Բինիոմինը ստոր խաբեբա է: Եվ ինչո՞ւ հողը չի պարտակում նրան:

— Մի՛ ասիր այդպես, Ռոխելե, դու նրան չես ճանաչում: Դու չգիտես, թե նա ի՛նչ ոսկի մարդ է: Ինչպիսի՛ ազնիվ հոգի: Մեղավորը միայն հորեղբայր Լեյբն է, այդ հոգեառը, միայն նա: Ո՛վ արդարն աստված, հատուցիր նրան հորս արյան փոխարեն:

— Ես տեսնում եմ, որ քեզ համար դժվար է...

— Դժվար է, ասում ես: Ես մեռնում եմ, ուժերս սպառվում են... Իսկ դու ասում ես՝ դժվար է:

— Դե, գոնե սիրո՞ւն է, Խան-Էթլ:

— Ո՞վ:

— Նա էլի... Բինիոմինի կինը:

Ռոխելեն նկատեց, թե ինչպես Խաե-Էթլի դեմքը փոխվեց, և գունաթափ այտերին այ պուտեր երևացին: Ռոխելեն այդ ժամանակ դեռ չէր կարող հասկանալ, թե ինչու Խաե-Էթլը չպատասխանեց, բայց զգաց, որ հարցը կրկնելն անտեղի է: «Եթե լուր է, ուրեմն ասելու կարիք չկա: Կամ թերևս նրա համար շատ դժվար է ասելը»:

Մի առժամանակ անց, Ռոխելեն Խաե-Էթլին հանդիպեց հարսանիքում, դա հենց իրեն՝ Խաե-Էթլի հարսանիքն էր. նա ոչնչով չէր տարբերվում ուրիշ հարսերից, նստած էր, ինչպես կարգն է, լուռ էր, հետո գնաց պսակի: Մյուս օրը, ինչպես ընդունված է, մազերը կտրելու ծիսակատարությունն էր: Ճիշտ է, նա մի փոքր գունատվել էր և դեմքը թեթևակի մտախոհ էր ու տխուր: Բայց մեծ բան չէ: Ճիշտն ասած, նորահարսը պսակի մյուս օրը հենց այդպես էլ պետք է լինի: Դե, հո ձեռքերը չէ՞ր բարձրացնի ու պարի...

Իսկ ինչ էր կատարվում նրա հոգում: Ո՞վ է իմանում: Աղջկա հոգին համակ գաղտնիք է, խոր գաղտնիք, յոթ փականքը վրան սնդուկ, և տղամարդու համար պատշաճ չէ նայել այնտեղ, անվայել է:

## X

### Նորից Ռոխելեի մասին

«Ինչ է կատարվում հիմա Խաե-Էթլի հոգում»: Այդ հարցի շուրջը Ռոխելեն խոր մտքի մեջ ընկավ նրա հարսանիքի ժամանակ: Նա իրեն զբաղեցնող մտքերի մասին ոչ ոքի հետ չխոսեց, բայց նրա սիրտը մութ կերպով զգում էր և գիտակցությունը հուշում, որ Խաե-Էթլի համար իր ամուսնու, այդ միանգամայն օտար տղայի կողքին նստելը, պետք է որ տխուր լիներ, երբ նույն այդ ժամանակ, նրա հարազատ Բինիոմինը հեռու էր ինչ-որ տեղ՝ իր կնոջ հետ... Ռոխելեն այդ բոլորին շատ էր ուզում Խաե-Էթլին հարցնել, թե ինչպե՞ս է Բինիոմինը, արդյոք նամակ գրո՞ւմ է նրան: Բայց մոտենալով ընկերուհուն և նայելով նրա գունատ դեմքին, լսելով նրա հառաչանքները, որ ստեպ-ստեպ դուրս էին թռչում կրծքից, չհամարձակվեց խոսք բացել:

Մենք թերևս սխալված չենք լինի, եթե ասենք, որ Ռոխելեն այն ժամանակ առաջին անգամն էր միտք անում նման բաների շուրջը... Քիչ չէ պատահում, երբ մի որևէ ցնցող միջադեպ ծնունդ է տալիս մեծ մտքերի, և շատ ավելի է ներգործում, քան տասնյակ ընթերցված գրքեր: Ճիշտ է, Ռոխելեն ոչնչով աչքի չընկնող, մի պարզ, հասարակ աղջիկ էր, որը սակայն, բնածին խելքից զուրկ չէր: Եվ այդ բնածին խելքը օգնում էր նրան շատ բաներ ճանաչել: Նա սիրավեպեր չէր կարդացել և անգամ հասկացողություն չունեի գրքերի հերոսներից, բայց ինչու նրա անբիծ սիրտը չզգար ուրիշի վիշտը, չհասկանար մերձավորի տառապանքը: Խաե-Էթլի դժբախտ սիրո շնորհիվ Ռոխելեն կարծես մեկ անգամից մի քանի տարով մեծացավ:

Այդ ժամանակ Ռոխելեն ինքն էլ էր նշանված: Իր փեսացուի՝ Մոյշե-Մենդլի մասին, նա այնպիսի գովասանքներ էր լսել, որ իրեն համարում էր աշխարհի ամենաերջանիկ աղջիկը: Ամեն կողմից նրա ականջին բզգում էին.

— Բախտը լա՛վ բերեց, աչքով չտանք:

— Ոսկու կարասն ընկավ: Ռեբ Աիզիկ-Նաֆտոլյան Մազեպովկայի ամենահարուստ և ամենապատվավոր մարդն է, Իսկ տղան՝ մինուճար տղա, և այն էլ ի՞նչ տղա: Ռոխելեն ա՛յ թե բախտի տիրացավ:

Եվ իսկապես, Մոյշե-Մենդլը մի այնպիսի տղա էր, որ ում ասես դուր կգար, սիրուն, աշխույժ, թալմուդի իմաստություններին խելահաս, սուրբ գրոց լավագիտակ: Հապա ձեռագիրը: Ամբողջ Մազեպովկան ապշած էր մնացել: «Օրիորդաց վարժապետ» Մոտլ Շպրայզն անգամ, ակնոցը քթին երկար պլշում էր Ռոխելեին գրած Մոյշե-Մենդլի նամակին, և որպես մի կատարյալ գնահատող, ստիպված էր խոստովանել, որ փեսացուն ոսկի ձեռք ունի, և որ եթե ժամանակին իր մոտ բավականաչափ վարժվի, աստժո օգնությամբ, հազվագյուտ ձեռագիր կունենա:

Մինչև հարսանիքը Ռոխելեին հազվադեպ էր վիճակվում գրուցել իր փեսացուի հետ, որովհետև նա որտե՞ղ էր ապրում, փեսացուն՝ որտե՞ղ: Մազեպովկան և Սկվիրը բավականաչափ հեռուն են իրարից: Նրանք միմյանց տեսել էին միայն մեկ անգամ, այն էլ տասնյակ կողմնակի մարդկանց ներկայությամբ, ըստ որում, փեսացուն գտնվում էր մի սենյակում, հարսնացուն՝ մի այլ: Բայց դրա փոխարեն նրանք մի ամբողջ տարի ամեն շաբաթ նամակներ էին փոխանակում: Ճիշտ է, այդ նամակագրության մեջ, ինչ թաքցնենք, մեծ մասնակցություն ուներ վարժապետ Մոտլ Շպրայզը: Այնքանով, որքանով որ փեսացուն իր նամակներում փայլում էր երեք լեզուների — հին հրեերենի, ռուսերենի և գերմաներենի իմացությամբ, ապա Մոտլ Շպրայզը պետք է ջանար, որպեսզի իր աշակերտուհին ամոթով չմնար: Ցանկանալով բոլորին ապացուցել, որ Մոտլ Շպրայզի վարժարանից դուրս եկած աղջիկները տգետ չեն կարող լինել, ինչպես լինում են վայելչագրության մյուս ուսուցիչների մոտ սովորածները, նա փեսացուի երեք լեզուներին ավելացրեց նաև չորրորդ լեզուն՝ ֆրանսերենը, այսինքն՝ յուրաքանչյուր նամակում ֆրանսերեն տառեր էր գրում, որոնց «օրիորդաց վարժապետը» խիստ գիտակ էր: Ընդհանրապես, կարելի է ասել, որ հարսնացուն ու փեսացուն մի ամբողջ տարի սիրային փոստ էին խաղում: Այդ խաղը ընդհատվեց միայն այն ժամանակ, երբ սկսեցին լրջորեն հարսանիքի պատրաստություն տեսնել:

Հարսանիքը եղավ այնպես, ինչպես հրեական բոլոր հարսանիքները: Հարսի ծնողներն այնքան էլ չէին գոհացրել փեսայի ընտանիքին, այնպես չէին դրսևորել իրենց, ինչպես ցանկալի էր խնամիներին... Փեսացուի ծնողները քթները ցցել էին և կծու խոսքեր էին գցում հարսնացուի յուրայիններին և ծածուկ (Ճիշտ է, ոչ առանց պատճառի) անվանում «խոզեր»: Բայց դա մեծ փորձանք չէր, մի-մի թաս գինի խմելով, կողմերը ներեցին փոխադարձ վիրավորանքները և բաժանվեցին որպես բարեկամներ: Նորահարսը հրաժեշտ տվեց հարազատներին, նրան ուղեկցեցին մինչև քաղաքից դուրս, լաց եղան, համբուրվեցին վերջին անգամ, և ինչպես ասում են՝ բեռը շալակից գցեցին: Աղջիկը գնաց սկեսրանց, ապրելու շեն ու բոլ տանը՝ գտնելով ամեն ինչ պատրաստի:

## XI

### Դարձյալ Ռոխելեն

Ռոխելեի համար սկսվեց նոր կյանք: Կեսրանց տանը նրան սիրում էին: Դա հասկանալի էր, ինչքան չլինեք միակ հարսն էր և այն էլ այդպիսի մի գանձ: Նրան հոգ էին տանում, ջանում էին գլխի ընկնել նրա յուրաքանչյուր ցանկությանը, ինչպես ասում են, փչում նստեցնում էին, իսկ սկեսուրը՝ Դվոյա-Մալկան անսահման բախտավոր զգալով, որ աստված իրեն մի այդպիսի մխիթարություն էր տվել, կաշվից դուրս է գալիս, որպեսզի հարսին ծառայի: Միայն մի բան գիտեր, Ռոխելե հա՛ Ռոխելե: Մսի մի լավ կտոր, մի որևէ համեղ ուտելիք, ամեն՝ն, ամեն՝ն ինչ Ռոխելեի համար էր: Առավոտները հազիվ աչքերը բացած, կտեսներ սեղանի վրա արդեն դրված է սուրճով լի գավաթը, իսկ Դվոյա-Մալկան, չնայած իր զբաղված լինելուն, նա խանութ ուներ շուկայում, մոռացած բոլոր գործերը պտտվում էր Ռոխելեի շուրջը, հետևելով, որպեսզի հարսին ամեն ինչ ժամանակին տրվի:

— Ինչո՞ւ եք չարչարվում, սկեսուրս:

— Դատարկ բան է: Խմի՛ր Ռոխելէ, կե՛ր Ռոխելէ:

Հաճախ Ռոխելէն նկատում էր, որ սկեսուրը հազիվ ոտքը շուկայից տուն դրած, վազում է խոհանոց և ձայնը գլուխը գցած, անէծքներ տալով, այնպես է հարձակվում աղախնու վրա, որ լսողը կասեր նրան մորթում են:

— Ի՞նչ է պատահել, սկեսուրս,— հարցնում էր Ռոխելէն:

— Ես կարծեցի, թե դու վաղուց ես վեր կացել, իսկ կաթն էլ էստեղ եռում է հա եռում, ա՛յ տեսնեմ դրան տաք կաթսայում խաշվի, դրան, էդ անիծած աղջկան: Դեռ եմ վազում, դեռ եմ վազում, ինքս էլ չգիտեմ, թե որ աշխարհումն եմ գտնվում: Խանութում, աչքով չտամ, նեղվածք է՝ գնորդների ձեռքից ասեղ գցելու տեղ չկա, իսկ նա, իմ գլխի տերը, իմ մխիթարությունը կանգնել է՝ ձեռքերը գրպանները դրած, ինչպես խնամին հարսանիքում. ես նրան խնդրում եմ, աղաչում, պաղատում, մի զույգ թարմ բուրբիկ տար տուն, շատ համեղ են: Ես խմորեղենը միշտ Լեյցի կնկանից եմ առնում, ուրիշից երբեք չեմ առնում, թեկուզ բեռով ոսկի տան, թո՛ղ աստված էդ կնկան իր քաշած տանջանքների համար վարձահատույց լինի: Խեղճը ո՛նց է տանջվում իր հարբեցող մարդու ձեռքին: Թե ոնց է հողը դիմանում ու տակով չի անում էդ անիրավ Լեյցին, չեմ հասկանում, հոր անունը խայտառակեց, աստված հոգին լուսավորի: Հա՛, ինչ էի ուզում ասել: Գլուխս, աստված իմ, էնպես է ուռել... Սպասիր, գեղեցկուհին հրես եկավ, հայտնվեց: Որտե՞ղ էիր, ա՛յ աղջի:

Անէծքի կարկուտ է թափվում աղախնու գլխին, որ նա հոգ չի տարել Ռոխելէի համար, Ռոխելէի սուրճի համար, Ռոխելէի նախաճաշի համար: Ամեն ինչ Ռոխելէի շուրջն է պտտվում, ինչպես երկիրը՝ արեգակի: Նույնիսկ սկեսրայրն էլ, որ միշտ զբաղված է լինում իրենով և իր գործերով, հասցնում է, որպեսզի հարսին մենակ չթողնի իր հոգների հետ:

Այդ ծայրահեղ հոգածությունը, ճիշտն ասած, անչափ տհաճ էին Ռոխելէի համար և ճնշող: Եվ պետք է ասել, որ Ռոխելէն ավելի պակաս էր կապված նրանց հետ, քան նրանք իր հետ:

Ասելով՝ «նրանք» մենք նկատի ունենք սկեսրոջն ու սկեսրայրին: Գլխավոր հերոսը՝ Մոյշե-Մենդլը, հաշվից դուրս էր, երիտասարդ ամուսինների մեջ այնպիսի հարաբերություններ էին հաստատված, որ չէր կարելի համարել ոչ լավ, ոչ վատ: Ջահելները շատ սակավ էին գրուցում միմյանց հետ, և դա ինչ-որ չէր հաջողվում: Մի այնպիսի օրինավոր երիտասարդ, ինչպիսին Մոյշե-Մենդլն էր, օրը ցերեկով հո տանը չէր մնա, թե ինչ է պիտի գրույցի կնոջ հետ: Իսկ թե բան է, նրանց հաջողվում էր երբեմն երեկոները մենակ լինել, ապա շատ կարճ ժամանակով. բոպե չանցած մեկ էլ տեսար Աիզիկ-Նաֆտոյան ներս կմտնե՞ր այցելելու երեխեքին կամ էլ սաստանան ներս կզցե՞ր Դվոսյա-Մալկային՝ մի կճուճ, մի պուտուկ, բաժակ կամ ափսե ձեռքին:

— Համտես արա, Ռոխելէ, մուրաբա է:

— Տե՛ր իմ աստված, ախր երևի մի հարյուր անգամ համտես արած կլինեմ, սկեսուրս:

— Ի՞նչ ես ասում, զավակս, աստծու սիրուն: Թե ինչ փչեց խելքիդ, որ էդպես բան ես ասում: Էդ մուրաբան իսկի չես էլ տեսել:

Եվ խեղճ Ռոխելէն ստիպված էր հարյուրմեկերորդ անգամ ճաշակելու մուրաբան, որ արդեն զզվեցրել էր նրան:

— Վա՛յ, աստծու կրակը թափվի գլխիս: Ո՛նց ես դեղնել, Ռոխելէ: Ախր կարելի՞ է էդքան քիչ ուտել: Չեմ հասկանում, թե ինչով ես ապրում: Եթե մի որևէ սկզբիցի քեզ տեսնի, ինձ անեծքաչոր կանի: Լա՛վ սկեսուր է, կասի, դրա լյարդը ցամաքի: Հարսին լավ է կերցնում, թոկը պետք է էդ տեսակ սկեսորոջ վիզը գցել, կասի: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Դե, գոնե մի բան կուտե՞ս, Ռոխելէ, թեկուզ ձևի համար:

— Ա՛խ, հանգիստ թողէք, սկեսուրս, աստծու սիրուն: Մինչև կոկորդս կուշտ եմ, տա աստված՝ ամբողջ կյանքումս այդպես լինի:

— Թեկուզ իմ խաթեր համար, աղջիկս: Երբեմն նույնիսկ սկեսորոջն էլ կարելի է զիջել: Պատկերացրու, որ ես քո հարազատ մայրն եմ: Թեկուզ մի պատահա՞ր էլ է, վերցրու, սիրտս իզուր մի դառնացնի:

Եվ Ռոխելէն ուժ գործադրելով մի պատահա՞ր էլ է վերցնում ու խեղդվելով կուլ տալիս: Եվ հոգեմաշ կերպով ծանր է այդ կյանքը նրա համար, չնայած շատ լավ գիտե, որ բոլորը սիրում են իրեն, անսահմանորեն նվիրված են, որ թեկուզ ծիծեռնակի կաթ էլ խնդրելու լինի, այդ էլ կճարեն, «եթե Ռոխելէն ուզում է, ուրեմն պետք է ճարել, ինչ խոսք կարող է լինել»:

Բայց մարդ արարածը ոչ եզ է, ոչ էլ սագ, որպեսզի բավարարություն գտնի միայն ուտելու մեջ: Քիչ ուրախություն կա այն բանում, որ կրնակալոխ հետևեն, որ աչք չկտրեն քեզանից, որ մաքրեն փոշին այնտեղից, ուր դիպել է ոտքդ, հետևեն յուրաքանչյուր պատահող, որ բերանդ ես տանում, անվերջ կանգնեն թիկունքիդ ետևում, խոնարհվեն սնարիդ՝ երբ քնած ես: Կարճ ասած, տխուր բան է, երբ ամբողջ կյանքը առանց մնացորդի տրված է լինում ուրիշների ձեռքը:

Ռոխելէին ճիշտ այդպիսի տխուր վիճակի մեջ գտավ այս պատմությունը, որ անում ենք մենք այստեղ, նա նույնիսկ չուներ մեկը, որին հայտներ տրտունջը: Ծնողները նրան համարում էին ամենաերջանիկ կինը: Նրանց նամակները արտահայտում էին հիացմունք ու գոհունակություն առ բարձրյալն աստված, որ արժանացրել էր իրենց դստերը մի այդպիսի երջանկության: Դստեր նամակները նույնպես փայլում էին այսպիսի բառերով, ինչպիսիք են «ուրախություն և լիություն», «բախտավորություն և հաջողություն», «փառք աստծու», «տա աստված, որ վերջն էլ բարի լինի», և ավարտվում էին անփոփոխ այսպիսի բառերով. «Ուրախության և բարեկեցության մեջ, սրտի բերկրանքով, ամե՛ն»:

Բայց Ռոխելէն հոգու խորքում վիրավորված էր ամուսնուց, որ նա հեռու էր մնում իրենից, նայում էր կնոջը կարծես բարձրից, ինչպես վայել է մի օրինավոր հրեա տղամարդու, մի՞ թե նա կարող էր իրեն թույլ տալ, իջնել այնքան, որ հավասարվեր կնոջը, դա կլիներ արտառոց, անբնական: Չի կարելի ասել, որ Մոյշե-Մենդլը չէր սիրում կնոջը: Ընդհակառակն, չափազանց նվիրված էր և սիրում էր անկեղծությամբ ու միամտությամբ: Երբ մի անգամ Ռոխելէն հիվանդացավ ու մի քանի օր պառկեց, Մոյշե-Մենդլը նրա անկողնու մոտից քայլ անգամ չհեռացավ, այն էր քաշում, հառաչում, հալումաշ լինում:

— Մեղքս գալիս է,— ասում էր նա մորը՝ արտասուքն աչքերին:— Պետք է բժշկին կամ բուժակին կանչել: Տեսնել չեմ կարողանում, թե ոնց է խեղճը տանջվում տաքության մեջ:

Հիվանդության երրորդ օրը, երբ Ռոխելէն սկսեց լավ զգալ, Մոյշե-Մենդլը, որ և ոչ մի բույս չէր հեռացել կնոջ մոտից, նստեց նրա սնարին. թվում էր, թե դա այն ամենահարմար պահն էր, որ պետք է մտերմիկ խոսեր իր սիրուն, քնքուշ Ռոխելէի հետ: Պետք է ճիշտն ասել, նրանք երկուսով էլ այդ շատ էին ուզում: Մոյշե-Մենդլը այնքան մոտիկ էր նստել, որ կնոջ գեղեցիկ գլուխը, որ միայն կիսով

չափ էր թաշկինակով ծածկված, հայտնվեց նրա ձեռքերի մեջ... Կնոջ խոշոր, երկնագույն աչքերը սպասումով լի նայում էին ամուսնուն — արդյոք չի՞ խոսի: Մոյշե-Մենդլը աչքերը խոնարհեց: Երբ Ռոխելեն հայացքը շրջեց, ամուսինը նայեց նրան, բայց հենց որ Ռոխելեն նորից նայեց, Մոյշե-Մենդլը դեմքը դարձրեց պատուհանին: Եվ այսպես, լուռ ու անխոս, ջահել ամուսինները երկար ժամանակ միմյանցից ծածուկ թռուցիկ հայացքներ էին փոխանակում: Այդ ամբողջ տարվա ընթացքում, սկսած հարսանիքի օրվանից, նրանց առաջին անգամն էր վիճակվում առանձնության մեջ խոսել միմյանց հետ: Բայց նրանցից որևէ մեկը սիրտ չէր անում, քանի որ չգիտեին էլ, թե ինչից սկսեն: Ռոխելեն որպես կին իրավունք ուներ սպասելու, որ առաջ ամուսինը խոսի, իսկ Մոյշե-Մենդլը, որպես մի օրինավոր ամուսին, սպասում էր, որ կինը սկսի: Եվ այսպես, երկար լուռ էին, սուկ հայացքներ փոխանակելով:

— Ի՛նչ, Մոյշե-Մենդլ:

— Ինչպես թե՛ «ինչ»:

— Ի՞նչ ես նայում ինձ:

— Ո՛վ է նայում:

— Էլ ո՞վ, եթե ոչ դու:

— Ե՛ս եմ նայում:

— Հապա ո՞վ:

Ռոխելեն դեմքը դարձրեց պատին, իսկ Մոյշե-Մենդլը ատամների մեջ առնելով մորուքի ծայրը, երկար-երկարնայեց կնոջը և ծանր հառաչեց: Վերջապես Ռոխելեն դարձավ ամուսնուն և որսաց նրա համառ հայացքը:

— Ի՞նչ պատահեց, Մոյշե-Մենդլ:

— Ինչ պիտի:

— Ինչո՞ւ ես հառաչում:

— Ո՞վ է հառաչում:

— Դու՛ իհարկե:

— Ե՛ս եմ հառաչում:

— Հապա ով է հառաչում:

Երիտասարդ գույզը նորից լռեց:

Մոյշե-Մենդլը ավելի մոտեցավ կնոջը, հազաց և սիրտ առնելով, ուզում էր ինչ-որ բան ասել:

— Հասկանո՞ւմ ես, Ռոխելե, իմ կարծիքով այն, ինչ դու ասում ես...

Բայց այդ միջոցին դուռը բացվեց և աղմուկով, հարայիքոցով սենյակ ընկավ Դվույա-Մալկան:

— Դե, իհարկե, ես չգիտեի՞, ինչ է, որ հնդկահավերը ամբողջ աման-չամանս ջարդուփշուր կանեն: Միրտը հանկարծ հնդկահավ ուզեց: Քեֆո՞ ո՞նց է, Ռոխելե: Գիտես քեզ ինչ կասեմ, աղջիկս, սիրտս

տալիս է, որ դու... էն ոնց են ասում... դողերոցք ունես: Ախր ասում էի՝ Ռոխելե, փողոցում գլխաբաց մի՛ կանգնի, փողոցում գլխաբաց մի՛ կանգնի: Ես նորից ուղարկեցի բուժակ Եկուսիելի ետևից: Ինքը, Աիզիկ-Նաֆտոլյան գնաց:

— Ինչո՞ւ եք իզուր անհանգստանում, սկեսուրս: Առանց բուժակի էլ կանցնի: Մի քիչ մրսել եմ:

— Մի քիչ, ո՞նց չէ: Էլ մի ասի, զավակս: Մի բռպե մոտոդ նստեմ:— Դվոսյա-Մալկան այթոռը հրեց մահճակալի մոտ և նստեց:

— Գիտես ինչ, մայրիկ, լավ կլիներ, որ դու խանութ գնայիր: Ես ինքս կնստեմ Ռոխելեի մոտ:

Նրա հայացքը հանդիպեց կնոջ հայացքին, և նա այնտեղ կարդաց.

«Ապրե՛ս, Մոյշե-Մենդը, խելացի վարվեցիր»:

— Բան ասացիր,— պատասխանեց Դվոսյա-Մալկան ավելի մոտիկ նստելով հարսին:— Խանութ գնալս էր պակաս:Ի՞նչ կա խանութում, որ չեմ տեսել: Եվ ի՞նչ, թող թույլ տրվի ասել, առևտուր կա հիմա: Իմ բոլոր թշնամիներին հենց էդ տեսակ առևտուր կուզենամ, ամբո՛ղջ սրտով կուզենամ: Լավ կլիներ, Մոյշե-Մենդը, որ դու գնայիր իմ ննջարանը և հորդ մահճակալին պատկերի, ախր ամբողջ գիշեր չես քնել:

Այսպես էին ապրում երջանիկ, ձեռքերն ու ոտքերը կապված երիտասարդ ամուսինները, որ ամեն ինչ գտնում էին պատրաստի, և ապրում անսահման նվիրված ծնողների խնամակալության տակ, որոնք մի վայրկյան անգամ թույլ չէին տալիս նրանց հանգիստ շնչել: Բայց ոչ ամուսինը, ոչ էլ նրա երիտասարդ կինը երբեք չեն տրտնջում, չեն գանգատվում մեկմեկու:

Մոյշե-Մենդը, համենայն դեպս, ավելի հեշտությամբ էր տանում այդ կապանքները: Նա երբեմն աչքի է անցնում թալմուդը, երբեմն մասնակցում հոր գործերին, հանդիպում իրեն հասակակից ընկերներին, որոնց հետ սինագոգում կամ շուկայում հանդիպելիս դեմ չէ ժամանակ անցկացնել: Մի խոսքով, Մոյշե-Մենդը այսպես թե այնպես ապրում էր իր կյանքով:

Իսկ Ռոխելեն ոնց որ իսկի չի էլ ապրում: Նա ուտում է, խմում, օրական քսան անգամ համտես անում մուրաբաները, որ եփում է սկեսուրը, ոչինչ չի անում, ոչ ոքի հետ չի հանդիպում: Դե հո Աիզիկ-Նաֆտոլյայի հարսը ծանոթություն չպիտի հաստատեր մի ինչ-որ «առաջին հանդիպողի» հետ, իսկ «առաջին հանդիպողն» էլ՝ Աիզիկ-Նաֆտոլյայի հարսի հետ: Աիզիկ-Նաֆտոլյան իրեն համարում էր Մազեպովկայի ամենահարուստ, ամենաօրինավոր մարդը, իսկ նրանց, որոնց նա համարում էր «առաջին հանդիպող», ընդհակառակն, իրենց են համարում Աիզիկ-Նաֆտոլյայից և՛ հարուստ, և՛ օրինավոր: Եվ այսպես օրեցօր, սկեսրանց տանը որպես մի գերի, թառամում էր Ռոխելեն... Նրա բան ու գործը միայն ուտելն ու քնելն է՝ իր առջև տեսնելով միայն անդադրուն սկեսրոջը, որը մուրաբայի բանկան կամ սրճամանը ձեռքին դետուրեն է վազում: Եվ այսպես՝ ամբողջ տարին ամեն աստծու օրը:

## XII

### Ռոխելեն երգում է

Այսպիսի հոգեվիճակում մենք գտանք Ռոխելեին Խաիմ-Բենցիոնի դստեր հարսանիքին, երբ նա հարսանեկան հանդիսավոր ճաշկերույթի սեղանից դուրս դուրս եկավ փողոց՝ մի փոքր թարմ օդ

շնչելու, ուր նրա աչքերի առջև իր ողջ միօրինակությամբ պատկերացավ շուկան՝ կրպակներով, աթոռակներին նստոտած առևտուր անող կանանցով, խոտով բարձած սայլը, իր մի գույգ անձոննի եզներով և տղան՝ հսկա մորթե գդակով:

Այդպիսի հոգեվիճակում Ռոխելեն վիճակվեց երկրորդ անգամ լսելու հռչակավոր Ստեմպեյնյուի արբեցնող նվագը:

Երաժշտություն լսելը դեռ փոքրուց էր սիրում Ռոխելեն, այն էլ ինչպե՛ս էր սիրում: Երաժշտությունը նրան միշտ էլ հրճվանք էր պատճառել: Բավական էր թեկուզ մեկ անգամ լսեր մի երգ, որ իսկույն ևեթ սովորել ու երգեր իր դուրալի, թավշային ձայնով: Ծնողները չէին կարողանում թաքցնել իրենց հրճվանքը:

— Էս աղջիկը տղամարդու գլուխ ունի,— ասում էին նրանք,— դեռ լավ է, որ աղջիկ է ծնվել և ոչ տղա, թե չէ աշխարհը տակնուվրա կաներ:

Հայրն ու մայրը, երևում է, զգում էին, որ իրենց աղջկա մեջ մի ինչ-որ ուժ է թաքնված, այն, ինչ մենք հիմա տաղանդ ենք անվանում: Բայց նրանց, իրենց նահապետական աշխարհայացքով թվում էր, թե Ռոխելեի կողմից զանազան երգերն ու եղանակները արագորեն ընկալելու և վարպետորեն կատարելու շնորհքը զուտ մտավոր ընդունակություն է: Նրա ուսերի վրա որպես թե տղամարդու գլուխ է: Հայտնի է, որ գլուխը մեզ մոտ ամենակարևոր դերն է կատարում: «Այ թե գլուխ է հա՛: Գլուխ եմ ասել հա՛» բառերը նրանց մոտ հնչում էին որպես բարձրագույն գովասանք...

Բայց ինչպես էլ որ եղած լիներ, մինչև տասնհինգ-տասնվեց տարեկան հասակը, Ռոխելեն երգում էր որպես ազատ թռչնակը. ականջը կրնկներ խասիդական մի նոր երգ կամ թե մի նոր եղանակ կորսար սինագոգում երգող կանտորից կամ երաժիշտներից, իսկույն ևեթ իր նուրբ, հստակ ձայնով կերգեր: Եվ հաճելի էր նրան լսելը:

Բայց երբ Ռոխելեն նշանվեց, մայրը նրան ասաց.

— Ֆի՛, աղջիկս, հերիք է ինչքան ծվլլացիր: Մի բուպե պատկերացրու, որ դու ապրում ես սկեսրոջո ու սկեսրայրիդ հետ և հանկարծ ոչ այս, ոչ այն սկսում ես նրանց մոտ ճովողել — ամո՛թ, խայտառակություն:

Ռոխելեն, իհարկե, իսկույն հասկացավ, թե դա որքան անպարկեշտ կարող էր լինել և ժամանակին ձայնն իրեն քաշեց: Բայց բոլորովին հրաժարվել երգից, նա չէր կարող, ուժերից վեր էր: Մեկ էլ տեսար, անկախ իր կամքից երգը դուրս էր թռչում կրծքից, դե վարժված էր, ախր: Ինչ կարող ես անել, երբ երգն ինքն իրեն գալիս է: Ինչպես կանգնեցնել առվակի վագքը, երբ չգիտես որտեղ են ակունքները... Նույնիսկ հարսանիքից հետո էլ Ռոխելեն հաճախ մոռանում էր ու սկսում էր երգել, ինչպես երգում էր աղջիկ ժամանակ: Այդպիսի բուպեների նա միանգամայն մոռանում էր, որ քիչ հեռու նստած է սկեսուրը և լսում է իր ամեն մի բառը:

— Վայ, աստված իմ: Աստծու կրակը թափվի գլխիս,— գոչում էր Ռոխելեն, հանկարծ նկատելով սկեսրոջո:

— Վնաս չունի, վնաս չունի, մեծ բան չի,— շտապում էր նրան հանգստացնել սկեսուրը, քիթը ուժեղ ֆսֆսացնելով և ցույց տալով որպես թև ոչինչ չի լսել: Հետո նա բանկայով մուրաբան մոտեցնում էր հարսին ասում.— «Հալա մի տես, Ռոխելե, վախենում եմ, թե հաղարջի մուրաբան շաքարակալի: Անցյալ տարի արդեն մի այդպիսի ձախորդություն պատահեց: Կես փութ մուրաբաս փչացավ:

Եթե Ռոխելեն ամաչում էր սկեսրոջից, ապա ամուսնու մասին խոսք անգամ լինել չէր կարող: Թեկուզ աշխարհի բարիքներն էլ տային, էլի չէր համաձայնի Մոյշե-Մենդլի մոտ երգել: Ամուսնու ներկայությամբ բերանը հանկարծ բանալ ու երգել, դա ուղղակի տգեղ ու անշնորհք մի բան էր Մոյշե-Մենդլը թերևս դեմ չէր լինի դրան. դա նույնիսկ բավականություն կպատճառեր: Նա մի քանի անգամ պատահաբար ականջ էր դրել կնոջ երգին և գիտեր, որ հրեշտակայինձայն ուներ: Բայց ինքնիրեն հարգող այդ ո՞ր տղամարդը օր ցերեկով կնաստի կնոջ կողքին ու կլսի, թե ոնց է նա երգում: Մի օրինավոր երիտասարդ տղամարդու համար դա անվայելուչ զբաղմունք կլիներ: Եթե վիճակվեր ինչ-որ կերպով, պատահաբար լսել, դա դեռ ոչինչ: Նման բաներ լինում էին, չնայած խիստ հազվադեպ: Այդպիսի ժամանակ նա երկար կանգնում էր դռան ետևում, բայց չէր կարողանում մի կարգին, սիրտը ուզածին չափ լսել: Վերջապես ներս էր մտնում բարձր հագալով, որ կնոջը հանկարծակիի չբերի, և միամիտ տեսք առած, որպես թե ոչ լսել է, ոչ տեսել:

Այսպես էր ապրում Ռոխելեն մի ամբողջ տարի՝ մեն ու մենակ, իրեն սիրող ու անսահման նվիրված բարի մարդկանց մեջ: Չի կարելի ասել, թե նա վատ էր ապրում, ինչպես և սխալ կլիներ պնդել, թե լավ էր ապրում: Նա օտար էր ասես յուրայինների մեջ, մենակ՝ հարազատների մոտ և լքված՝ իրեն սիրող մարդկանց շրջանում:

Գլուխը խոնարհած ձեռագործի վրա Ռոխելեն սովորության համաձայն մի որևէ երգ կերգեր, ու հանկարծ թախիծը գարնանամուտ էր լինում սրտում և հոգին թռչում էր այնտեղ, ուր անց էր կացրել մանկությունը:

*Կապույտ ծովով, անափ ծովով,  
Թնին տալով սլանում է  
Թռչնակը ոսկե:  
Իմ ողջույնը տար, թռչնակ սիրելի,  
Թռչնակ իմ բարի,  
Մորս անձկալի:  
Հովիտներով ու գետերով,  
Թնին տալով սլանում է  
Թռչնակը ոսկե:  
Իմ ողջույնը տար, տար ու հասցրու՝  
Թռչնակ իմ ոսկի  
Հայրիկիս բարի:*

Շատ հաճախ Դվոսյա-Մալկան ոտների ծայրերին քայլելով, թաքնվում էր հարսի սենյակի մոտերքում, որպեսզի լսի, թե նա ինչի մասին է երգում:

— Ինչ է պատահել, Ռոխելե: Հորդ ու մորդ կարո՞տն ես քաշում:

— Օհ, ոչ, սկեսուրս: չենց այնպես...— Ժպտալով ասում էր Ռոխելեն՝ սրբելով արցունքը:

### XIII

#### Ստեմպենյուի նամակը

Մենք Ռոխելեին թողեցինք այն պահին, երբ մտքերի մեջ խորասուզված, նայում էր շուկայի հրապարակին: Նրա մտքերը, սակայն, շուտով ընդհատվեցին, մեր կտրիճի՝ Ստեմպենյուի գալստյամբ:

Այդ երես առածը իսկույն նկատել էր, որ Ռոխելեն, որին աչքը կպել էր, վեր է կացել սեղանի մոտից: Մի քիչ սպասելով, նա հետևեց նրան և կանգնեց դռան մոտ, Ռոխելեի կողքին: Ստեմպեկյուն զրույց բացեց Մազեպովկայից, Ռոխելեի հարազատ ավանից՝ Սկվիրից, ուր ինքը գիտեր ամեն մի քարը: Հետո խոսք բացվեց Եգուպեց քաղաքից: Ստեմպեկյուն ինչ-որ լսել էր, որ Ռոխելեն այնտեղ եղել է: Ռոխելեն պատասխանում էր անփույթ և տասից՝ մեկին:

— Ասացե՛ք,— հարցրեց հանկարծ Ստեմպեկյուն,— ինչո՞ւ դուք ոչ շաբաթ օրը, ոչ էլ տոներին և ոչ մի անգամ դուրս չեք գալիս Բերդիչև փողոցը զբոսանքի: Համարյա մեկ տարի է և թերևս ավելի, ինչ ապրում եք այստեղ, բայց ոչ մի անգամ չեք երևացել Բերդիչև փողոցում: Եվ քաշվել եք այսպիսի մի հեռավոր անկյուն, համարյա ավանի ծայրը: Պատկերացնո՞ւմ եք, ես նույնիսկ չգիտեի, թե դուք այստեղ եք ապրում: Միայն երեկ իմացա, երբ ձեզ հարսանիքում տեսա... Ցանկացա ձեզ հետ խոսել, բայց հնարավոր չեղավ: Դուք մի՞թե չգիտեք, թե ինչ են ներկայացնում իրենցից մեր հրեական ավանները: Անմիջապես կսկսեն քչփչալ... Լսեցե՛ք ինձ, շաբաթ օրը ցերեկով եկեք Բերդիչև փողոցը զբոսանքի... Ամբողջ ավանը այնտեղ է լինելու... Անպայման եկեք, լսո՞ւմ եք: Ի սեր այն ամենի, ինչ սուրբ է, շաբաթ օրը ցերեկով, Բերդիչև փողոցը...

Ռոխելեն չէր հասցրել պատասխանել, երբ նրա մոտ, ասես գետնի տակից բուսնեց սկեսուրը: Նա նկատելով, որ հարսը սեղանի մոտ չէ, անմիջապես դուրս էր թռել հարսին գտնելու: Ռոխելեին տեսնելով Ստեմպեկյունի կողքին, հավատարիմ սկեսուրը սկզբում մի քիչ զարմացավ. «Էդ ո՞նց պատահեց, որ սրանք հանկարծ հայտնվեցին իրար մոտ»: Բայց Ստեմպեկյուն, որ տիրապետում էր ամենադժվարին հանգամանքներում ճար գտնելու և դուրս պրծնելու հմտությանը, իսկույն ևեթ Դվոսյա-Մալկայի հետ զրույց սկսեց:

— Մենք այստեղ խոսում էինք Սկվիրի ցաղիկի հարսանիքից: Ձեր հարսը դեռ փոքր երեխա էր, երբ ես նվագում էի ցաղիկի դստեր հարսանիքին: Նա նույնիսկ չի էլ հիշում այդ հարսանիքը:

— Դե, պարզ է, որտեղի՞ց հիշի,— պատասխանեց Դվոսյա-Մալկան:— Իսկ ես, ա՛յ լավ եմ հիշում: Մենք էնտեղ էինք ամուսնուս հետ և գիշերեցինք դաշտում, քանի որ ավանում նեղվածք էր:

— Նեղվա՞ծք: Այն էլ ի՞նչ նեղվածք... Ա՛յ, հիմա ես ձեզ ավելի մանրամասն կպատմեմ:

Եվ Ստեմպեկյուն Դվոսյա-Մալկային այս ու այնտեղից մի անվերջանալի պատմություն քոքեց:

Այդ ընթացքում Ռոխելեն աննկատելի ներս մտավ և գնաց նորապսակների մոտ:

Մենք արդեն առաջ էլ էինք նկատել, որ Ստեմպեկյուն նրանցից էր, որոնք ճարպիկ լեզու ունեն: Այստեղ պետք է հիշել նրա մի այլ տաղանդի մասին ևս: Նա, ինչպես ոչ ոք, կարողանում էր խոսել տարեց կանանց հետ, լեզվին տա սրանից, նրանից, գլուխները յուղել: Այդ գործում նա մեծ վարպետ էր: Առաձն ասում է՝ կախարդությունը ուրիշից սովորած կախարդն ավելի վտանգավոր է, քան ի բնե կախարդը: Ստեմպեկյունի լեզուն ուրիշ բան էր, չէ՞ որ նա մի փայլուն դպրոց էր անցել: Բայց այդ մասին հետո:

«Ի՛նչ լկտիություն,— վրդովվել էր Ռոխելեն:— Ինձ հրավիրում է Բերդիչև փողոցը: Տես թե ինչ է խելքին փչել: Ոչ երբևէ, քան շաբաթ օրը, ցերեկով, Բերդիչև փողոցում: Եվ դա հանուն այն ամենի, ինչ սուրբ է: Ինչպե՛ս է համարձակվում: Միայն երաժիշտը կարող է իրեն թույլ տալ այդպիսի բան»:

Եկավ շաբաթը:

Ճաշից հետո, երբ սկեսուրը, սկեսրայրը և Մոյշե-Մենդլը ինչպես միշտ, ընկողմանեցին վայելելու շաբաթ օրվա քունը, որին անհիշելի ժամանակներից հրեաները երանությամբ անձնատուր են լինում, Ռոխելեն սովորականի նման նստեց լուսամուտի առջև և կամացուկ երգելով, նայում էր փողոցի անցողաբաժին: Նրա հայացքի առջևով ինչպես ամեն անգամ շաբաթ օրերին, մի պահ հայտնվելով, ապա անհետանալով անցնում էին կոկիկ սանրված, ալ ու կապույտ ժապավենները հյուսքերին կապած աղջիկներ, նորաձև գույնզգույն հագուստներով, ձեռնոցներով և լաքե նոփ-նոր ճոճոտան երկարաճիտք կոշիկներով: Նրանք բոլորը գնում էին «զբոսանքի», այնտեղ, Բերդիչև փողոցը: Նրանք այնտեղ միմյանց առաջ կպարծենան ալ ու կապույտ ժապավեններով, իրենց գույնզգույն զգեստներով: Ամոթխածորեն խոնարհած թարթիչների տակից թաքուն հայացք կնետեն նանկինյան տաբատ հագած, փայլուն հովարավոր կարտուզներով սիրուն, ջահել տղաներին: Եվ կշիկնեն այտերը, կտրոփեն սրտերը: Մի խոսքով, Բերդիչև փողոցում ուրախ կլինի:

Այդ ամենը լավ ծանոթ էր Ռոխելեին, և ինչու պիտի ծանոթ չլիներ: Դեռևս ոչ վաղուց ինքն էլ էր ծամերին ալ ու կապույտ ժապավեններ հյուսում և ընկերուհիների հետ շաբաթ օրերը զբոսանքի գնում... Իսկ հիմա...

Ռոխելեի հայացքը սահեց սենյակով, բոլորը քնած են ախորժակով խոնփացնելով: Բոլորը, բոլորը: Ինքը միայնակ տանջվում է այստեղ, կարծես ոչ թե կենդանի մարդկանց մեջ է ապրում, այլ մեռելների թագավորության մեջ: Գլուխը հենելով ձեռքերին, նա խոհերի գիրկն է ընկնում: Նրա միտքն է գալիս մի հին երգ, որ երգել էր պատանության օրերին:

*Միշտ մենակ ու մենակ  
Որպես համր մի քար,  
Մեկը չկա հետը խոսեմ,  
Մեկը չկա մի բան ասեմ,  
Ինձ հետ եմ ես խոսում:  
Մեն մենակ տանջվում՝  
Դե որ չկա ոչ ոք...*

— Շնորհավո՛ր շաբաթ:

Ռոխելեն գլուխը բարձրացրեց և տեսավ... Ստեմպենյուին:

— Շնորհավո՛ր շաբաթ, ասում եմ:

«Մա էլ նոր բան է: Ինչպե՞ս լույս ընկաք այստեղ», — քիչ էր մնացել հարցներ Ռոխելեն, ետ ընկրկելով պատուհանից.

— Դուք ինձ չլսեցիք, զբոսանքի չեկաք Բերդիչև փողոցը, ձեզ սպասելով, իզուր էի աչքս ճամփին պահում: Ես ուզում էի... ինձ հարկավոր է... Ահա՛, կարդացեք...

Ստեմպենյուն նրան տվեց քառաձալ մի թուղթ և անհետացավ:

Ռոխելեն երկար ու երկար թուղթը պահեց ձեռքում, չիմանալով, թե ինչ անի և չհասկանալով, թե ինչի համար է: Վերջապես զարմանքից ուշքի եկավ և բացեց: Դա ձայնանիշներ գրելու մի մեծ թուղթ էր, որի վրա խոշոր, հրեական տառերով, մեծաթիվ սխալներով գրված էր.

«Իմ թանկագին երկնային հրեշտակ: Երբ ես առաջին անգամ տեսա քո լուսեղեն պատկերը, իմ գույգ աչքերին պայծառություն իջավ և թեժ կրակ բորբոքվեց իմ սրտում՝ քո հանդեպ ունեցած սիրուց: Իմ հոգին, իր երկնային աչքերով հենց որ տեսավ քո լուսեղեն պատկերը, հմայվեց: Դու իմ հոգու հոգին ես և իմ կյանքի կյանքը: Գիշերները քուն չունես և քեզ եմ տեսնում երազում, առանց քեզ պայծառ արևը խավարում է իմ աչքում, ես սիրում եմ քեզ, ինչպես իմ քաղցր կյանքը, և ես մեռնում եմ իմ ողջ էությանը, հալումաշ լինում քեզ անվերջ տեսնելու, անվերջ սիրելու, անվերջ քեզ մոտ լինելու ցանկությամբ: Մնամ քեզ հավիտյանս սիրող, քեզ կարոտող, ախ քաշող և հեռվից քո չքնաղ աչքերը համբուրող՝

**Ստեմպենյու:**

## XIV

### «Հերոսուհուց» նորից «հերոսին»

Մի առժամանակ թողնենք մեր «հերոսուհուն» և վերադառնանք «հերոսին»: Մոռանանք Ռոխելեին և խոսենք Ստեմպենյուից:

Ճիշտ է, այն նամակը, որը մենք հենց հիմա բերեցինք բառ առ բառ, առանձնապես չէր փայլում: Բայց ի՞նչ կարող ես անել: Ստեմպենյուն ուներ և՛ հաճելի արտաքին, և՛ քաջություն, և՛ մի այնպիսի երաժիշտ էր, որի նմանը քիչ կճարվի, մի խոսքով, ամեն ինչում հաջողակ էր, բայց... գրելու մեջ շնորհք չուներ: Նրա հանգուցյալ հայրը, Բեր-Բասը, շատ շուտ համոզվել էր, որ իր որդին երաժշտության հանդեպ մեծ ձգտում ունի, իսկ գիտությունների նկատմամբ՝ ոչ մի: Սովորել չէր ուզում, կուզես մորթիք, կուզես վառիք: Եվ հայրը նրան շուտ ընտելացրեց գործին՝ նրա հետ փորձելով բոլոր երաժշտական գործիքները և վերջապես կանգ առավ ջութակի վրա: Բերլ-Բասը, որը մի տուն լիքը տղա ուներ և բոլորն էլ երաժշտական ձիրքի տեր, հավատացնում էր, որ Ստեմպենյուն իր տաղանդը ժառանգել էր պապից՝ Շուլիկ փողիարից (որը, ասում են, ծանոթ էր եղել հռչակավոր ջութակահար Պագանինիի հետ): Տասներկու տարեկան հասակում Ստեմպենյուն արդեն կարողանում էր հարսնացուին «բազմեցնել» և կատարել այն ամենը, ինչ նվագում էին հրեական հարսանիքներում:

Զարմանալի չէ, որ Բերլ-Բասը իր գավակներից ամենից շատ սիրում էր Ստեմպենյուին: Նրա տղաները բոլորն էլ ցնցոտիների մեջ էին և նույնիսկ, պատահում էր, ման էին գալիս համարյա մերկ: Չնայած հայրը խստաբարո հրամանատարի նման հաճախ էր քաշում իր սրտի հատորի ականջներից, ձաղտում ու մահացու ծեծ տալիս, բայց իր հոգու խորքում հպարտանում էր տղայով, համարելով նրան տան զարդը, թանկագին մարգարիտ, իր ծերության օրերի մխիթարությունը: Մատնացույց անելով Ստեմպենյուին, նա հաճախ երաժիշտներին հատուկ իր լեզվով ասում էր.

— Տեսնո՞ւմ եք, թոկից փախածներ, էդ շան լակոտին: Ծերությանս օրերում նա է ինձ մի կտոր «փափա» տալու: Հավատացեք, նրա հետ կարելի է հույսեր կապել:

Բայց ծերունի Բերլ-Բասը ի վիճակի չէր զուտ պահելու սիրելի գավակին:

Տասնհինգ տարեկան դարձած-չդարձած, Ստեմպենյուն երեք ռուբլիանոցը գրպանում, մի հին ջարդված ջութակ թևի տակ, դուրս եկավ ճամփորդելու աշխարհով մեկ: Մտնելով զանազան

երաժշտական խմբեր, նա թափառեց անթիվ, անհամար քաղաքներ ու ավաններ: Մի տարուց ավելի չէր կարողանում մնալ նույն տեղում: Նրա հոգին ձգտում էր անվերջ հեռուները — Մազեպովկայից՝ Ստեպովկա, Ստեպովկայից՝ Կորեյ, Կորեյից՝ Բալտու, Բալտուից՝ Ստարոկոնստանտինով, այստեղից՝ Բերդիչև: Այսպես նա հասավ մինչև Օդեսա: Օդեսայից դարձավ դեպի ետ և նորից շարունակեց ճամփորդել փոքրիկ քաղաքներով ու ավաններով, ուր հեշտ էր փայլել և փառք ձեռք բերել:

Եվ նա արժանացավ իր նպատակին, որտեղ որ հայտնվում էր, նրա հոչակը իրենից շուտ էր տեղ հասած լինում: Ամենուր հնչում էր Ստեմպենյուի անունը, որ թափառում էր աշխարհով մեկ և որին հավասար ջութակահար չկար: Ուստի միանգամայն հասկանալի էր, թե ինչպիսի իրարանցում էր բարձրանում այս կամ այն ավանում Ստեմպենյուի և իր «կապելլայի» հայտնությամբ: Տասնութ տարեկան հասակում, պատկերացնում էր, նա արդեն ուներ իր խումբը և նվագում էր միայն հարուստ հարսանիքներում, հետզհետե սովերի մեջ թողնելով և դուրս մղելով մյուս բոլոր նվագախմբերին — «Կոնոպասոյան երաժիշտներին», որ նույնպես մեծ անուն ունեին, «Մմեյանսկի խմբին», «Վիննիցայի», «Շարգորդի» և շատ ուրիշների, որոնց փառքը որոտում էր աշխարհով մեկ:

Հասկանալի է, որ երաժիշտներից խլելով մի կտոր հացը, Ստեմպենյուն չէր կարող նրանց մեջ բարեկամներ շահել և դրա համար էլ քիչ անե՞ծ չէր թափվում նրա գլխին: Բայց երեսանց բոլորը շողոքորթում էին, չնայած հոգու խորքում հարգանք էին տածում դեպի նա: Ամեն մի երաժիշտ իրենհաշիվ էր տալիս, որ բավական է Ստեմպենյուն ձեռքն առնի ջութակը, որ իրենք բոլորը ասպարեզից հեռանան:

Հայտնի է, որ երաժիշտ մարդիկ ի սկզբանե անտի սեր ունեն դեպի ամեն տեսակի ծայրահեղությունները: Նրանց շրջանում դուր կլսեք զարմանալի պատմություններ, լեզենդներ ու աներևակայելի փչոցներ: Հենց Ստեմպենյուի մասին էլ էին չտեսնված բաներ հորինում, օրինակ, ասում էին, թե նրա ջութակով ինչ-որ մի ժամանակ նվագել է ինքը՝ Պագանինին:

Երբ ավանում սկսում էին խոսել Ստեմպենյուի գալստյան մասին, տեղական երաժիշտների զայրույթին չափ ու սահման չէր լինում: Իսկ նրանց կանայք անե՞ծքի այնպիսի կարկուտ էին թափում նրա հասցեին, որ աստված հեռու տաներ:

— Կլոր տարին տանջվում ես, տրորվում, կիսաքաղց օր մթնեցնում, պարտքերի մեջ խրվում, տան եղած-չեղածը գրավ դնում, թուրք կուլ տալով ինքդ քեզ խաբում ու անվերջ սպասում, թե «Էլուլեի» մեկին<sup>7</sup> հարուստի տանը հարսանիք է լինելու: Բայց ա՛ն քեզ: Մատանեն քշում է բերում աստված գիտի թե ում, մի դև, մի վիուկ, մի ինչ-որ Ստեմպենյու և էդ անբանը թոցնում է հացիդ վերջին պատառը, ա՛յ տեսնեմ դրան թիքա-թիքա լինի, յոթանասունութ կտոր լինի:

Բայց իսկական թշնամիներ Ստեմպենյուն չունեցավ ոչ մի տեղ: Նա ձեռքը բաց մարդ էր, այնպիսիներից, որոնց ասում են «մեր տղա»: Երբ վերջանում էր հարսանեկան հանդեսը, նա հավաքում էր տեղական երաժիշտներին, փառավոր ճաշկերույթ տալիս՝ չխնայելով ոչ գինին, ոչ ուտելեղենը, իսկ հրաժեշտ տալիս նվերներ էր բաժանում նրանց երեխեքին:

— Գիտե՞ք ինչ,— ասում էին հետո երաժիշտների կանայք միմյանց,— մարդու մասին չի կարելի դատել, երբ նրան մոտիկից չգիտես:

Բայց Ստեմպենյուն մի առանձին տրամադրվածություն էր վայելում երաժիշտների աղջիկների մոտ, որոնց հետ նշանվում էր համարյա յուրաքանչյուր ավանում: Քիչ սևորակ ու երկնավուն աչքեր

<sup>7</sup> Հրեական կրոնական օրացույցի տասնմեկերորդ ամսվա (օգոստոս-սեպտեմբեր) անունը:

չէր կախարդել նա: Երբ Ստեմպենյուն աղջկան երդվում էր, թե նրա սիրուց խելագարվում է, դա իսկապես, որ այդպես էր, քանի որ այդ բուսական նա իսկապես սիրահարված էր լինում (երաժիշտների աղջիկները մեծ մասամբ հազվագյուտ գեղեցկուհիներ են լինում): Բայց Ստեմպենյուն բավական էր ոտքը քաշեր ավանից, որ նրա սերը գոլորշիանար ու ցնդեր ինչպես ծուխ: Գալով մի ուրիշ ավան նա նորից սիրահարվում էր մի ինչ-որ երաժիշտի աղջկա, նորից էր երդվում, թե սիրում է մինչև մահ ու գերեզման, համբուրում նրա ոտնահետքերը, հավատացնում, թե առանց նրա կյանք չունի և իր դիցուհուն շռայլորեն նվիրաբերում սիրտը: Հետո հրաժեշտ էր տալիս ու մեկնում... Իսկ նոր տեղում, նորից նույն պատմությունը...

Չի կարելի ասել, թե այդ սիրային պատմությունները միշտ բարեհաջող էին վերջանում... հարսնացուի համար: Ճիշտ է, շատ աղջիկներ հենց նույնպիսի արագությամբ էլ մոռանում էին իրենց գայթակղիչին, ինչպես Ստեմպենյուն՝ նրանց, և բարեհաջող ամուսնանում մի ուրիշ երաժիշտի հետ: Բայց քիչ չէին նաև այնպիսի համառ աղջիկները, որոնք սիրահարված լինելով այդ խելառին, հավատում էին և սպասում, որ այսօր թե վաղը կհայտնվի և իր սրտի ընտրյալին պսակի կտանի: Խեղճ աղջիկները հավվում մաշվում էին ինչպես մոմը: Եվ այն ժամանակ, երբ Ստեմպենյուն մի մութ, փոքրիկ սենյակում համբուրվում էր մի ինչ-որ երաժշտի աղջկա հետ, մի ուրիշ հեռավոր, ետ ընկած ավանում, նրա նախկին հարսնացուներից մեկը դառն արցունքներ թափելով ողբում էր իր բախտը, զանգատվելով, որ Ստեմպենյուն մոռացել է իրեն և այլևս երբեք, երբեք չի հիշելու:

Համարյա ամեն մի քաղաքում, որով անցել էր Ստեմպենյուն, կարելի էր գտնել մի այդպիսի դժբախտ հարսնացու: Բայց արի տես, որ ուրախությունը տևական չէ և նրան հաջորդում է բուքն ու բորանը: Պատահում է այնպես ես սայթաքում, որ այլևս չես կարողանում բարձրանալ: Սայթաքեց նաև Ստեմպենյուն և անսպասելիորեն ընկավ մի այնպիսի փորձանքի մեջ, որ երագում էլ անգամ չէր տեսել: Թշվառականը ստիպված եղավ ամուսնանալ, չնայած մոլի թշնամի էր ամուսնության:

## XV

### Ստեմպենյուի անսպասելի ամուսնությունը

Մեկ անգամ Ստեմպենյուն իր նվագախմբի հետ եկավ Մագերովկա և տեղական երաժիշտների հետ իրար ետևից երեք հարսանիքում նվագեց: Տեղացի երաժիշտները ստիպեցին, որ իրենց էլ վերցնի իր նվագախմբի մեջ, հակառակ դեպքում սպառնում էին նշանավոր երաժիշտի «կողերը դգել»: Եվ անկասկած սպառնալիքը ի կատար կածվեք, եթե Ստեմպենյուն, բնավորությամբ զիջող և բարի լինելով, չհամաձայնվեր ընդունել նրանց առաջարկը, ըստ որում, ընկերական հիմունքներով:

Քանի որ մի հարսանիքից մյուսը մի քանի օր ժամանակ կար, Ստեմպենյուն անգործությունից սկսեց սիրաբանել ջութակահար: Շախկայի դստեր հետ, որ քսաներկու տարեկան, թուխ դեմքով, գիրուկ աղջիկ էր: Ստեմպենյուն, ինչպես միշտ, լրջորեն սիրահարվեց, գրկում էր պաչպչում, նվերներ առնում, մի խոսքով, իրեն պահում էր մի իսկական փեսացուի նման: Իսկ երբ վրա հասավ մեկնելու ժամանակը, թխադեմ աղջիկը (անունը Ֆրեյդլ էր) համառորեն պահանջեց՝ առանց ձգձգելու նշանվել, ինչպես որ վայել է օրինավոր մարդկանց: Ստեմպենյուն սովոր չէր այսպիսի վճռականության, նա փորձեք էր անում դուրս պրծնել և ինչ-որ անկապ բաներ էր թոթովում, բայց ոչինչ չօգնեց, թեկուզ ինչ ուզում էս արա: Ֆրեյդլը նրանցից էր, որոնց ասում են «աղջիկ-կազակ». նա այնպես էր բուռը հավաքել Ստեմպենյուին, որ դուրս պրծնել չհաջողվեց և ստիպված համաձայնվեց՝ «մի բարի ժամի» նշանվել: Երաժիշտները անվանի փեսացուի պատվին մի

փառահեղ քեֆ սարքեցին: Երեք օր շարունակ ջութակահար Շաիկայի տանը խրախճանքը չէր դադարում՝ ընդհուպ մինչևայն բուպեն, երբ թանկագին փեսացուն և հարգարժան հյուրերը մեկնեցին մի ուրիշ ավան:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Մազեպովկայից հազիվ ոտքը դուրս դրած, Ստեմպենյուի մտքից ակնթարթորեն թռան և՛ նշանդրեքը, և՛ թխադեմ աղջիկը, և՛ մնացած բոլորը: Նա առաջվա նման գնում էր, շրջում ավանից ավան, նվագում հարսանիքներում, ամեն տեղ սիրային պատմություններ սարքում և քեֆն ուզածին չափ կյանք անում... Բայց հանկարծ... Էհ, ինչ անես, որ արևի տակ ոչ մի բան հաստատ չէ: Ամեն ինչ կարճատև է: Հասավ նաև Ստեմպենյուի ժամանակը, երբ նա իր անցյալի մեղքերի համար պետք է հաշիվ տար: Մի մեծ դժբախտություն պատահեց, որ վերջ դրեց նրա ազատ, անկախ ջահելությանը: Ապա լսեցե՛ք, թե ինչպիսի փորձանքի մեջ ընկավ նա:

Մեկ անգամ Մալոռոսիայի քաղաքներից մեկում նվագում էր մի հարսանիքում: Նա հենց նոր էր սիրավեպ սկսել փողհար Գերշի դստեր հետ, որ մի շատ սիրունիկ աղջիկ էր: Ստեմպենյուն արդեն հասցրել էր վստահացնել, որ անպայման կամուսնանա նրա հետ, երբ հանկարծ հայտնվեց անվերջ քունը գլուխը Մեխչա-դիոլչին և խորամանկորեն աչքով անելով, քթի միջով գոմոաց:

— Հապա մի եկեք, Ստեմպենյու: Այնտեղ, տանը ձեզ մի ինչ-որ աղջիկ է սպասում:

— Աղջի՞կ: Ի՞նչ աղջիկ:

— Թխադեմ, կանաչ աչքերով:

Ստեմպենյուն ներս մտավ տուն և տեսավ թխադեմ աղջկան՝ ջութակահար Շաիկայի դստերը, իր սրտի ընտրյալ հարսնացու Ֆրեյդլին:

— Ինչ էս այդպես ինձ նայում, Ստեմպենյու: Չե՞ս ճանաչում: Տեսեք թե ո՞նց է աչքերը բացուխուփ անում, ո՞նց է գննում: Ախր այդ էս եմ, Ֆրեյդլը, քո հարսնացուն, ջութակահար Շաիկայի աղջիկը...

— Հը՞: Գիտեմ: Դե, իհարկե: Ոնց չեմ ճանաչում: Պարզ է, որ ճանաչում եմ: Բայց որտեղից լույս ընկար, Ֆրեյդլ: Եվ ինչպես հայտնվեցիր այստեղ:

— Ինչպես հայտնվեցի՞: Շատ պարզ: Մեփական ոտքերով: Որտեղից հայտնվեցի՞: Տնից:

— Այ թե ի՛նչ: Դե ասա տեսնեմ, ի՞նչ նորություն կա: Վաղո՞ւց էս տնից դուրս եկել:

— Մեզ մոտ ի՞նչ նորություն պիտի լինի, Ստեմպենյու: Ամեն ինչ նույնն է: Վաղուց եմ տնից դուրս եկե՞լ: Միգուցե վեց շաբաթ կամ յոթ: Ամբողջ աշխարհը ոտքի տակ ենք տվել: Ուր որ գնում ենք, ամեն տեղ նույն պատասխանն են տալիս: Այստեղ էր, բայց գնացել է: Հազիվհազ հետքդ գտանք: Դե, ոնց էս, Ստեմպենյու:

— Հը՞: Ո՞նց եմ: Վնաս չունի... ո՞նց պիտի: Գնանք, Ֆրեյդլ, ինչ ենք կանգնել մնացել... — Հանկարծ խոսքը կտրելով ասաց նա, նկատելով, որ երաժիշտները շրջապատել են իրենց ու գնում են թխադեմ, սև մազերով և կանաչ աչքերով աղջկան:

— Է՛հ, ինչ կա որ, կարելի է և գնալ,— համաձայնեց Ֆրեյդլը:

Ստեմպենյուն ուսերին զգեց ամառային վերարկուն, վերցրեց ձեռնափայտը և հարսնացուի հետ դուրս եկավ: Նայելով շուրջը և համոզվելով, որ այստեղ ոչ ոք չէր կարող իրենց լսել, ազդեցիկ տոնով ասաց.

— Ասա խնդրեմ, ինչ է նշանակում այս ամենը:

— Այսինքն՝ ոնց թե «ի՛նչ է նշանակում այս ամենը»:

— Ինչո՛ւ ես եկել:

— Հիացե՛ք խնդրեմ, ոնց է միամիտ ձևանում: Ո՛չ տեսել է, ո՛չ լսել:

— Լսի՛ր, Ֆրեյդլ,— բարկացած քրթմնջաց Ստեմպեկյուն:— Ես չեմ սիրում, երբ ինձ հետ այդպիսի խաղեր են խաղում: Ես հարցնում եմ, ի՞նչ բան ունես այստեղ, իսկ դու կատակի ես տալիս:

Ֆրեյդլի աչքերի մեջ մի չար կրակ բռնկվեց: Ձեռքով թիկունքի ետևը տանելով երկար, սև հյուսքերը, ինքն էլ լրջացավ:

— Դու ուզում ես իմանալ, թե ես ի՛նչ բան ունեմ այստեղ: Եկել եմ քեզ մոտ, Ստեմպեկյու:

Նշանդեքի ժամանակ դու ինձ խոստացար ոչ ուշ, քան երկու շաբաթից նամակ գրել և հարսանիքի օրը նշանակել: Մենք սպասեցինք, սպասեցինք, երկու ամսից ավելի սպասեցինք, բայց քեզինց ո՛չ ձայն, ո՛չ ծպտուն: Այդ ժամանակ մենք խելք-խելքի տվեցինք և որոշեցինք ճանապարհ ընկնել ու որոնել, ինչպես ասում են երեկվա օրը: Ուտքի տակ տվեցինք համարյա ամբողջ աշխարհը և աստծու օգնությամբ հազիվհազ հաջողվեց...

— Ասա ինձ, Ֆրեյդլ, այդ ովքեր են «մենք»-ը: Ես անվերջ լսում եմ՝ «մենք» հա՛ մենք: «Մենք սպասեցինք», «մենք ճանապարհ ընկանք»...

— Մենք էլի, ես և մայրս:

— Քո մա՛յրը,— գոչեց Ստեմպեկյուն միանգամայն ջլատված:— Քո մայրը այստե՞ղ է: Ի՞նչ գործ ունի այստեղ:

— Կամաց, Ստեմպեկյու, ի՞նչ ես գոռում: Հապա դու ինչ էիր կարծում: Աղջիկը մեն ու մենակ հո չի՞ կարող հեռու ճամփա գնալ: Դու ի՞նչ ես կարծում:

— Ես ի՞նչ գործ ունեմ այդտեղ: Ինչ ընդհանուր բան կա իմ և քո մոր միջև:

— Նա քեզ խնամի է գալիս, իսկ որոշ ժամանակ հետո, գոքանչդ կլինի:

— Դու երևում է, իսկապես մտքումդ դրել ես ինձ հետ ամուսնանալ:

— Հապա ինչ էիր կարծում, Ստեմպեկյու: Կատակնե՞ր անել:

— Հիմար բաներ ես ասում:

— Ինչու է հիմար:

— Շատ պարզ, իսկի մտքովս էլ չի անցնում ամուսնանալ:

Ֆրեյդլը մի պահ կանգ առավ, շեշտակի նայեց Ստեմպեկյունի աչքերի մեջ, հետո չորս կողմը աչք ածելով շնջաց.

— Լսի՛ր, Ստեմպեկյու, դու մի կարծիր, թե հանդիպել ես այնպիսի մեկին, որը թույլ կտա մատների վրա իրեն խաղացնել: Ես քեզ շատ լավ եմ ճանաչում: Ես գիտեմ, որ դու խաբեբայի մեկն ես և սիրում ես ամեն շաբաթ մի նոր հարսնացու ունենալ, բայց վնաս չունի, ինչ որ սկիզբ ունի, վերջ էլ

կունենա... Բնավորությամբ բարի ես, քո սիրտը մեղրամուխից էլ փափուկ է, ինքդ էլ սիրուն, հատը չկա, հրաշալի էլ ջուֆակ ես նվագում ու կնոջդ միշտ էլ կարող ես ապահովել: Դրա համար էլ քեզ հավանում եմ, դրա համար էլ ուզում եմ քեզ հետ ամուսնանալ և այն էլ շատ շուտով: Իսկ որ կողիդ ես ընկել ու հակառակվում, մեկ է, օգուտ չունի, գուր ես չարչարվում, Ստեմպենյո՛ւ, հավատա՛ : Կռացիդ դեպի ինձ, ականջիդ բան պիտի ասեմ:

Եվ թխադեմ Ֆրեյդը մի այնպիսի բան շնջաց նրա ականջին, որ Ստեմպենյուն ամբողջ մարմնով դողաց: Նա արձանի նման կանգ առավ փողոցի մեջտեղը և ոչ մի խոսք չկարողացավ ասել: Հենց այդ միջոցին, միանգամայն ժամանակին վրա հասավ շիկամազ Մեխյա-դեռոյի և ասաց, որ տեղի հարուստներից մեկը կանչում է նրան՝ հարսանիքին նվագելու համար պայմանավորվելու:

Ստեմպենյուն գլխով հրաժեշտ տվեց Ֆրեյդին և խոր հառաչելով ասաց.

— Մենք դեռ կտեսնվենք, Ֆրեյդ:

— Հապա ո՞նց: Իհարկե կտեսնվենք,— պատասխանեց Ֆրեյդը գոհունակությամբ, թանկագին փեսային հրաժեշտ տալով:

Նրանք, ովքեր այդ օրը ներկա էին եղել հարսանիքում, զարմացել էին Ստեմպենյուի գունատությունն ու ցրվածությունը տեսնելով... Կարծես ուրիշ մարդ լիներ, նրանից լավին հողն են դնում: Նրա խիռը, նրա կրակոտ խառնվածքը անհետ չքացել էին: Այո՛, սիրտն զգում էր, որ եկել էր ազատության վերջը, որ այլևս չի ճախրելու ազատ թռչնակի նման: Ստիպված է հագնել ծանր լուծը և դա՝ ընդմիշտ, ամբողջ կյանքում: Մնաք բարո՛վ, ամռան պայծառ իրիկուններ, մնաք բարո՛վ, զբոսանքներ մարզագետնում ու դաշտում՝ աղջիկների հետ: Մնաք բարո՛վ, անուշաբույր, երկար հյուսքեր, խառնված խոպոպներ, թուխ կախարդիչ աչքեր: Մնաս բարո՛վ, արծաթե լուսնյակ...

Ստեմպենյուն դեռ էլի փորձեր արեց գլուխը պրծեցնել ամուսնությունից. նա թաքտում էր ինչպես ձուկը ցանցի մեջ, կռիվ տալիս վերջին ուժերը լարած, գործի դրած բոլոր խորամանկությունները: Բայց այդ բոլորը օգնում էին նրան այնպես, ինչպես հանգուցյալին՝ քրտնելը: Ֆրեյդն ու նրա մայրը որպես երագում երևցած ուրվականներ կանգնած էին նրա առջև, որ եկել էին ասիա՝ սուկալի դատաստանի մոտավրտ ժամը հայտնելու: Նրան առանձնապես տանջում է հարսնացուի մայրը, ապագա զոքանչը: Գորշ շրթունքները ամուր սեղմած, ասես թելով ձգած կապած, դեմքը կրակված, պատրաստ էր նա ինչպես մի վայրի կատու ամեն բույե հարձակվելու Ստեմպենյուի վրա և աչքերը հանելու: Դեռ լավ էր, գոնե, որ աղջիկն արգելում էր:

— Ձեռք մի՛ տա, մայրիկ: Դրանով միայն գործը կփչացնես: Տեղեկացի՛ր, հսկի՛ր և լռի՛ր: Եվ հետևիր ամեն մի քայլին, որ ձեռքներիցս հանկարծ դուրս չպրծնի: Հանգիստ եղիր, մայրիկ, ամեն ինչ լավ կլինի: Ստեմպենյուն ի՛մն է: Այո, ի՛մը:

## XVI

### Սամսոնը, որ ծնկի էր եկել Դալիլայի առջև

Ֆրեյդը հաղթահարելով բոլոր խոչընդոտները հասավ նպատակին, «Մովսեսի և Իսրայելի օրենքով» ամուսնացավ Ստեմպենյուի հետ և անմիջապես բուռը հավաքեց նրան: Այդ գործում նրա հավատարիմ օգնականը մայրն էր, որը վերջապես արժանացել էր զոքանչ դառնալու բախտին:

Ստեմպենյուն, որ գեհենի տանջանքների մեջ էր, կնոջ հետ տեղափոխվեց Մազեպովկա, ուր և մշտական բնակություն հաստատեց ամբողջ նվագախումբը:

— Վե՛րջ: Հերիք է թափառես, Ստեմպենյու: Բավական է գնաս աշխարհե-աշխարհ,— ասաց Ֆրեյդը ամուսնուն:

Ֆրեյդը, որի իշխանության տակ էր Ստեմպենյուն, կարողանում էր ամեն ինչում ձեռք բերել ամուսնու համաձայնությունը և այդ ամենը՝ խաթրով:

Ստեմպենյուի համար մի նոր կյանք սկսվեց, կյանք, որ բնավ նման չէր նախկինին: Նրա ամուսնու ամբողջ ինքնավստահությունը, ազատությունը, ամեն, ամեն ինչ հարսանիքից հետո ծխի նման չքացավ: Իրեն գտնելով կնոջ ճարպիկ թաթերի մեջ, նշանավոր երաժիշտը կորցրեց իր վաղեմիփայլը, վճռականությունն ու ինքնավստահությունը: Իր սեփական տանը նա միանգամայն ձայնագուրկ էր:

— Ստեմպենյո՛ւ, լավ իմացիր, քո գործը նվագախումբն է ու հարսանիքները: Փողը քո ինչի՞ն է պետք, ա՛յ իմ խելքի պուտուկ:

Եվ Ֆրեյդը վերցնում էր ամուսնու վաստակած ամբողջ փողը, մինչև վերջին կոպեկը:

Ֆրեյդը անասելի փողասեր էր... Ծնված լինելով մի շատ աղքատ ընտանիքում, մի պղնձադրամ անգամ աչքը չէր տեսել: Ամեն մի ժապավեն, ամեն մի սանրի կտոր ունեցել էր դառը արցունքների գնով: Մինչև տասնհինգ տարեկան հասակը ման էր եկել ոտաբաց, խնամել փոքր քույրերին ու եղբայրներին՝ հաճախակի ապտակներ ստանալով մորից ու հորից, վերջինից հատկապես այն ժամանակ, երբ գլուխը տաք էր լինում: Մնվում էին շատ աղքատիկ և Ֆրեյդի հագուստն էլ շատ սազական էր նրա բոբիկ ոտքերին: Միայն «Պուրիմի»<sup>8</sup> տոնին էր նրան հաջողվում մի քանի կոպեկ վաստակել, երբ տոնական նվերներ էր բաժանում տները: Վաստակած դրամը, երբեմն պատահում էր, թաքցնում էր թևի տակ, որպեսզի մայրը չխլի: Այդ գրոշներից նա չէր բաժանվում նույնիսկ գիշերը: Իսկ գատկին իր համար գնում էր գունավոր ժապավեն կամ սանր: Այդպես էր ապրում Ֆրեյդը մինչև տասնութ տարին: Ծնողները նույնիսկ չնկատեցին էլ, թե նա ինչպես դարձավ մի հասած աղջիկ, բարձրահասակ, գեղեցիկ, առողջ, թեկուզ հենց հիմա պսակիր:

Դառնալով Ստեմպենյուի հարսնացուն, Ֆրեյդը ինքն էլ դեռ չէր գիտակցում, թե ինչպիսի երջանկության էր արժանացել: Բայց նրա մայրը բավականին պարզ պատկերացնում էր և աղջկան խելք ու խրատ էր տալիս: Նա, աղջիկը պետք է լավ իմանա, որ իր փեսացուն ոսկի ձվեր ածող հավ է, բայց դրա հետ միասին՝ խաբեբա, փողն ու հողը նրա համար նույն բանն են: Դրա համար էլ թող աղջիկը ականջին օղ անի, որ առանց կնոջը հարցնելու Ստեմպենյուն ու մի քայլ չպիտի անի, ճիշտ այնպես, ինչպես նրա հայրը՝ ջութակահար Շախյան:

Ամուսնանալուց հետո Ֆրեյդը չմոռացավ մոր խրատները: Առանց շտապելու, մտածված, նա Ստեմպենյուին հասկացրեց, թե որոնք են կնոջ իրավունքները — ամուսինը կնոջից ոչ մի գաղտնիք չպետք է ունենա, որովհետև, կինը յուրային է, օտար չէ և ոչ էլ սիրուհի է, մարդն ու կինը մի մարմին, մի հոգի են, մարդը կինն է, կինը՝ մարդը: Մի խոսքով, նա պետք է հասկանա, նա պետք է մշտապես զգա, որ կնոջ տեր է:

<sup>8</sup> Պուրիմի տոնին, համաձայն վաղեմի սովորության, հրեաները նվերներ էին ուղարկում միմյանց, որոնք բաժանում էին չքավորների երեխաները:

Երբ Ֆրեյդը դարձավ մի ինքնուրույն տանտիկին, և նրա գրպանում սկսեցին զրնգալ ռուբլիները (Ստեմպեյնյուն հաճախ էր դրանցից բերում) մեծ կրքոտություն հանդես բերեց դեպի դրամը և հարձակվեց նրա վրա ինչպես սովահարը կաթնահունցին: Բայց դա կարճատև ուրախացրեց նրան: Շուտով կասկածանքի որդը սկսեց կրծել նրա սիրտը. իսկ ի՞նչ կանեմ, եթե վաղը այդ ռուբլիները վերջանան: Ի՞նչ կլինի, եթե ամուսինը, աստված ոչ անի, դադարի փող բերելուց: Եվ նա սկսեց գրոշ-գրոշի ետևից հավաքել ու բողջաների մեջ թաքցնել:

— Ինչո՞ւ ես այդպես ժլատություն անում,— հարցրեց մեկ անգամ Ստեմպեյնյուն կնոջը, նկատելով այդ արարմունքը:

— Շատ իմանաս, շուտ կծերանաս: Դա քեզ չի վերաբերում, Ստեմպեյնյու,— ժպտալով ասաց Ֆրեյդը:

Եվ առաջվա նման շարունակում էր գծուծությունը՝ կրճատելով նպարավաճառից, մսավաճառից, շուկայից արվող գնումները, մի կերպ մի որևէ ճաշ եփելով, կուշտ չուտելով և անվերջ կոպեկը կոպեկին դնելով: Կլորացնելով մի բավականին նշանակալից գումար, Ֆրեյդը կամաց-կամաց սկսեց շահով փող տալ: Սկզբում դրանք պատահական փոխատվություններ էին.

հարևանուհիներից որևէ մեկը կարճ ժամանակով մի քանի ռուբլի էր խնդրում, Ֆրեյդը էլ տալիս էր, դե, ինչու չօգներ, երբ կարիքի մեջ էին: Բայց նկատելով, որ այդ «բարի ծառայություններից» նրա կապիտալը աճում է, և որ ժամանակի ընթացքում մեկ ռուբլին դառնում է երկու, դրանից ախորժակը գրգռվեց և շուտով դարձավ մի իսկական վաշխառու, այդ հաճելի զբաղմունքի բոլոր առանձառնատվություններով հանդերձ, որով մեր հարուստներից շատերը, խոսքը մնա մեր մեջ, բավականին հաճույքով պարապում են:

Զարմանալի բան էր: Որտեղի՞ց էր Ֆրեյդին փող կուտակելու այդ կիրքը: Ոչ իր հոր՝ ջութակահար Շահկայից, ոչ մյուս երաժիշտներից նա այդ բանը սովորել չէր կարող, ո՞ւմ մոտ էր փողը ինչպես քամի, եթե ոչ երաժիշտների մոտ, երբ այսօր գրպանը լիքն է, իսկ վաղը մի քոռ կոպեկ էլ չունես: Այդ ժամանակներում հատկապես հրեա երաժիշտները մի յուրօրինակ գնչուներ էին, մի յուրօրինակ ցեղ, որն ուներ իրեն հատուկ առողջությունը, սովորություններն ու նիստ ու կացը: Նրանք ապրում էին անհոգ և ուրախ, երբեք չմտածելով վաղվա մասին: Նրանք ձգտում էին կյանքը դարձնել համակ տոնախմբություն, նրանք անվերջ ծնգծնգացնում էին իրենց գործիքները, սրախտում, միմոսություններ անում: Գալով տուն, իր կնոջ ու երեխաների մոտ, երաժիշտը նույն ձևով շարունակում էր իր ծաղրն ու ծիծաղը, զլուխ քաշում լոբիով կլերկան<sup>9</sup> (պատահում էր, որ այդ էլ չէր լինում) և անտրտունջ կիսաքաղց պառկում քնելու: Իսկ առավոտյան որևէ մեկից մի քանի գրոշ էր խնդրում կամ գրավ դնում վերջին բարձր... Առաջին իսկ վաստակած փողով էտ էր գնում գրավ դրած իրը և ամեն ինչ կրկնվում էր նորից:

Երաժիշտների աղջիկները նույնպես զվարճասեր էին և ազատ, որպես թոչունը: Նրանց կյանքը, ինչպես և մազերը ծածկված չէին մարդկանց հայացքից: Մի խոսքով երաժիշտներն ապրում էին դրախտում, որը օժտված էր դրախտի բոլոր արժանիքներով ու պակասություններով... Իսկ դրախտում ո՞ւմ դարդն է կտրվել նստել ու վաղվա օրվա մասին մտածել:

Դե պարզ է, Ֆրեյդի հայրն էլ նույնպես հարուստներից չէր: Զութակահար Շահկան չափից դուրս աղքատ, բայց ուրախ մարդ էր: Մի կոպեկ վաստակեր թե չէ, իսկույն քամուն կտար: Ֆրեյդի մայրն էլ էր սիրում կյանք անել, այսինքն՝ լավ ուտել: Երբեմն հագին իսկի շոր էլ չէր լինում, բայց քանի դեռ տանը թեկուզ մի բարձ մնացել էր, կուշտ ու կուռ ուտում էին: «Լավ է հացթուխին տաս, քան

<sup>9</sup> Խմորագնդիկ:

հեքիմին», «փորովդ մեկ ուտելուց լավ բան չկա, հենց դրա համար էլ ապրում ենք», այդպես էր ասում Ֆրեյդլի մայրը: Նույնիսկ երաժիշտների կանանց մեջ էլ, նա անտնտես կնոջ համբավ ուներ:

Հապա Ֆրեյդլի մոտ որտեղի՞ց հայտնվեց գծուծություն: Ո՞վ է իմանում: Դրա պատճառը, գուցե, իսկապես, այն խեղճությունն էր, որ ճաշակել էր հոր տանը: Հնարավոր է նաև, որ բնությունը ազահությամբ օժտել էր նրան հենց ծննդյան օրից — ինչ-որ մեկի գծուծ հոգին սխալմամբ եկել բույն էր դրել երաժիշտի աղջկա մեջ:

Բայց ինչպես էլ որ եղած լիներ, մամոնայի հանդեպ ունեցած կիրքը Ֆրեյդլի մոտ հիվանդություն էր դարձել, հենց որ խոսք էր բացվում փողի շուրջը, նրա դեմքը ծամածոփում էր, ձգվում, քրտինքով ծածկվում:

Երաժիշտների կանայք նախանձում էին Ֆրեյդլին:

— Տես ի՞նչ բախտի արժանացավ,— ասում էին նրանք միաձայն:

Մի բանում միայն Ֆրեյդլի բախտը չբերեց, երեխա չուներ: Ինչ իմանաս: Գուցե պատճառն այն էր, որ նա ամբողջ հոգով անձնատուր էր եղել շահասիրության կործանարար կրքին և մայրության երջանկությունը նրան անմատչելի էր մնացել: Չբեր կանայք մեծ մասամբ չար են լինում: Նրանք չունեն հոգու այն ջերմությունն ու մեղմությունը, որ հատուկ է մայրերին: Այդպիսի կանայք, ինչպես և Ֆրեյդլը, սիրում են միայն իրենց:

Ի միջի այլոց, իհարկե, սխալ կլիներ պնդել, թե Ֆրեյդլը չէր սիրում ամուսնուն: Ինչու պիտի չսիրեր, ոնց որ ասում են՝ տիպար գեղեցկության, հազվագյուտ երաժիշտ, դրան ավելացրած և այն (դա, իհարկե, ամենակարևորն էր), որ հրաշալի վաստակում էր:

— Իմ Ստեմպենյուն,— պարծենում էր Ֆրեյդլը հարևանուհիների մոտ,— բավական է մեկ անգամ թափահարի ջութակի աղեղը, և ահա քեզ արծաթ ռուբլի, երկու անգամ թափահարի՝ երկու ռուբլի, երեք անգամ՝ երեք ռուբլի:

Փողի հանդեպ ունեցած իր վերաբերմունքով Ստեմպենյուն կնոջ լրիվ հակապատկերն էր: Փողը նրա համար հեջ բան էր: Ահա նա գիշերներ լուսացնելով իր նվագախմբի հետ, գրպանները բերնեբերան լցրել է փողով, բայց ահա ամբողջը տվեց քամուն և նորից քոռ կոպեկ անգամ չունի: Եթե փող ունենում էր, ապա աջ ու ձախ ցրիվ էր տալիս, իսկ երբ չէր ունենում, պարտք էր անում ընկերներից: Լինելով իսկական արտիստ, նրան հետաքրքրում էր միայն երաժշտությունը: Հորինել մի նոր երաժշտական պիես, նվագախմբի հետ փորձել մի որևէ օպերայի նախերգանք, հարսանիքներում նվագել այնպես, որ լսողները հիացմունքից քար կտրեն, ահա այս էր նրա բան ու գործը:

Նշանավոր երաժիշտը աշխարհի երեսին ամենից ավելի սիրում էր իրեն և իր ջութակը: Իրենով զբաղվում էր մշտապես — անվերջ հարդարվում էր, մազերը գանգրացնում, հագնում ինչպես մի պճնամուկ, մի խոսքով, «իրեն ազապի տեղ էր դնում», ինչպես հեգնանքով ասում էր Ֆրեյդլը:

Երբ նա զբաղվում էր իրենով, մոռանում էր նույնիսկ ջութակը: Բայց բավական էր ձեռքն առնել, որ մոռանար և իրեն, և ամբողջ աշխարհը: Ամեն անգամ, երբ նրան տիրում էր թախիծը, փակվում էր սենյակում և մի քանի ժամ շարունակ նվագում այն, ինչ ծնում էր երևակայությունը: Ահա լավեցին սրտաճմլիկ հնչյունները, մարմանդ լալիս է ջութակը, և հանկարծ թախիծին փոխարինում է ցատումը, որը անվերջ ուժգնանում է, մինչև որ հոգու խորքերից նորից դուրս է թոչում հառաչանքը: Մարում է բոցը, հանդարտվում ցատումը, նրանց հաջորդում են մեղմանուշ հնչյունները, նրբահյուս

մեղեդիները, որ դառնում են ավելի թախծալի, ավելի հուսահատ: Բայց ահա նրանց միջից ճառագում է հրճվանքը...

Ճիշտ է, այդպես հաճախ չէր լինում: Միշտ չէր, որ ձեռքն էր առնում ջութակը: Բայց եթե սկսում էր նվագել, ջութակից նրան կտրելը անհնար բան էր: Արվեստագետի երևակայությունը փոթորկում էր ու բխում, ինչպես նոր ակունքից:

Մարդիկ, որ ունեին կենդանի հոգի, լսում էին այդ ազատ, ինքնաբուխ երաժշտությունը, որը ձայնագրելն անգամ անհնար էր, ու լսելուց չէին հագնում: Ջութակի հնչյուններում լսվում էր տառապյալ հոգու հառաչանք, աղերս՝ կարեկցելու և գթալու, լսվում էր աղոթք, որն այնտեղ, երկնքում պետք է որ լսեին, անպայման լսեին...

— Հաստիկ Կեյրյան, ա՛յ ոչ ու փուչ լինի նա, մենակ անցյալ շաբաթվա տոկոսները տվեց: Իսկ այս շաբաթվանը, ասում է, հետո կտամ:

Այսպիսի հաղորդումներով էր դիմավորում Ֆրեյդը ամուսնուն, երբ նա երեքժամյա իմպրովիզացիայից հետո դուրս էր գալիս իր սենյակից: Նրա այտերը այրվում էին, սև աչքերը բոցկլտում դեռ այն կրակով, որով նա գրավում էր մարդկանց սրտերը: Բայց հանդիպելով Ֆրեյդլի կանաչ, մանր աչքերին, այդ կրակը հանգչում էր իսկույն:

Երբ Ստեմպենյուն վերադառնում էր հարսանիքից, Ֆրեյդը նրան դիմավորում էր ժպիտներով ու կատվի նման քամվում:

— Փողը քո ինչին է պետք, Ստեմպենյու,— ասում էր նա, դուրս տալով նրա գրպանները: Ախր ի՛նչ պիտի անես: Սոված չես, ասոված ոչ անի, և ոչ էլ սկլոր: Իսկ եթե մի քանի կոպեկ կուզենաս ձեռքումդ ունենալ, ես մի՞թե խնայում եմ: Ավելի լավ է փողն ինձ տաս, հոգի՛ս: Իմ ձեռքում որ լինի, հաշվիր թե յոթը փականքի տակ է: Դե, տո՛ւր, տո՛ւր...

Իսկ Ստեմպենյուն կանգնած է կնոջ առջև ինչպես մի պատժված աշակերտ և անձպտուն ենթարկվում է նրան: Նա ամբողջովին այդ թխադեմ կնոջ ձեռքերի մեջ է...

Ստեմպենյու, ինչ պատահեց քեզ: Որպես հզոր մի Սամսոն, որ ծունկի է եկել Դալիլայի առջև, դու թույլ ես տալիս Ֆրեյդլի նման ոչնչության նստել քո գլխին, քթիցդ բռնած ման ածել... Ինչպիսի՛ ամոթ, ինչպիսի՛ խայտառակություն, Ստեմպենյու...

## XVII

### Դեռ ամեն ինչ վերջացած չէ...

Խե՛ղճ Ստեմպենյու...

Բայց մեր հերոսի դրությունը այնքան էլ անհուսալի չէր, ինչպես ձեզ թվում է, և անմիջապես ցավելու կարիք չկա: Չնայած Ստեմպենյուն իր տանը փալասի մեկն էր, բայց նա Ֆրեյդլի արթուն աչքերին միանգամայն անմատչելի, ստեղծել էր իր սեփական աշխարհը: Այնտեղ Ստեմպենյուն իր գլխի տերն էր, և ինչպես մենք հետո կտեսնենք, նույնիսկ երջանիկ էր:

Օրվա կեսը նա անց էր կացնում «ռեպետիցիաներում», դա նշանակում էր ոչ միայն նոր համարների յուրացում՝ նվագախմբի հետ, այլև ուրախ ժամանց՝ ընկերների շրջանում: Ծիծաղելու համար միշտ

մի բան լինում էր: Բաղինը՝ հարսանիքների ծաղրածուն, սփռում էր իր սրախոսությունները, դրանք ուղղելով ամենից շատ Մեխչա-դեղյուն, որի վրա սիրում էր կատարելագործել իր մասխարությունները: Երաժիշտներն էլ էին մտքներում ունենում մի որևէ հետաքրքրաշարժ դեպք: Չէ՞ որ գոյություն չունի այնպիսի հարսանիք, որի ժամանակ մի որևէ ծիծաղաշարժ արկած տեղի չունենա. այստեղ փեսան է կողին ընկնում ու հրաժարվում պսակի գնալ, մինչև որ չբերեն ու զուտ փողով չտան խոստացած ամբողջ օժիտը ու պահանջում — հանեք ու տվեք, այնտեղ հարսն է պսակի գնալիս լաց ու կոծ քոքում, ուշագնաց լինում, և հազիվ են ուշքի բերում (բաղինը նրա հասցեին մի ինչ-որ անպարկեշտ բան է բաց թողնում): Իսկ մի ուրիշ հարսանիքում դրանից ավելի մասխարա բան է տեղի ունենում ընթրիքից հետո, երբ սկսվում են պարերը... Թնդալից ծիծաղը հրանոթի որոտի նման խլացնում է պատմողի խոսքերը:

— Ձեզ մոտ այդ ի՞նչ հի, հի՛, հա՛, հա՛ է: Տե՛ս է, ոնց են հռհռում,— ճչում է Ֆրեյդը իր սենյակից:

— Քո գործը չէ: Հազար անգամ խնդրել եմ՝ մերգործերին չխառնվել,— արժանապատվությամբ պատասխանում է Ստեմպենյուն:

Եվ այդ բոլորին Ստեմպենյունի թվում է, թե ինքը իրոք տան լիիրավ տերն ու տնօրենն է:

Փորձերից ազատ ժամանակը Ստեմպենյունն ավիրում էր իր հարդարանքին, մաքրում էր հագուստները, հայելու նման փայլեցնում կոշիկները, ուլորում իր սև խոպոպները, արդուկում օսլայած, սպիտակ վերնաշապիկը: Հետո փողոսկրե դաստակով ձեռնափայտը վերցնելով, մինչև հոնքերն էր քաշում փայլուն հովարով սև կարտուզը, գլուխը բարձր բռնած, որպեսզի խոպոպները օրորվեին ուսերին, դուրս էր գալիս ավանով զբոսնելու: Այնտեղ նա ունի ծանոթների իր շրջանը, որոնց հետ հանդիպելը հաճելի է նրան: Անցնելով խանութների մոտով, նա բարևում է առևտուր անող ջահել կանանց: Սրանք կարմրատակում են, հիշելով, որ դեռևս ոչ վաղուց իրենք ազապ աղջիկ էին և լավ ծանոթներ էին Ստեմպենյունի հետ... Ի՛նչ օրեր էին: Իսկ հիմա: Հիմա դրա համար ժամանակ էլ չկա...

Ի միջի այլոց, ջահել կանանց ու մանավանդ աղջիկների մեջ հիմա էլ էին հանդիպում այնպիսիները, որոնց սիրտը գնում էր, որ Ստեմպենյունի հետ դռանը կանգնեն, սրանից-նրանից լեզվին տան, քրքջան...

Միշտ չէ, որ այդպիսի հանդիպումները անադմուկ էին վերջանում, բավական էր նրանց նկատելը հետաքրքրասեր հարևանուհիներից որևէ մեկը, որ անմիջապես ասեր մյուսին, սա էլ երրորդին, և այսպես շարունակ... Ով որ ընկավ բամբասկոտ կանանց բերանը, վայն եկել է տարել...

— Սաա ինձ, Ստեմպենյու, նորից այդ ի՞նչ ասեկոսե է պտտվում քո շուրջը: Չլինի՞ մի նոր շիլափլավ ես եփել,— հետաքրքրվում էր Ֆրեյդը:

— Ի՛նչ շիլափլավ: Ի՛նչ ես ասում:

— Դեռ հարցնում էլ է: Չգիտե՞ս ինչ: Ավանում քո ձեռքից փրկություն չկա: Բոլորի խոսք ու զրույցի առարկան դու ես:

— Ձեմ հասկանում, թե դու ինչ ես ուզում ինձնից, Ֆրեյդ:

— Ինչ եմ ուզո՞ւմ: Ես ուզում եմ, որ դու թողնես քո նախկին հովերը: Վաղուց ժամանակն է: Մի ջահել կնիկ կամ աղջիկ չկա, որ չկանգնի, հետը սիլի-բիլի չանի գնա քեզ՝ երեք ժամ. պոկել չես կարող:

— Հա՛: Դու երևի ակնարկում ես այն, որ ես խոսել եմ Ավրոմ-Յակովի աղջկա՝ Եսթերի հետ:

— Ենթադրենք թե Եսթերի: Ինչ է, նա սո՞ւրբ է:

— Բայց ախր մենք գործի մասին էինք խոսում:

— Գործի՛ ... Մենք քեզ գիտե՞նք, Ստեմպենյու՝ քո գործերով հանդերձ:

— Բանն էլ այն է, որ ոչինչ չգիտես: Ավրոմ-Յակովը աղջկա հարսանիքը ուզում է Եգուպեցում անի, մի այդպիսի երանելի միտք է եկել գլուխը: Դե, ինքնըստինքյան պարզ է, երբ ես Եսթերին հանդիպեցի, այդ մասին սկսեցի խոսել, ավստո չէ՞ր նման մի հարսանիքը ձեռքից բաց թողնելը, ի՞նչ կասես:

— Այ քեզ ցնդած տիրացու: Այդ ի՞նչ է խելքին փչել, որ հարսանիքը ուզում է Եգուպեցում անել,— իրար խառնվեց Ֆրեյդը:

Նրա կանաչ, մանրիկ աչքերում բռնկվեց այն կրակը, որ միշտ կայծկլտում էր, երբ փողի հոտ էր առնում:

— Ինչ ես պահանջում նրանից, երբ մի ծալը պակաս է,— պատասխանում էր Ստեմպենյուն, և ինչպես միշտ, ջրից դուրս գալիս՝ չոր:

Ահա այս ձևով էր հաջողվում Ստեմպենյունին ծածկել մի պատմությունը մյուսի ետևից և բոլոր պատմությունները միասին վերցրած: Նա երբեք իրեն չէր կորցնում, նա գիտեր ինչով կաշառել կնոջը:

Երբ Ստեմպենյունին առիթ էր լինում նվագախմբով գնալ մի ուրիշ ավան, նրա համար դարձյալ սկսվում էր նախկին ազատ կյանքը, և տուն վերադառնալու ոչ մի ցանկություն չէր ունենում: Այստեղ արդեն, ինչպես ասում են, աստված ինքն էր թույլ տվել ազատություն տալ իր ցանկություններին: Եվ ինչպես տխուր, այնպես էլ ուրախ արկածները հաջորդում էին միմյանց: Մի խոսքով, դա Ստեմպենյունի փակ աշխարհն էր, ուր Ֆրեյդը շատ ցանկացավ թափանցել, բայց որը նրա համար մնաց ընդմիշտ փակ: Ֆրեյդը նույնիսկ փորձ արեց կաշառել Մեխչա-դեռլան, սակայն այդ նրան չհաջողվեց: Իր կղզիացած աշխարհում Ստեմպենյուն բոլորովին այլ էր և բնավ նման չէր այն մարդուն, ինչպիսին գիտեր նրան տանը Ֆրեյդը:

## XVIII

### Մերը բորբոքվում է

Այդ փոքրիկ ու փակ աշխարհում, որ Ստեմպենյուն ստեղծել էր իր համար, գնալով ավելի ու ավելի մեծ տեղ էր գրավում Ռոխելեն: Նամակը, որ նա գցել էր Ռոխելեի պատուհանից ներս, գրված էր միանգամայն անկեղծորեն, ամբողջ հոգով, քանի որ Ստեմպենյուն սիրահարվել էր Ռոխելեին հենց նույն րոպեին, երբ տեսել էր նրան Բենցիոն-Գլոկենց հարսանիքում:

Բայց նամակ գրելու միտքը նրա մոտ ծնվեց ոչ իսկույն: Անցավ մի քանի օր, մինչև որ նրա հոգում Ռոխելեի կապույտ աչքերի բորբոքած հուրը կրննկվեր վառ բոցով: Այդ ժամանակ այլևս անկարող լինելով դիմանալ, նա փակվեց իր սենյակում, ուր սովորաբար նոտաներն էր արտագրում և հենց նույն գրիչով և նոտաների նույն թղթի վրա նամակ գրեց:

Քիչ չարչարանք չնստեց այդ նամակը նրան և հեշտությամբ գլուխ չեկավ: Նա ինքնուս էր, գրագիտություն ոչ մի տեղ չէր սովորել: Եվ զարմանալի չէ, որ գրելու մեջ տկար էր:

Մի քանի օր շարունակ Ստեմպենյուն նամակը պահում էր մոտը և ոչ մի կերպ չէր կարողանում մի հնար գտնել ու նամակը տալ նրան: Այդպիսի բաներում Մելիսա-դիոլչին լավ սուրհանդակ էր, բայց նա լավ էր միայն դրսում, իսկ այստեղ, Ֆրեյդլի քթի տակ այդ փոստատարը վտանգավոր էր:

Ստեմպենյուի համբերությունը սպառվեց շաբաթ օրվան սպասելով: Նա հագնվեց, ինչպես կհագնվեր մի պճնամոլ օրիորդ, ծածկեց բարձր շյապան՝ նորաձևության վերջինխոսքը, և դուրս եկավ շաբաթ օրը Բերդիչե փողոցում զբոսնելու, ինչպես դուրս էր գալիս սովորաբար: Նա հույս ուներ այստեղ հանդիպելու Ռոխելեին: Բայց ավա՛ղ: Նրա աչքի առջևով շատ աղջիկներ ու երիտասարդ կանայք էին անցնում: Ոմանք շիկնելով նայում էին նրան ու ժպտում: Բոլորն այդտեղ էին: Միայն Ռոխելեն չկար: Նամակը Ստեմպենյուին հանգիստ չէր տալիս: Միտը անդիմադրելի ուժով ձգտում էր դեպի Ռոխելեն:

«Հարկավոր է անցնել այն փողոցը, ուր ապրում է Աիզիկ-Նաֆտոլյան: Գուցե Ռոխելեին այնտեղ հանդիպեմ...» — մտածեց Ստեմպենյուն: Եվ նա անշտապ մոտեցավ այն պատուհանին, ուր մտքերի մեջ խորասուզված նստել էր Ռոխելեն, երգելով մեզ ծանոթ երգը:

*Միշտ մենակ ու մենակ,  
Որպես համր մի քար,  
Մեկը չկա հետը խոսեմ,  
Մեկը չկա մի բան ասեմ,  
Ինձ հետ եմ ես խոսում  
Մեն մենակ տանջվում՝  
Դե որ չկա ոչ ոք...*

Անսպասելի լսելով «շնորհավոր շաբաթ» ողջույնը և իր առջև տեսնելով Ստեմպենյուին, Ռոխելեն սկզբում մտածեց, որ դա երագ է (արդեն մի քանի անգամ նա երևացել էր երագում): Բայց նոտաների թուղթը բացելով և կարդալով նամակը, նա տեղից բարձրացավ, նայեց պատուհանից և ինքնիրեն ասաց.

— Լա՛վ արեց որ գնաց: Թե չէ ես նրան ցույց կտայի ինչպես պետքն էր: Այդ էլ նոր փորձանք էր...

Բարկացած, նա ուզեց նամակը դուրս շարտել պատուհանից, բայց մտածեց, մի անգամ ևս կարդաց, ապա նեղ ոլորեց ու թաքցրեց գրպանում:

Զայրույթը ավելի ուժգնությամբ համակեց նրան: Նա ցանկացավ թեկուզ ինչ գնով էլ լինի դեմառդեմ հանդիպել նրան ու հարցնել, թե ինչ կնշանակեր այդ ամենը: Ինչ անուն տալ նրա այդ վարմունքին: Ինչպես է համարձակվում: Ո՞վ է նա, որ հանդգնում է նամակ գրել իրեն:

Ռոխելեն սկսեց մտածել ու գուշակել, թե նրան ինչպես, հանդիպի մի այնպիսի տեղում, որ ոչ ոք չլսեր իրենց խոսակցությունը: Եվ գլխում մի փայլուն միտք ծնվեց:

## XIX

### Ռոխելեն մանյակ է գնում Ստեմպենյուի կնոջից՝ Ֆրեյդլից

— Գիտե՞ք թե՞ ձեզ ինչ կասեմ, սկեսուրս: Եթե թանկ չի նստի, դեմ չէի լինի, որ մի շար մարգարիտ գնեինք, խոշոր մարգարիտներից:

— Դե դու ինքդ ասա, Ռոխելե, քանի անգամ եմ քեզ ասել՝ գնա Ստեմպենյուի կնոջ, Ֆրեյդլի մոտ, նրա մոտ ամեն ինչ կգտնես, ինչ որ սիրտդ ուզում է: Եթե կուզես, հենց հիմա գնանք: Նա ինձ էժան կտա:

Ֆրեյդլը մեծ մասամբ մանյակներ էր գրավ վերցնում և կամաց-կամաց սկսեց պարտքատերերի պարտքի դիմաց ծախել: Մանյակները պարտապաններից համարյա ձրի ձեռք գցելով, նա բնականաբար հնարավորություն ուներ մյուս առևտրականներից ամենից էժան ծախել: Այդ գործը այնպես դուր եկավ նրան, որ սկսեց լուրջ գործեր բռնել Բերդիչևի և Բրոդի հետ: Ամբողջ Մազեպովկան գիտեր, որ մարգարիտների ամենալավ մանյակը կարելի է ճարել միայն Ստեմպենյուի կնոջ մոտ:

Մնում էր միայն զարմանալ, թե որտեղի՞ց էր Ֆրեյդլին այնպիսի առևտրական ընդունակություններ, գնորդներին համոզելու այնպիսի շնորհք, այդպիսի վարվելաձև:

Երբ Դվոսյա-Մալկան հարսի հետ մտավ Ստեմպենյուի տունը, Ֆրեյդլը նրանց մեծ աղմուկով ընդունեց:

— Ո՛ւմ եմ տեսնում: Ո՞նց եք, Դվոսյա-Մալկա: Գիտե՞ք ինչ, ես վաղուց էի ձեզ սպասում, ձեր ճամփան պահում:

— Մե՛ր: Ինչու, Ֆրեյդլ:

— Ո՞նց թե ինչու: Դուք դեռ հարցնո՞ւմ եք: Արդեն մի տարի է, ինչ դուք մի այսպիսի գանձ եք թաքցնում ձեր տանը: Գոնե մի անգամ ձեր հարսի հետ կգայիք ու այդպիսի մի գեղեցկուհու համար մի որևէ բան կընտրեիք: Ֆի՛, լավ չեք անում, Դվոսյա-Մալկա, լավ չեք անում: Անկեղծ ասած, ձեր փոխարեն ամաչում եմ:

— Դուք հազար անգամ իրավացի եք, Ֆրեյդլ, սիրելիս, բայց թե ինքներդ ասեք, ախր ես ինչո՞վ եմ մեղավոր, որ իմ հարսը մարգարիտ չի ուզել: Քանի-քանի անգամ աղաչել եմ, պաղատել, օգուտ չի արել:

— Ա՛յ քեզ նորություն: Ոնց թե «չի ուզել»: Նշանակում է չեք կարողացել համոզել: Եթե ինձ մոտ բերեիք, գուցե կուզենար:

Ֆրեյդլը ճարպկորեն բացեց մի մեծ, կանաչ սնդուկ և այնտեղից իրար ետևից սկսեց դուրս բերել զանազան տեսակի մանյակներ ու սեղանին շարել: Ապրանքն առաջարկելով գնորդներին, նա որպես մի փորձված առևտրական գովասանքների ու բարի ցանկությունների կարկուտ էր թափում:

— Գիտե՞ք ինչ, Դվոսյա-Մալկա, եթե դուք ինձ լսեիք, ես ձեզ խորհուրդ կտայի վերցնել այ ա՛յս մանյակը, հենց ա՛յս: Երդվում եմ, դուք ոչ մի տեղ չեք տեսնի Օռլեանի մի այսպիսի բնական մարգարիտ, թող աստված ինձնից ու ձեզնից չոռն ու ցավ հեռու տանի: Խնդրո՛ւմ եմ, ապա մի հագեք, — դիմեց նա Ռոխելեին, — հագեք այս մանյակը: Երդվում եմ աստծով, սա հենց նրա համար է ստեղծված, որ ձեր սպիտակ պարանոցը զարդարի: Բարո՛ւ մաշեք: Տա աստված, որ ձեր սկեսուրը

եկող տարի ձեզ համար ամենաքիչը հինգ այսպիսի շար մարգարիտ գնի: Ո՛նց է սագում: Դե դուք ասեք, Դվոսյա-Մալկա, դուք հո մարգարիտներից հասկանում եք, ո՛նց է սագում դեմքին, արդա՛րն աստված:

Այսպիսի խոսքերով Ֆրեյդլը ձեռքն առավ հայելին, որ գրված էր սնդուկի վրա և կանգնեց Ռոխելեի դիմաց: Նրա կանաչ, մանր աչքերը փայլում էին բուռն հետաքրքրությունից և ճակատին նույնիսկ քրտինք երևաց՝ քծնելուց, երդումներ ուտելուց և ճիգ ու ջանք թափելուց:

— Իսկ ձեր Ստեմպենյուն էլ ուրիշ բան ու գործ չունի,— ասաց Դվոսյա-Մալկան, ձեռքով ցույց տալով հարևան սենյակը, որտեղից լսվում էին չնաշխարհիկ հնչյունները:

— Այո, նվագում է,— պատասխանեց Ֆրեյդլը գնորդներին ցույց տալով նորանոր մանյակներ:

Այդ ընթացքում Ֆրեյդլի և Դվոսյա-Մալկայի միջև սկսվեց մի երկար ու աշխույժ գրույց, ինչպիսին լինում է, երբ այդպիսի կանայք միմյանց հետ առևտուր են անում:

Ռոխելեն քաշվել էր մի կողմ՝ միանգամայն անմասնակից և անտարբեր սկեսրոջ ու Ֆրեյդլի գրույցին: Նա լսում էր մի այլ գրույց, լսում էր ուրիշի ձայնը, ուրիշի խոսքերը: Ստեմպենյուի ջուրթակից լսված յուրաքանչյուր հնչյուն խոր թափանցում էր Ռոխելեի սիրտը: Նա միայն այն ժամանակ բարձրացավ տեղից, երբ հնչյունները լռեցին, և դռան մեջ երևաց Ստեմպենյուն: Նրանց հայացքները հանդիպեցին և երկուստեք արյունը խփեց դեմքներին: Ստեմպենյուն կանգ առավ դռան մեջ անշարժացած, ասես քարացավ տեղում Ռոխելեն հայացքը նրանից չդարձնելով, սկեսրոջն ասաց, որ տուն գնալու ժամանակն է: Դվոսյա-Մալկան տեղում ընդոստնեց և սկսեց ձեռքերը կոտրատել:

— Վա՛յ, տեր իմ աստված: Տեսեք հալա ո՛նց ենք խոսքով ընկել: Դե, Ֆրեյդլ, ի՞նչքան պիտի վերցնեք ինձնից այդ մի շար մարգարիտի համար: Ֆրեյդլ, քեզ տեսնեմ, հորդ գինը վրան չդնես: Ինձ հետ խղճով առևտուր արա:

— Մաքուր խղճով, Դվոսյա-Մալկա, թող առաջին պատառը բերանս տանելիս խեղդվեմ, թե որ սուտ եմ ասում: Այդ նույն մանյակի համար Սոսյան տասնութ ռուբլի է տվել, երդվում եմ արևովս, երդվում եմ ամուսնուս արևով: Բայց Սոսյան ուրիշ, դուք՝ ուրիշ: Մի խոսքով, ես ձեզանից կվերցնեմ տասնհինգ ռուբլի: Եվ թող աստված ինձ պատժի ու ամբողջ կարողությունիցս զրկվեմ, թե որ մի քոռ կոպեկ շահ ունեմ, մեղա՛ քեզ, ողորմած աստված:

— Տասնհինգ որ ասում ես, տասնհինգ չեմ տա, բայց տասներկու ես ձեզ կտամ, Ֆրեյդլ, տասներկու ռուբլի՝ կանխիկ:

— Ի՞նչ էք ասում, Դվոսյա-Մալկա, աստված ձեզ առողջություն տա, մի սակարկեք, ի սեր բոլոր սրբերի,— տաքացած գոչեց Ֆրեյդլը, ճանկելով նրա ձեռքերը և բռնելով ճիշտ այնպես, կարծես նրա հետ «վերվերի» էր պարելու:

Այդ ընթացքում Ռոխելեն և Ստեմպենյուն միմյանց հետ փոխանակում էին համառոտ ու կտրտված ֆրագներ:

— Ես ձեզ ուզում եմ բան ասել, Ստեմպենյու:

— Ես նույնպես, Ռոխելե:

— Դուք արդեն ասել եք:

- Ե՞րբ:
- Նամակով:
- Դա քիչ է:
- Չափից դուրս շատ է:
- Նույնիսկ հարյուրերորդական մասն էլ...
- Սխալվում եք:
- Երդվում եմ կյանքովս, հալումա՜ջ եմ լինում: Որտե՞ղ կարելի է ձեզ հանդիպել:
- Գուցե երեկոյան:
- Որտե՞ղ:
- Վանքի փողոցում:
- Ե՞րբ:
- Շաբաթ օրը: Դուք կգաք վանքի այգու հակառակ կողմից:
- Ես չեմ ցանկանում: Չեմ կարող:
- Դուք պարտավոր եք, Ռոխելե: Աղաչում եմ ձեզ: Եկեք թեկուզ մեկ րոպեով: Շաբաթ օրը երեկոյան այնտեղ եղեք, աստ՞ծ ո՛ւ սիրուն: Ես ձեզ կսպասեմ:
- Ես չեմ գա:
- Դուք կգաք, Ռոխելե, դուք կգաք...
- Դե, աղջիկս,— ձայն տվեց Դվոսյա-Մալկան Ռոխելեին,— գնանք տուն: Հազիվհազ հաշտվեցինք տասնչորս ռուբլով: Ֆրեյդլ, ես չգիտեի, որ դու էղքան ճարպիկ առևտուր անել գիտես:
- Ա՛խ, Դվոսյա, հոգիս: Առևտրի մեջ դու էլ պակաս ուստա չես, հա՛, աստված քեզ առողջություն տա... Մնաք բարո՛վ: Շնորհավո՛ր լինի: Հաջողությո՛ւն: Բարո՛վ մաշեք: Բարո՛վ վայելեք:
- Բարով տեսնեմ փայտերով ման գա: Արյունս պղտորեց,— ասաց Ֆրեյդլը ամուսնուն, երբ կանայք գնացին:— Հարսն էլ պակաս պտուղը չէր, ոնց որ իսկական սպիտակ կով լիներ, նստել էր ու լեզուն առել ասամների տակը: Մարգարիտներն էլ էնպես էին սագում, ոնց որ թամքը խոզին:

## XX

### Նորից մանյակի մասին

Ռոխելեն տուն վերադարձավ մանյակը պարանոցին, սկեսուրը առաջին հերթին նրան տարավ Աիզիկ-Նաֆտոլյայի մոտ: Դվոսյա-Մալկայի դեմքին մի այնպիսի երջանիկ ժպիտ կար, կարծես աստված գիտի թե ինչ հարստություն էր ձեռք բերել:

— Հապա մի այստեղ նայիր, Աիզիկ-Նաֆտոյա, հապա մի նայիր, թե ինչ մանյակ է: Ջրի գին եմ տվել: Բախտներս բերել է, գանձ է, գանձ:

Աիզիկ-Նաֆտոյան գնաց Ռոխելի մոտ, գործին հմուտի տեսքով երկար ու բարակ մանյակը տնտղեց, քիթը վեր քաշեց և վերջապես հարցրեց.

— Ինչքա՞ն էս տվել:

— Գուշակիր: Դու վաճառական ես, քո գինն ասա մի տեսնենք,— ժպտալով պատասխանեց Դվոսյա-Մալկան:

— Ախր չեմ իմանում: Թա՞նկ էս առել, թե էժան:

— Քեզ ասում եմ էժան եմ առել, ա՛յ անճոռնի: Գողացած ապրանքից էլ էժան: Բայց թե արյունս քիչ չպղտորվեց, էնքան գոռգոռացի երաժիշտի չարչի կնկա հետ, որ ձենս քիչ մնաց կտրվի, ա՛յ տեսնեմ դրա սֆաթը ուռի, ծակծկվի: Բայց թե առուտուր անել իման՞ում է: Իսկական շուկայի առևտրական: Սատանան գիտի, թե երբ և որտեղ է սովորել: Լեզուն էնպես է ֆռռում, ասես չարխի վրա լինի: Բերանից կրակ է թափվում: Երբ որ գնորդների հետ խոսում է, ոնց որ ձուկը ցանցի մեջ թփրտա, բարով տեսնեմ աշխարհից վերանա, նա, էդ Ստեմպենյուի կնիկը... Դե, ինչ էս լռում, Աիզիկ-Նաֆտոյա: Ասա տեսնենք, քո կարծիքով ինչ արժե էդ մանյակը, ասա՛, ասա՛ մի տեսնենք, թե ապրանք գնահատել իմանո՞ւմ ես:

— Էդ մանյակի գի՛նը,— ծոր տվեց Աիզիկ-Նաֆտոյան ձեռքը գցելով մորուքին:— Էդ տեսակ մարգարիտների շարը պետք է որ արժենա ոչ ավելի, ոչ պակաս... հապա սպասիր, տուր մի լավ նայեմ, որ հասկանամ, էդ գործում սխալվելը ժվար չէ... ասում էս ջրի գին է՛: Ասում էս էժան է: Հը՛մ... Եթե իսկապես էժան էս առել, ապա դու էդ շարին պետք է որ տված լինես հինգ ու կես մանեթ, իսկ դրա իսկական գինը վեց մանեթ է:

— Դեբո՛ւ,— ասես թնդանոթից՝ վրա տվեց Դվոսյա-Մալկան:— Աիզիկ-Նաֆտոյան ցնցվեց, թռավ մի կողմ:— Մարսա՛ղի մեկը: Էշի գլուխ: Էդ տեսակ մարգարիտը հինգուկեսով կտա՞ն: Անխե՛ լք անասուն: Մի անլեզու մարդ դրանից ճիշտը կասեր... Դու աչքեր ունե՞ս, թե չէ, մի լավ նայիր, սարսաղների թագավոր:

Եվ ճանկելով Ռոխելի թևը, Դվոսյա-Մալկան նրան նորից տարավ Աիզիկ-Նաֆտոյայի մոտ ու հարսի ծնոտից բարձրացրեց.

— Տե՛ս, հիացիր, թե ինչ ապրանք է,— և հայիոյանքները, ծաղրն ու ծանակը շարունակեց թափել ամուսնու գլխին:

Խեղճ Աիզիկ-Նաֆտոյան վախենալով նույնիսկ մի խոսք ասել, քթով ֆսսացնում էր և աչքերը բաց ու խուփ անում: Բայց այդտեղ նրա բախտը բերեց, տղան եկավ օգնության, որն իր անբաժան տրոստը ձեռքին, հենց նոր էր վերադարձել զբոսանքից: Այժմ Ռոխելի ձյունաճերմակ պարանոցի մարգարիտները գնահատելու հերթը հասավ Մոյշե-Մենդլին: Եվ նա ստույգ որոշեց, որ այդ մանյակի գինը երեք ռուբլի է:

Դվոսյա-Մալկային մի այնպիսի կատաղություն համակեց, որ նույնիսկ լաց եղավ, արդյոք նրանի՞ց, որ ոչ ոք ըստ արժանվույն չգնահատեց իր ձեռնտու առևտուրը, թե Ստեմպենյուի կնոջից կրած վիրավորանքից, որ այնպես անամոթաբար խաբել էր իրեն:

— Դու էլ պիտի պարծենաս, թող ներվի ասել, թե ապրանք ես ճանաչում,— ծղրտաց Դվոսյա-Մալկան տղայի հասցեին:— Հենց էն տեսակն է, ինչպես իրեն հայրիկն է: Ինչո՞ւ երեք ռուբլի, որոյակա: Ինչո՞ւ ոչ ավելի էժան:

— Որովհետև դրանց ամենաբարձր գինը երեք ռուբլի է. դա մի շատ սովորական մանյակ է: Ես, մայրիկ, կյանքումս մարգարիտներ շատ եմ տեսել: Պատկերացրեք, որ շատ անգամ է բախտ վիճակվել մարգարիտի մանյակներ տեսնել, իսկական մարգարիտի:

Եվ ամբողջ օրը մանյակի պատճառով վիճում էին ու միմյանց օձիքից ձավար հավաքում:

— Եթե նա մի գնդակ արձակեր ուղիղ սրտիս,— գանգատվում էր ամուսնուց Դվոսյա-Մալկան,— ինձ համար էնքան ծանր չէր լինի, քան թե լսեի նրա անհեթեթ խոսքերը՝ «հինգուկես մանե՛ր թ»: Ենթադրենք թե էն խաբեբան, էն չարչին՝ խոլերը բռնի կոկորդիցը՝ հենց էս բռպեին, խաբել է ինձ, չնայած մինչև հիմա դեռ ոչ ոք ոչ մի անգամ ինձ չի խաբել: Դե լա՛վ, գրողի ծոցը, թող նա երիցս անիծյալ լինի իր Ստեմպենյուի հետ: Բայց թե ախր ինչու վերքը փորփրել ու մի էդ տեսակ գին ասել: «Հինգուկես մանե՛ր թ»: Թող հինգուկես դյուժին թարախի փուչիկ դուրս գա նրա լյարդին. ասենք թե էս նրա ձեռքից դուրս քաշեցի իմ հալալ փողերը՝ ինչպես շան ատամների տակից կքաշեն, կարող եք հավատացած լինել: Բայց թե ախր էդ մարդը ո՞նց է իրեն թույլ տալիս ասել «հինգուկես մանե՛ր թ»:

Այդ ամբողջ տեսարանը Ռոխելեին այնքան ստորացուցիչ թվաց, որ նա քնից առաջ պարանոցից հանեց մանյակը, զցեց սնդուկի ամենախորքը, հաստատ համոզմունքով, որ այլևս երբեք չհանի: Ամենից վիրավորականն այն էր, որ Մոյշե-Մենդը ամբողջ օրը մոր հետ վիճում էր մանյակի շուրջը և իր, Ռոխելեի վրա ոչ մի ուշադրություն չդարձրեց, նույնիսկ չՆորհավորեց: Ամբողջ օրը նրան տանում էին մերթ սրա մոտ, մերթ նրա մոտ՝ ինչպես տոնավաճառի կով, և ով ասես նայում էր, բարձրացնում գլուխը, շոշափում մանյակը, իսկ իր մասին մոռանում էին...

Բնավորությամբ անհիշաչար, թվում է ընդունակ չլինելով նույնիսկ բարկանալու, Ռոխելեն այս անգամ անչափ զայրացած էր բոլորի դեմ, և հատկապես ամուսնու: Իսկ ամուսինը դուր ու դինջ ճաշեց և իսկույն վազեց սինագոգ: Եվ քանի որ սինագոգում այդ երեկո տեղի էր ունենալու մի ինչ-որ տոնախմբություն, նա, ինչպես անում էր ոչ սակավ, համարյա մինչև լուսաբաց մնաց այնտեղ:

Ռոխելեն չէր հանգստանում: Նրա ներսը եռում էր, դեմքը այրվում, գլուխը քիչ էր մնում ցավից պայթեր, ականջները շշուշում էին ու զրնգում: Ինքն էլ չգիտեր, թե ինչ է կատարվում իր հետ... Երեկոյան ձեռք անգամ չտվեց ընթրիքին: Դվոսյա-Մալկան ինչպես միշտ, նրան հանգիստ չտվեց — ինչո՞ւ չի ուտում, ինչո՞ւ չի խմում: Բայց այս անգամ ոչ մի հորդոր չօգնեց: Բորբոքված աչքերով, Ռոխելեն գնաց իր սենյակը, արագ հանվեց, ընկավ մահճակալին, և նրա աչքերից դուրս ցայտեցին արցունքները, տաք արցունքները, և նա լալիս էր երկար ու երկար...

## XXI

### Ծանր գիշեր

Ինչու էր լալիս Ռոխելեն: Նա ինքն էլ չէր կարողանա պատասխանել այդ հարցին: Նա նույնիսկ չէր էլ զգում, թե լալիս է: Նրա սրտում վաղուց էր կուտակվել դառնությունը, և երկարատև զսպված վիշտը անսպասելիորեն դուրս էր հորդել արցունքների անզսպելի հեղեղով: Ռոխելեն, ինչպես վերը ասացինք, ամուսնու ընտանիքում իրեն մենակ էր զգում: Ինչ-որ մի բան նրան այստեղ պակասում էր, բայց ինչ, նա այդ չգիտեր և գիտենալ էլ չէր կարող:

Բայց մի բան հաստատ գիտեր — ծնողները նրան ամուսնացրել էին և բեռը շալակից գցել: «Բեռը շալակից գցել է», հենց այդ խոսքերը բավական են, որպեսզի զգացվի, թե աղջիկը ամուսնանալուց հետո որքան է կտրվում ծնողներից և ծնողներն էլ՝ նրանից: «Բեռը շալակից գցել» բառերը շատ հաճախ են լսվում և այն էլ համարյա բոլոր ընտանիքներում: «Բեռը շալակից գցել է» — ինչպիսի վիրավորանք, ինչպիսի խայտառակություն մի ժողովրդի համար, որը պարծենում է իր բարեսրտությամբ...

Ռոխելեին ամենից շատ զայրացնում էր Մոյշե-Մենդլը՝ իր հանդեպ ունեցած վարմունքով ու շարժուձևով: Ռոխելեն պարզորոշ տեսնում էր, թե որքան չնչին էր այն դերը, որ ինքը՝ իր գեղեցկությամբ, բարությամբ, ազնվությամբ ու նվիրվածությամբ հանդերձ խաղում էր նրա կյանքում: Նա հասկանում էր, որ ամուսնու համար ինքը ոչինչ չարժե:

Այս բոլորից բացի, Ռոխելեն վերջին օրերս ընդհանրապես մի քիչ իրեն բարձիթողի էր արել: Մի՞թե հանաք բան էր, թե ինչպես էր նրան վրդովել, ինչպես էր անդորրը խռովել Ստեֆանյուն: Ռոխելեն, աստվածավախ Ռոխելեն, որ ամբողջ կյանքում թույլ չէր տվել հավատի դավանանքի որևէ թերացում, անսրտունջ կատարել էր կանանց համար պարտադիր կրոնական բոլոր պատվիրանները, այդ առաքինի Ռոխելեն մտածում է մի օտար տղամարդու մասին, նրանից նամակ է ստանում, հանդիպում է նրան և... մեղք չի համարում այդ: Ընդհակառակն, ձգտում է դեպի նա: Ոչ մի հանցավոր գայթակհություն, իհարկե, չկա այդ բանում, Ռոխելեն ցանկանում է նրան միայն տեսնել և միայն լսել նրա ջութակի նվագը:

Տե՛ր իմ աստված, ինչպե՛ս է նվագում: Ինչպե՛ս է նվագում: Հոժար է ոչ ուտել, ոչ խմել, ոչ քնել, միայն թե լսել նրա նվագը... Լսել ու... նայել... Օ՛հ նրա աչքերը: Նրանք զգվում են, նրանք ջերմացնում են...

Ռոխելեն երկու ձեռքով սեղմում է գլուխը և զգում, թե ինչպես է արյունը զարկում քներակներում, ինչպես է խփում սիրտը ու տնքում, տնքում... Ինքն էլ չգիտի, թե ինչ է կատարվում իրեն հետ: Նա գլխովին փաթաթվում է վերմակի մեջ և հանկարծ իր առջև տեսնում Խաե-էթլին, աստված և հոգին լուսավորի: Մտաբերում է նրա և Բինյոմինի պատմությունը: Մարսուտ է գալիս վրան: Ռոխելեն դեն է նետում վերմակը և հանկարծ լսում իրեն ծանոթ ջութակի ձայնը: Սկզբում ավելի հստակորեն լսվեց այն եղանակը, որով հարսանիքից հետո սովորաբար ուղեկցում են խնամիներին: Ռոխելեն այլևս չկասկածեց, որ լսում է հենց այդ եղանակը, և որ նվագում է Ստեֆանյուն: Բայց նա ինչպե՞ս է ընկել այստեղ: Այսօր իրենց փողոցում ոչ մի հարսանիք չկա, և ոչ էլ խնամիներ, որոնց հարկավոր է ուղեկցել: Հապա ի՞նչ էր նշանակում այդ նվագածությունը... Ավելի ու ավելի է մոտենում թմբուկի թնդունը: Նվագախումբը նվագում է տաքացած: Բայց ամենից ավելի հստակ Ստեֆանյուի ջութակի ձայնն է լսվում, նրա նրբին հնչյունները, նրա փափուկ ակորդները ծածկում են բոլոր գործիքները:

Ռոխելեն այլևս չի կարողանում մնալ անկողնում, նա դուրս է թռչում, բացում պատուհանը և կիսովին կախվում դուրս:

Այդպիսի կախարդական գիշեր վաղուց չէր հիշում Ռոխելեն:

Լիալուսինը լողում է անամպ երկնքում, այնտեղ սփռված են բյուրավոր աստղեր, որոնք փայլում են աղամանդների նման: Ի՛նչ տաք, ի՛նչ թարմ ու կենսատու է օդը: Քամու ոչ մի նշույլ: Ոչ մի տերև չի շարժվում սլացիկ բարդիների վրա, որոնք շարվել են ինչպես զինվորները տոնահանդեսում: Միայն երբեմն վանքի այգուց հասնում է ծաղկանց բուրմունքը, քիչ բավականություն չպատճառելով Մազեպովկայի բնակիչներին, որոնք ցերեկը միանգամայն այլ հոտեր են շնչում:

Այդ գիշերային գեղեցկությանը որքան ներդաշնակ էր ինքը՝ Ռոխելեն, նուրբ, անբիծ, առաքինի Ռոխելեն իր գեղեցիկ ձյունաճերմակ պարանոցով, որին պարուրել էին անփույթ թափված խիտ ու շեկ մազերը: Նա այդպիսի մի ժամի կարո՞ղ էր միթե մտածել, որ լուսնյակը և այս վեպի հեղինակը տեսնում են նրա սեփական մազերը: Նրա աչքերն էլ էին կապույտ ու ջինջ, ինչպես և երկինքը, նրա լուսեղեն դեմքն էլ էր հրաշալի, ինչպես այդ պայծառ, լուսավառ գիշերը: Բայց Ռոխելեն ամենից քիչ մտածում էր իր մասին, նրա բոլոր մտքերը ուղղված էին այնտեղ, որտեղից գալիս էին զմայլելի հնչյունները, սիրտը թռչում էր այնտեղ, ուր երգում էր Ստեմպենյուի ջութակը:

Երաժիշտները նվագում են մի ինչ-որ տխուր, սրտաճմլիկ եղանակ, ասես հոգեհանգիստ են երգում՝ ուղեկցելով մեկին այնտեղ, որտեղից վերադարձ չկա: Է՛հ, մենք արդեն այդպես ենք, ուրախության պահին փոճկում ենք հանկարծ ծիծաղի միջից աչքներիցս թափում: Բայց հարսանեկան մեղեդին առանձնապես տխուր է հնչում կեսգիշերին, երբ ամբողջ աշխարհը քնած է և միայն փոքրաթիվ մարդիկ, որ վերադառնում են հարսանիքից, գլուխները խոնարհած, դարդիման ականջ են դնում թախծանուշ նվագին: Որտեղի՞ց է այդ տխրությունը: Դասավորել են, հասկանում եք, զավակի բախտը, կամոքն աստծո՝ ապահովել, էլ ինչ էս ուզում: Բեռը շալակիցդ գցել էս...

Այդ ամառային հանդարտ գիշերը Ստեմպենյուի ջութակը հնչում էր ավելի կրքոտ, քան երբևէ՝ ստիպելով սրտերին անհանգիստ տրոփել, հուզվել, հիացմունքից մարել:

Ռոխելեն կիսամերկ կանգնած է պատուհանի մոտ ու լսում է: Նա ցանկանում է փախչել այստեղից, լուսամուտը կրնկի վրա խփել ու փախչել, բայց մի անհայտ ուժ ձգում է նրան ինչպես մագնիս և թույլ չի տալիս տեղից շարժվել: Նա նայում է հեռուն, և այնպես լարված է լսում այնտեղից հասնող հնչյունները, ասես այդ ոչ թե ջութակն է երգում, այլ Ստեմպենյուն, որ դիմում է իրեն լալագին աղերսանքով ու դառը հանդիմանությամբ...

Այդ ամառային պայծառ գիշերվա մեջ մի թե միայն Ռոխելեն էր, որ հիացել էր Ստեմպենյուի նվագածությամբ: Լուսնյակը, աստղերը, թարմ խոնավությամբ հագեցած օդը, ամբողջ բնությունը, ամենայն արարած քնից արթնացել, դուրս էր եկել տեսնելու, թե ո՞վ է այդպես աննման նվագում, որտեղից են այդ սրտագին հնչյունները:

Գիշերային երգիչը՝ վանքի այգու տխակը, լսելով երաժշտության հնչյունները, ցանկացավ Ստեմպենյուի ջութակի հետ ուժերը չափել, և սովորության համեմատ մի բեկբեկուն դայլալ արձակեց: Բայց արդեն հուլիսի վերջն էր, և նրան չհաջողվեց Ստեմպենյուի առջև պարծենալ. նա, այդ խեղճ թռչնակը, դեռևս ամռան սկզբին էր ձայնը կորցրել և այժմ անուշ դայլալի փոխարեն մի ողորմելի ծվվոց արձակեց, ճիշտ այն կանտորի նման, որի ձայնը Նոր տարվա տոներից հետո կտրվել էր, այնքան որ սինագոգում երգել էր... Բարձրագույն աքլորը լսելով երաժշտությունը, երևի կարծելով, թե արդեն լուսանում է, թափահարեց թևերն ու թնդացրեց երկարաձիգ «ծուրրուղուն» և նորից թառ ելավ հանգստանալու՝ զայրանալով որ անտեղի անհանգստացրին: Վանքի փողոցի շները կեսգիշերին լսելով հրեա երաժիշտների նվագածությունը՝ հաչեցին ու ռռնացին, բայց նրանք էլ շուտով լռեցին, իրենց հանգստի համար ավելի հարմար տեղ ընտրելով: Նույնիսկ Դվոսյա-Մավկայի չալ կովն էլ մի պահ դադարեց որոճալուց, ականջները սրեց և մեծ մեղսապարտուհու նման խոր թառանչեց: Կողք-կողքի քնած երկու այծեր, որ պառկած էին գետնին, հույզերի առատությունից վեր թռան, տեղները փոխեցին և միաժամանակ սկսեցին միմյանց ցույց տալ, թե պոզեր ունեն... Մի խոսքով, լսելով երաժշտությունը, ամեն ինչ արթնանում էր, ալեկոծվում՝ ամառային այդ տաք, հարհանդ, կախարդական գիշերը:

Հենց այդ ժամանակ մեր առաքինի Ռոխելեն, ասես տեղում մեխված, հուզված ու շվարած կանգնած էր լուսամուտի առջև: «Ի՛նչ գիշեր է: Մա ի՞նչ գիշեր է, տեր իմ աստված»: Նա լսում էր իր ողջ

Էությունս մու լիաթոք շնչում գիշերային թարմությունը: Նա կախարդված նայում էր կապույտ երկնքին և հիշում, թե ինչպես աղջիկ ժամանակ ամառային իրիկվա մթնշաղին նստում էր իրենց պատի տակի թմբին և հիանալով լուսնի փայլուն շողերով, քարկտիկ էր խաղում ու երգում.

*Կեսգիշեր է, լուսինն աղոտ  
Շողքն է գցել դռնակին,  
Ուր Պերելեն դռան սեւին,  
Լաց է լինում դառնագին —  
Օ՛հ, խեղճ աղջիկ, ինչ է ցավը  
Ինչ է լալիս ու տանջվում  
Օ՛հ, խեղճ աղջիկ...*

Նա երգում էր, չհասկանալով երգի իմաստը: Իսկ հիմա նա հասկանում է, չնայած ոչ լրիվ, քանի որ զգում էր ոչ այնքան մտքով, որքան սրտով: Նա զգում էր, որ ինչ-որ մի բան գրավում է, հմայում է դեպի այնտեղ, դեպի դուրս: Այստեղ նեղ է, հեղձուցիչ, զզվելի, ո՛հ, որքան զզվելի... Ռոխելեն մի երգ էլ է հիշում, որը մանկության օրերում շատ էր երգում՝ դռանը կանգնած.

*Գետի ափին սպասում ես,  
Ու միգուցե կանչում ես,  
Կանչում ես արի,  
Գետն ինչպես անցնեմ,  
Ախ, ինչպես անցնեմ,  
Լողալ չգիտեմ.  
Իսկ դու կանչում ես,  
Կանչում ես արի,  
Իմ սիրելի՛:*

Բայց հրես, նա բոլորովին մոտիկ է: Ահա նա, Ստեմպենյուն իր ջութակով հանդերձ, երկար խոպոպներով, սև, հրացայտ աչքերով, որոնք միշտ նայում են իրեն՝ փաղաքշում ու ջերմացնում: Եվ այդ միջոցին Ռոխելեն ցանկանում է լինել նրա կողքին, անվերջ լսել նրա նվագը, անվերջ նայել նրա հրաշալի աչքերին...

Միայն մի բան գլխի չի ընկնում Ռոխելեն, Ստեմպենյուն ինչպե՞ս հայտնվեց այստեղ, այս կեսգիշերին: Հարսանեկան հյուրերին ի՞նչն է գրավել այստեղ: Դա չէր կարողանում հասկանալ, որքան էլ գլուխ էր կոտրում: Ճիշտ է, այսօր սինագոգի փողոցում ինչ-որ տեղ հարսանիք կար. բայց հարսանքավորներ ինչպե՞ս են ընկել այստեղ: Նա հանելուկը միայն այն ժամանակ լուծեց, երբ միանգամայն մոտիկ, հենց ուղղակի իրենց տան մոտ տեսավ երաժիշտներին և բոլոր հարսանքավորներին, երբ Ստեմպենյուն կանգ առնելով հենց իր լուսամուտի առջև ավելի ոգեշնչված քան առաջ, սկսեց նվագել: Միայն այդ ժամանակ նա զգաց, թե Ստեմպենյուն ինչ օյին էր հանել՝ հարսի ու փեսայի բոլոր ազգականներին, բարեկամներին ետևից գցած բերել հասցրել էր տասը փողոց հեռու, բերել այստեղ... Ո՞ւմ համար էր նա այդ արել...

Սկզբում Ռոխելեին համակեց մի հաճելի զարմանք, և սիրտը քիչ մնաց դուրս թռչեր հրճվանքից: Նա անկախ իր կամքից այնպես սկսեց քրքջալ, որ վախեցավ սեփական ձայնից: Եվ այդ ժամանակ միայն զգաց, որ կիսամերկ կանգնած է պատուհանի առջև, կիսովին դուրս եկած և մազերը օտար աչքերին ի ցույց: Նա արագ փակեց պատուհանը և ընկավ մահճակալին:

«Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, ահա թե ուր կարող ես հասնել, երբ ամեն ինչ մոռանաս: Օտար տղամարդկանց առջև գիշերով կանգնել պատուհանի առջև համարյա կիսամերկ: Տարվել Ստեմպենյուով, հիմար, հանցավոր մտքերով: Նա էլ պակասը չի: Ամբոխը ետևից գցած քարշ է տալիս տասը փողոց, բերում

այստեղ: Հանուն ինչի: Հանուն ում: Ինչ անամոթություն: Որտեղի՞ց է մարդս այդպիսի հանդգնություն ստանում: Ես նրան կասեմ, ինչ էլ որ լինի, կասեմ: Պետք է վերջ տալ այս բանին: Նա ուզում է ինձ կործանել: Պետք է մեկընդմիջտ նրա հետ բացատրվել: Իզուր չեն ասել «Լավ է սկզբում կռվես, քան վերջում»: Հեքիաթներ է ասում — «սե՛ր»: Շատ պատշաճ է, խոսք չկա... Նա ուզում է, որպեսզի շաբաթ օրը երեկոյան գնամ Վանքի փողոցը,— այնտեղ ամեն ինչ կասի մինչև վերջ, կասի, թե ինչ է ուզում ինձանից: Ա՛խ, թող շուտ գա շաբաթը: Մի իմանամ, թե ինչ է ասելու: Ես կգնամ, անպայմա՛ն կգնամ: Ինչից պիտի վախենամ, պետք է վախենալ միայն աստծուց... Ա՛յ քեզ փորձանք: Ինչ-որ դիվային գայթակղություն: Իզուր չէ, որ նրա մասին այնքան բաներ են պատմում... Բայց ինչու է կպել ինձնից: Ինչու է կործանում ջահել կյանքս: Իսկ ո՞վ է մեղավոր: Ի՛նքս եմ մեղավոր: Ինչու իսկույն նեթ չկտրեցի: Մոյշե-Մենդիլը տանը լիներ, ես նրան ամեն ինչ կպատմեի... Բայց ո՞ւր է նա: Նա միթե մտածում է իմ մասին: Շատ հոգն է, թե տանջվում եմ, ինքս ինձ ուտում: Պետք է քնից առաջ աղոթել: Լավ չի քնել առանց աղոթքի...»:

Քո օգնությանն եմ ապավինում, տե՛ր իմ:  
Տե՛ր իմ, քո օգնությանն եմ ապավինում:  
Ապավինում եմ քո օգնությանը, տե՛ր իմ:

Ռոխելեն դեմքը թաղեց բարձի մեջ, վերմակը քաշեց գլխին, որպեսզի չլսի երաժշտությունը, և բարձրաձայն սկսեց աղոթքը կրկնել:

Բայց լուսամուտից ներս են սողոսկում ջութակի փաղաքշող, զգվող հնչյունները: Ապա հեռանում են, թուլանում և կամաց-կամաց նվազում:

Ռոխելեն նորից ու նորից է կրկնում աղոթքի խոսքերը.

Քո օգնությանն եմ ապավինում, տե՛ր իմ:  
Տե՛ր իմ, քո օգնությանն եմ ապավինում:  
Ապավինում եմ քո օգնությանը, տե՛ր իմ:

Ստեմպենյուի ջութակի մեղեդին արդեն հազիվ է լսվում, Մարում են վերջին հնչյունները ևս: Ռոխելեի կոպերը ծանրանում են, բայց շրթունքները դեռևս շշնջում են կցկտուր.

*Քո օգնությանն եմ . . . .*  
*ապավինում . . . .*  
*Քո օգնությանն եմ . . . .*  
*ապավինում . . . .*

Եվ Ռոխելեն քնում է:

Քնում է Ռոխելեն և երազ է տեսնում, որպես թե Ստեմպենյուն նրա պարանոցին մանյակ է հագցնում, իսկ այդ միջոցին Ֆրեդրիկ անխնա ծեծում է սկեսրայրին՝ Աիզիկ-Նաֆտուլյային, որ աղոթքի զգեստով է: Մոյշե-Մենդիլը մեռածի նման հարբած, հեծել է ցախավելին և սոսկալի ծամածռություններ է անում: Իսկ կողքին Ստեմպենյուն մանյակ է հագցնում Ռոխելեի պարանոցին: Մի կողմում կանգնած է Խաե-Էթըլ անուշ ժպիտը երեսին, նա կպցնում է անթիվ անհամար մումերը:

— Այդ ինչ ես անում, Խաե-Էթըլ,— հարցնում է Ռոխելեն:— Ինչո՞ւ ես այդքան մոմ վառել:

— Մի՞ թե չգիտես,— ծիծաղում է Խաե-Էթըլ,— չէ՞ որ եկողը շաբաթ է: Ժամանակն է արդեն շաբաթօրյա մումերի տակ աղոթելու:

Ռոխելեն նայում է լուսապայծառ մումերին, իսկ Ստեմպենյուն շարունակում է նրա պարանոցին հագցնել մանյակը: Նա այնքան է մոտեցել Ռոխելեին, որ զգում է նրա շնչառությունը: Նա իր ջերմ, մեղմօրոք հայացքով նայում է ուղիղ Ռոխելեի աչքերին: Ռոխելեն ցնծում է հրճվանքից, ծիծաղում է ու երգում: Իսկ Ստեմպենյուն պարանոցին է հագցնում մանյակը...

Հանկարծ մումերը հանգչում են: Խաե-Էթըր անհետանում է, և շուրջը ամայանում: Մութն է ու ցուրտ, ինչպես զնդանում, ինչպես գերեզմանում... Քամին սուլում է ու ռոնում, ինչ-որ տեղից լսվում է ինչ-որ երաժշտություն, թախծալուր երաժշտություն. լալիս է ջութակը, ծանոթ ջութակը միջտնույն Ստեմպենյուի ջութակը: Ինքը, երաժիշտը այլևս չկա, բայց նրա ջութակը երգում է մի մեղեդի, որ հիշեցնում է դատաստանի օրվա պատարագի սրտաճմբիկ աղոթքը: Լսվում է ինչ-որ մեկի լացն ու հեծեծանքը: Դա Խաե-Էթըրն է լալիս իր կորած ջահել կյանքը, որ թռավ ոնց երագ, և գանգատվում իր սրտի հատոր Բինյումինից, որ մոռացավ իրեն՝ Խաե-Էթըրին և ամուսնացավ ուրիշի հետ...

— Վա՛յ, մայրիկ ջան,— ճչում է Ռոխելեն, արթնանում, դառնում է մյուս կողքին ու... նորից քնում:

Եվ նորից երևում են տարօրինակ երագներ: Ամբողջ գիշեր շարունակ նրան երևում են, ոչ, չեն երևում, նա պարզորոշ տեսնում է, զգում, որ Ստեմպենյուն կանգնած է իր մոտ և պարանոցին մարգարտյա մանյակ է կապում... Եվ նորից հայտնվում է Խաե-Էթըր՝ սև մումերը ձեռքին և լալիս է, ողբում՝ բարձրաձայն աղոթք ասելով. «Ամենակարո՛ղ երկնային հայր, արքա արքայից, տիրակալ տիրակալաց, դարեդար, միակ և ամենուրեք: Անսա՛ն և կատարիք մեր աղաչանքը, լսի՛ր աղոթքը անբիծ հոգիների, որ կանգնած սրբազան գահիդ առջև, աղերսում են գթություն նրանց համար, ովքեր ապրում են երկրի վրա և լեցված են մեղքերով ինչպես նուրը՝ հատիկներով...»:

Խաե-Էթըր բարձր, իր ամբողջ ձայնով աղոթք է ասում: Նա լալիս է տաք արցունքները շաղ տալով, տրտնջում իր բախտից ու չքանում...

## XXII

### Կրակը բորբոքվում է

Մազեպովկայում կա մի վանք, որը, ասում են, կառուցվել է դեռևս Մազեպայի օրոք: Բարձր, սպիտակ քարե պարիսպը բոլոր կողմերից օղակել է վանքը և ընդգրկում է քաղաքի համարյա երեք քառորդը: Պարսպի մի կողմի որմնախորշերում տեղավորված են ավանի ամենախոշոր խանութները, մյուս կողմում նկուղներն են: Ավանդությունն ասում է, որ վաղեմի ժամանակներում գայդամակները այստեղ զենք էին թաքցնում: Այժմ այստեղ մթերում են խնձոր և այլ մրգեր: Երրորդ կողմից պարիսպը ծածկված է փաթաթվող բույսերով և պաշտպանված վանքի այգու սլացիկ բարդիներով: Չորրորդ կողմից պարիսպը միանգամայն դատարկ է, շատ տեղերում ծեփը թափված է, որոշ տեղերում աղյուսներ են ընկել, վաղուց ժամանակն է այստեղ անցքեր բացել ու գնալ-գալ: Պարտեզի դիմաց ծվարել են խրճիթներ ու հյուղակներ, մեծ ու փոքր բակեր, ուր ապրում են հրեաներ և ոչ հրեաներ: Պարսպի այդ մասի և նրա դիմաց եղած տնակների միջև ընկած փողոցը կոչվում է Վանքի փողոց:

Այստեղ, այս փողոցի անկյունում, բարդիների տակ կայացավ մեր սիրահարների՝ Ռոխելեի և Ստեմպենյուի, տեսակցությունը:

Մեր ընթերցողը, որ վարժված է «Հույժ հետաքրքիր վեպերի», հավանաբար համբերությունը հատեց՝ կարդալով այս վեպը, ուր չկան ոչ սիրտ կտրատող տեսարաններ, ոչ ցնցող արկածներ: Ոչ ոք

գնդակ չի արձակում ճակատին, ոչ ոք թույն չի ընդունում: Չկան ոչ կոմսեր, ոչ մարքիզներ: Նրանց փոխարեն հանդես են գալիս հասարակ մարդիկ, այն էլ երաժիշտներ և ամենատվորական հրեա կանայք: Այդ ընթերցողը, իհարկե, անհամբերությամբ սպասում է շաբաթ օրվա երեկոյին, երբ Վանքի փողոցում տեղի կունենա հետաքրքրաշարժ ու գողտրիկ տեսարան: Ես պարտավոր եմ, սակայն, նախագուշացնել, որ ընթերցողներին սպասում է խոր հիասթափություն. ոչ մի գայթակղիչ տեսարան տեղի չի ունենալու, որովհետև Ռոխելեն եկավ այնտեղ, ներիր ինձ աստված, ո՛չ որպես շվայտ մի կին, որ ծարավի էր գիշերվա քողի տակ խմելու վայելքի թասից, ողորմա՛ տեր աստված: Նա եկել էր միայն հարցնելու, թե ինչպես էր համարձակվել նա՝ Ստեմպենյուն, այդ երաժիշտը, նամակ գրել իրեն՝ Աիզիկ-Նաֆոյայի հարսին, Մոյշե-Մենդլի կնոջը և այն էլ այնպիսի նամակ...

— Ես նրան պետք է դաս տամ ինչպես որ պետք է,— ասում էր ինքնիրեն Ռոխելեն:— Մեկընդմիջտ խոսեմ՝ պարզորոշ ու վճռական: — «Լավ է սկզբում կռվել, քան վերջում»:

Այդ միտքը պատահաբար չէր եկել նրա գլուխը: Ամբողջ շաբաթվա ընթացքում այդ մասին էր մտածել և հատկապես վերջին օրը: Աստվա՛ծ իմ, ինչպիսի ապրումներ ունեցավ այդ օրը, ինչպես էր կռվում գայթակղության դեմ: Ո՛չ, «գայթակղություն» բառը այստեղ բնավ չի սազում: Հանկարծ որտեղի՞ց գայթակղություն հայտնվեց մի առաքինի հրեա կնոջ մոտ, որը ոչ մի սիրավեպ չի կարդացել և պատկերացում անգամ չունի սիրային արկածների մասին: Միակ սիրային պատմությունը, որ նա լսել էր, դա իր վաղամեծիկ ընկերուհու՝ Խաե-Էթլի, աստված հոգին լուսավորի, սիրավեպն էր, որի մասին մենք վերը պատմել ենք: Ուրեմն որտեղի՞ց էր այդտեղ սեր, գայթակղություն: Հիմարությունն է՛ր: Եթե նա լինի օրիորդ, այդ դեռ ուրիշ բան: Աղջիկը այսպես թե այնպես ազատ թռչնակ է, մազերն էլ դեռևս ծածկված չեն, նշանակում է, գլխի տերն է: Բայց ինչպե՞ս կարող է ամուսին ունեցող կինը, առաքինի և այն էլ լավ ընտանիքի կինը համարձակություն ունենալ մտածելու մի ուրիշ տղամարդու մասին: Նա դժգոհում էր ինքն իրենից, տեղ չէր գտնում, և պատրաստ էր կտոր-կտոր անել իրեն — մեկ նետվում էր անկողնուն, մեկ վեր թռչում՝ ինչպես երագում և ամբողջ էությամբ ձգտում էր փախչել, ինքն էլ չգիտեր թե ուր... Նա վատ էր զգում իրեն, անչափ վատ: Թվում էր, թե սիրտը ուր-որ է դուրս կլթոջի: Հանկարծ նա ցնցվեց, ձեռքն առավ «Թայչ-խումեշ»-ը<sup>10</sup>, շտապով բացեց և աչքը ընկավ հետևյալ տողերին՝ «Եվ Դինան, դուստրը Լիայի դուրս ելավ նայելու այդ երկրի դուստրերին և նորան տեսավ Միվքեն, որդին Եմովրայի և բռնի տիրացավ: Եվ նորա սիրտը ձուլվեց Դինային: Բեխասը գրում է — Միվքեն համոզեց նորան»:

Ռոխելեն նայեց աստվածաշնչին, որը դեռևս իր նշանված ժամանակ նվիրել էր սկեսուրը, բայց մտքերը հեռու էին, Վանքի փողոցում, այնտեղ, ուր բարդիների տակ խոստացավ սպասել Ստեմպենյուն, և նա, իհարկե, կսպասի: Նոր էր միտքը կանգ առել Ստեմպենյուի վրա, որ ամբողջ էությամբ անդիմադրելիորեն ձգտեց դեպի նա:

— Ես ցանկանում եմ նրան միայն հարցնել, թե ի՛նչ է ուզում ինձանից, ինչո՞ւ է փչացնում օր ու արևս:

Եվ Ռոխելեն նորից է հիշում ընկերուհուն՝ Խաե-Էթլին: Ինչպես էր խեղճը տանջվում Բինիոմինի համար... Բայց Խաե-Էթլը աղջիկ էր, իսկ ինքը՝ Ռոխելեն, «ամուսնու կինը» (որքա՛ն դաժան է այդ խոսքերի իմաստը հրեա կնոջ համար...): Իսկ նա, Ստեմպենյուն: Ո՛վ է նա: Երաժիշտ: Ի՛նչ

<sup>10</sup> Հնգմետյան (աստվածաշնչի առաջին մասը) թարգմանված ժամանակակից հրեերենով (իդիշ) և ծանոթագրություններով:

ընդհանուր բան կարող է լինել իր և նրա միջև: Ի՛նչ է ներկայացնում իրենից, որ համարձակվում է նամակ գրել: Ի՛նչ հանդգնություն: Ի՛նչ լկտիություն: Ինչպե՛ս է համարձակվում:

— Ո՛չ,— հաստատ որոշեց Ռոխելեն:— Ինչ ուզում է լինի, ես նրան պիտի ասեմ: Ի՞նչ ունեմ վախենալու: Ես կխոսեմ երես առ երես: Ես կգնամ այնտեղ... Ոչ ոք ինձ չի տեսնի: Մի քանի րոպեով: Չէ՞ որ հեռու էլ չէ, ահա, հենց այստեղ է, համարյա դիմացը:

Ռոխելեն բաց պատուհանից նայում է Վանքի փողոցին: Նա տեսնում է սլացիկ, հպարտ բարդիների շարքը, վանքի այգուց լավում է թռչունների ճովողյունը: Եվ նրա մտքերը թռչում են այնտեղ, ուր մի ժամ հետո, կամ միգուցե ավելի շուտ կտեսնի Ստեմպենյուին, կխոսի նրա հետ դեմառդեմ: Նրա սիրտը տրոփում է, թփրտում, և բուռները երկարում են անսահման: Նա անհամբերությամբ սպասում է երեկոյին, երբ սկեսրայրը և ամուսինը կվերադառնան սինագոգից և կգբաղվեն շաբաթ օրվա անցուդարձով: Սկեսուրը, հանելով տոնական զգեստը, կսկսի հոգալ ինքնատեղի և բորշի մասին: Այն ժամանակ Ռոխելեն գլխին կգցի շալը և կամաց դուրս կգա տնից, որպես թե՛ մի քիչ զբոսնելու: Ո՞վ պիտի նկատի նրա բացակայությունը: Նա կգնա այնտեղ, ուր... Տե՛ր ասոված, ինչպես է դողում ամբողջ մարմնով: Ինչպես են այրվում այտերը: Հապա սիրտը, խեղճ սիրտը, ահա ուր-որ է դուրս կթռչի կրծքից: Ըոպե առ րոպե ավելի ավելի է տենչում դեպի այնտեղ, դեպի նա: Ռոխելեն այլևս անկարող է մտածել որևէ այլ բան: Ոչինչ չի տեսնում, բացի Վանքի փողոցի բարդիներից, բացի Ստեմպենյուից, բացի նրա հրացայտ աչքերից և Ստեմպենյուի ջութակի կախարդական հնչյուններից:

Միայն մի միտք է համակել նրան — դեպի այնտեղ, Ստեմպենյուի մոտ: Լինել նրա հետ: Եվ աշխարհում չկար այն ուժը, որ կարողանար ետ պահել նրան:

### XXIII

#### Կրակը բռնկվեց և իսկույն մարեց

Հենց որ երեկոն իջավ, Ստեմպենյուն իր երաժիշտներին ուղարկեց «Զմիրես»<sup>11</sup>, իսկ ինքը ձևի համար վերցրեց ջութակը, որպեսզի Ֆրեյդլը կարծեր, թե ինքն էլ է հարսնացուի տունը գնում: Բայց դուրս գալով տնից, նա իսկույն ևեթ ջութակը տվեց Մեխաչ-դիոլչուն, իսկ ինքը ուղևորվեց Վանքի փողոցը: Շառերի սովերում քայլելով ետ ու առաջ և մերթ ընդ մերթ կանգ առնելով, նայում էր այնտեղ, որտեղից պետք է երևար գեղեցկուհի Ռոխելեն: Այն, որ նա կգար, դրանում կասկած լինել չէր կարող, սիրտը գուշակում էր. նա համաձայնությունը կարդացել էր Ռոխելեի հայացքում այն օրը, երբ նա եկել էր Ֆրեյդլի մոտ՝ մանյակ գնելու:

Սպասումները չխաբեցին Ստեմպենյուին:

Քառորդ ժամ անց, նա փողոցի վերջում տեսավ սպիտակ շալը գլխին, մի կանացի կերպարանք: Նա գալիս էր արագ, երկչոտ նայելով չորս կողմ: Սպիտակ շալը քաշել էր ճակատին, համարյա մինչև աչքերը: Նա ամբողջովին համակված էր հուզմունքով, ձեռքերը դողում էին, ատամներն իրար չէին առնում, կուրծքը բարձր ելևէջ էր անում: Նա կանգ է առնում, մի հայացք ձգում շուրջը և նկատելով Ստեմպենյուին, արագ քայլում է դեպի նա:

<sup>11</sup> Հարսանիքից առաջ, վերջին շաբաթ օրվա երեկոյան, ըստ հինավուրց սովորության, աղջիկները հավաքվում են հարսնացուի մոտ պարելու: Դա կոչվում է «Զմիրես» — երգասացություն, իսկ ուրիշ տեղերում՝ պարզապես «շաբաթ երեկոներ»: (Օան. Շոլում-Ալեյխեմի):

— Ես եկա ձեզ հարցնելու, թե ինչպես համարձակվեցիք...

— Ռոխելե՛, խնդրում եմ, մի ասիր «ոուք», «ոու»,— աղերսեց Ստեմպենյուն վերցնելով նրա ձեռքը և նայելով աչքերին:

Ռոխելեն նրա հայացքում տեսավ ցուրտ այն աստղերի, որոնք նայում էին մութ-կապույտ երկնքից՝ այն չքնաղ ամառային գիշերը:

Մազեպովկայի տղամարդիկ արդեն երգել վերջացրել էին գալիք օրվա մաղթանքի աղոթքը, Եղիա մարգարեին հատուցել փառաբանություն և տնքալով ու տրտնջալով վատ ժամանակներից, երագում էին այն մարգարեի երջանիկ բախտը, որին վիճակվել էր սեփական աչքերով տեսնել Եղիա մարգարեին և փոխադարձ թոթվել միմյանց ձեռք... Մազեպովկայի կանայք հանել էին տոնական գլխարկները, վրայից մի կողմ նետել շաբաթ օրվա զգեստներն ու զարդերը անցել առօրյա տնային գործերին: Մի խոսքով, Մազեպովկան զբաղված է «թագուհի շաբաթվա» վայելումով, և ամբողջ ավանում ոչ ոքի մտքովն անգամ չի կարող անցնել, որ հենց այդ նույն ժամին Դվոսյա-Մալկայի հարսը՝ համեստ ու առաքինի Ռոխելեն, Վանքի փողոցում զրուցում է երաժիշտ Ստեմպենյուի հետ այնպիսի բաներից, որոնք ոչ մի կապ չունեն առաքինության հետ...

Միայն կապույտ երկինքը, պայծառ աստղերը, վանքի սլացիկ բարդիները և մեկ էլ գիշերային թռչունները, որ ճովողում էին այգում իրենց բարբառով — նրանք, միայն նրանք էին ականատես այդ հանդիպմանը: Նրանցից բացի, ոչ ոք չէր էլ կարող գուշակել, որ այդ չքնաղ, դյուրանքով լեցուն գիշերը, վանքի ծառերի հովանու տակ, հրեական տներից հեռու, քրիստոնյաների փողոցում, Ռոխելեն Ստեմպենյուի հետ կողք-կողքի կանգնած, վայելում է մի այնպիսի երանություն, որ աշխարհում մոռացնել է տվել ամեն ինչ: Այստեղ, այս փառահեղ բնության գրկում, նա իրեն այնքան լավ էր զգում, որքան չէր զգացել երբեք: Տազնապը, որ համակել էր նրան այստեղ գալիս, չքացավ: Նրան թվում էր՝ թևեր են աճել և ինքը կարող է ճախրել ու պտտվել ինչպես ազատ մի թռչնակ:

Ստեմպենյուն ավելի մոտեցավ Ռոխելեին և ձեռքը դրեց նրա ուսին: Նա ցնցվեց, ուզեց ետ ընկրկել, բայց չարեց: Միայն նայեց Ստեմպենյուին, և նրա երկար թարթիչներին փայլեցին արցունքի կաթիլներ:

— Ինչո՞ւ ես լալիս, Ռոխելե, — հարցրեց Ստեմպենյուն:

— Ա՛խ, Ստեմպենյու, այնպես լավ է այստեղ, ձեզ մոտ... քեզ մոտ, Ստեմպենյու: Ես ինչո՛ւ... Ինչո՛ւ...

— Իմը չես: Ա՞յդ ես ուզում ասել: Դու ի՛մն ես, Ռոխելե, ի՛մն ես:

— Քո՞նք, Ստեմպենյու: Դա մի՞ թե հնարավոր է:

— Դու իմն ես, իմը, որովհետև ես քոնն եմ, ամբողջովին քոնը, հավիտյանս հավիտենից, մինչև վերջին շունչս, մինչև մահ ու գերեզման: Ի՛մ կյանք, ի՛մ ուրախություն...

— Բինյոմինն էլ էր այդպես ասում ու երդվում, բայց հետո...

— Ի՞նչ Բինյոմին, — զարմանքով հարցրեց Ստեմպենյուն: Եվ նա այնպես նայեց Ռոխելեին, ինչպես նայում են սիրելի մանկիկին, որը մի ինչ-որ անհեթեթ բան է ասում: — Այդ ո՞ր Բինյոմինի մասին ես ասում, հոգիս:

— Բինյոմինը Խան-Էթլի հորեղբոր տղան էր: Իմ ընկերուհին՝ Խան-Էթլը, որք էր, նա մի հորեղբոր տղա ուներ, որի անունը Բինյոմին էր: Նրանք խոսքմեկ էին արել ամուսնանալ: Բինյոմինը

խոստանում էր, երդվում բոլոր սրբություններով, բայց... աստված իմ, ինչպիսի վշտալի, ինչպիսի սարսափելի վախճան: Մահացավ խեղճ Խան-Էթըր... Կյանքից թանկ էր Բինյոմինը նրա համար, նա հալումաշ եղավ վշտից: Նա ինքն է պատմել ինձ: Կարծես ողջ լինի, գալիս կանգնում է աչքերիս առջև, և հաճախ թվում է ինձ, որ նստած է իմ պատուհանին, ականջ է դնում իմ երգերին, լալիս ու զգուշացնում. «Օ՛, մի հավատա տղամարդկանց: Նրանց հավատալ չի՛ կարելի»:

Ռոխելեն պատմում է իր հանգուցյալ ընկերուհու մասին, իսկ Ստեմպենյուն համբուրում է նրա ձեռքերը, զրկում է, նայում աչքերին... Ռոխելեն շարունակում է Խան-Էթլիտիտուր պատմությունը, որը հավվել էր մոմի պես իր թանկագին, իր բաղձալի Բինյոմինի սիրուց...

Խան-Էթըր արդեն քանի տարի շիրիմումն է, բայց Ռոխելեն լավ է հիշում նրան: Հանգուցյալ ընկերուհին հաճախ է այցելում նրան երագում... Եվ հիմա հանկարծ, իրեն թվաց, որ Խան-Էթըր, սպիտակ սավանով փաթաթված, նայում է վանքի պարիսպի վրայից ու գլուխն օրորում: Ցույց տալով Ստեմպենյունին, ուրվականը կշտամբանքով գլուխը տարուբերում է, կարծես ասում է. «Ի՞նչ ես անում դու այստեղ»:

— Այդ ինչն՛ է, Ռոխելե, ինչն՛ է համար ես ասում, կյանքիս հատոր: Ինչու համար այս մուրթ-մթնով հիշել այդպիսի բաներ: Նայիր ինձ քո հրաշալի աչքերով: Նրանք փայլում են ինչպես ադամանդներ...

Ստեմպենյուն չէր հասցրել վերջացնելու վերջին բառը, երբ Ռոխելեն հանկարծ դուրս պրծավ նրա ձեռքից այնպիսի արագությամբ, որ Ստեմպենյուն վախեցավ:

— Աստծու սիրուն, Ռոխելե, ի՞նչ պատահեց: Նա ցանկացավ նորից բռնել նրա ձեռքը, բայց Ռոխելեն թույլ չտվեց: Ամբողջ մարմնով դողալով, նա շնջաց.

— Տեսնո՞ւմ ես: Ահա՛ նա: Ահա՛ կանգնած է: Նայում է այս կողմը, ուղիղ մեզ...

— Ո՞վ է կանգնած: Որտե՞ղ է կանգնած: Ի՞նչ ես ասում, Ռոխելե, հոգիս, եկ ինձ մոտ, ձեռքդ տուր ինձ...

— Ա՛խ, թող ինձ, թող ինձ, Ստեմպենյու: Թողեք ինձ: Տեսնո՞ւմ եք, ահա այնտեղ ինչ-որ սպիտակ բան է կանգնած... Օ՛յ, դա Խան-Էթլն է: Այո, Խան-Էթլն է... Թողեք ինձ: Ինչպե՛ս եք համարձակվում: Բարի գիշե՛ր... Բարի...

Եվ Ռոխելեն անհետացավ ծառերի ստվերում: Ստեմպենյունի աչքերի առջև մեկ երևում, մեկ անհետանում էր նրա սպիտակ շալի ծայրերը, որ քամին ծածանում էր, նրանք ասես երկու սպիտակ թևեր լինեին... Այդպես չքանում է բարի հրեշտակը, այդպես անէանում է անուշ երագը...

Տուն վազելով, Ռոխելեն ցանկանում էր բոլորին պատմել, թե ինքը որտեղ էր եղել և ում հետ խոսել: Բայց նա իրենց ընտանիքը գտավ սեղանի շուրջը բազմած, որի վրա քլթթլթում էր մեծ ինքնատեղ: Կային նաև մի քանի հյուրեր, և բոլորը զբաղված էին լուրջ, գործարար խոսակցությամբ: Հրեաների մոտ հնուց այդպես է ընդունված, շաբաթվա վերջում հավաքվում են որևէ մեկի մոտ և հանգստանալուց հետո ամբողջ օրը զրուցում գործերից, վաղվա տոնավաճառից, քաղաքականությունից, դեսից-դենից:

— Էզուցվա տոնավաճառին վրան չեմ խփելու,— ասում է մանուֆակտուրայի հաստամարմին վաճառականը:— Թո՛ղ գետնի տակն անցնեն տոնավաճառները: Գիտե՛մ, առաջին անգամը չեմ տոնավաճառ գնում: Դառնությունից ու տհաճությունից բացի, ոչ մի լավ բան մի սպասիր:

— Ինչո՞ւ եք էդպես ասում,— խառնվեց Դվոսյա-Մալկան՝ ձեռքերը խաչելով կրծքին:— Ճիշտն ասած, ռեբ Յուդլ, չեմ հասկանում, թե ինչու եք տոնավաճառից էդպես դժգոհում: Աչքով չտամ, անցյալ տոնավաճառին կարծեմ ձեր առևտուրը այնքան լավ գնաց, որ թող աստված մեր բարեկամներին հենց էդպիսի հաջողություն տա: Ամբողջ օրը կարծեմ փող էիք վաստակում...

— Քեզ մոտ ամեն ինչ կոչվում է փող վաստակել,— ընդհատեց Աիզիկ-Նաֆտոլյան, կնոջը չնայելով և շարունակելով համրիչը չրխկացնել:

— Իսկ ես կցանկանամ, որ այս տոնավաճառը ինձ համար այնպես հաջող լինի, ինչպես անցյալ,— խոսակցության մեջ մտավ Մոյշե-Մենդլը,— չեմ հասկանում, թե ինչու պիտի թաքցնեմ այդ:

— Բանն էլ այն է,— ասաց Յուդլը,— որ դուք ոչ մի կերպ չեք ուզում մարդուն հավատալ: Ուրիշի խանութում հենց մի տասը հաճախորդ կտեսնեն, որոնք աչքները չորս արած նայում են, թե մի բան թոցնեն, և ձեզ արդեն թվում է, որ մարդը փող է վաստակում, ու սկսում եք նախանձել:

— Գիտեք ինչ, ռեբ Յուդլ,— ասաց երկու աչքով շիլ մի երիտասարդ:— Թող տոնավաճառը գրողի ծոցի գնա: Վաղվա երկար օրը դեռ առջևներումս է, հավատացեք, տոնավաճառը կկարողանա մեզ բոլորիս եռապատիկ զգվեցնել: Ավելի լավ է, եկեք ուրիշ բանից խոսենք:

Եվ աշխույժ գրույց սկսվեց սինագոգի գործերից, քաղաքականությունից և հասկանալի է՝ նաև պատերազմից: Գոռում են, գոչում, ծխախոտից բարձրացած քուլաները խառնվում են ուրախ թշնամուց ինքնատեղի գոլորշիներին: Խոհանոցի վառարանը թունդ վառվում է, այնտեղ սագի փորոտիքով բորչ է եփվում՝ «թագուհի շաբաթը անցկացնելու համար»...

— Որտե՞ղ էիր, Ռոխելե,— հարցնում է Դվոսյա-Մալկան հարսին:

— Էստեղ, ոչ հեռու, Վանքի փողոցում:

— Դե, ինչ կար դրսում: Լա՞վ եղանակ էր: Տա աստված, որ մինչև տոնավաճառի վերջը օրերը չխառնվեն: Ինչո՞ւ ես գունատվել, աղջիկս: Գլո՞ւխդ է ցավում, ինչ է: Գնայիր քո սենյակը պառկեիր:

Բոլորը շրջվեցին ու նայեցին Ռոխելեի գունատ դեմքին և միաբերան որոշեցին, որ ինքնատեղից ծխահար է եղել:

Ռոխելեն գնաց իր սենյակը և մտավ անկողին: Սեղանատանն այդ ընթացքում գրույցի համար նոր նյութ գտնվեց — խոսք բացվեց ծխահարության մասին: Այդպիսի մի փուչ, այդպիսի, թող ներվի ասել, հիմար բան, ինչպես ծուխն է, և ահա, համեցե՛ք: Քանի-քանի անգամ է պատահել, որ ծուխը մարդուն գետնովն է տվել, մահվան պատճառ դարձել: Հյուրերից մեկը պատմեց, թե ինչպես իր հանգուցյալ պապի տանը մեկ անգամ քիչ էր մնացել ամբողջ ընտանիքը այն աշխարհը գնար: Մյուսի պատմությունն ավելի հետաքրքիր էր, նա պատմում էր, թե ինչպես իր քեռու ընտանիքը մազ էր մնացել թունավորվեր մի ինչ-որ ձկնից, որը կոչվում է «մարինկա»: Երբորդը պատմեց տանու չարքերից, վիուկներից, սատանեքից: Պատմեցին, պատմեցին, մինչև որ խոսք ընկավ մահվան մասին:

— Թեկուզ ինչից էլ խոսես, մեկ է, մահվան մասին խոսելուց չես խուսափի,— ասաց հյուրերից մեկը:

Մոյշե-Մենդլն այդ ժամանակ երգում էր «Եղիա մարգարեն»:

— «Եղիա մարգարե՛ ...» հարկավոր է նայել... «Եղիա մարգարե՛ Տիշբայից...», ինչ է անում... «Եղիա Գաղաադից...» իմ ուղղադավան կինը...

Նա վերկացավ սեղանի մոտից և գնաց Ռոխելի մոտ:

## XXIV

### Ռոխելեն վերադառնում է ճշմարիտ ուղուն

— Փրկեցե՛ք,— լավեց հանկարծ հարևան սենյակից մի ճիչ: Բոլորը նետվեցին Ռոխելի սենյակը: Նա ձգված պտկված էր մահճակալին, գլուխը ետ գցած... Նրա մոտ վախից ոչ կենդանի, ոչ մեռած կանգնած էր Մոյշե-Մենդլը:

— Ի՞նչ է պատահել: Բանն ինչո՞ւմն է: Ջո՛ւր: Շուտ արեք, ջուր բերեք:

— Ջո՛ւր: Ջո՛ւր: Բղավում էին բոլորը միաձայն, բայց ոչ ոք տեղից չէր շարժվում:

— Վա՛յ, ամա՛ն, աստծու կրակը թափվի գլխիս,— ճչում էր Դվոսյա-Մալկան: Նա շտապով գավաթը բերեց, ջուր առավ բերանը և փչեց Ռոխելի մահու չափ դալուկ երեսին:

— Ուղարկեցեք բժշկի ետևից,— ոչ իրեն ձայնով գոչեց Մոյշե-Մենդլը:

— Բժի՛շկ: Բժի՛շկ:— Կրկնեցին բոլոր հյուրերը նայելով մեկ-մեկու և տեղներից չշարժվեցին:

— Ձեռքերը թաշկինակով կապե՛ք, քիթը հուփ տվե՛ք:

— Քի՛թը, քի՛թը,— գոչեցին բոլորը խմբովին, շարունակելով մեխված կանգնել տեղներում:

— Ա՛յ, այդպես, Դվոսյա-Մալկա: Պի՛նդ: Պի՛նդ,— հարայ էին տալիս հյուրերը տանտիրուհուն, որը քափ ու քրտինք մտած տրորում էր հարսի քունքերը, սեղմում քիթը, ջուր ցանում երեսին, գոռով բաց անում կոպերը: Վերջապես հաջողվեց Ռոխելի ուշքը ետ բերել:

Ռոխելեն նայեց շուրջը, ասես քնից արթնանալով:

— Որտե՞ղ եմ ես: Շո՛գ է, շո՛գ է:

— Ցրվեցե՛ք խնդրում եմ,— կարգադրեց Դվոսյա-Մալկան, ուղեկցելով հասարակությանը դեպի դահլիճ, իսկ ինքը որդու հետ մնաց հարսի մոտ, որն աչքը չէր հեռացնում ամուսնուց:

— Ի՞նչ է պատահել քեզ, աղջիկս,— հարցրեց սկեսուրը:

— Ի՞նչ է պատահել, Ռոխելե,— հարցրեց Մոյշե Մենդլը խոնարհվելով դեպի կինը:

— Թող մայրիկը գնա այստեղից,— կամացուկ շշնջաց Ռոխելեն:

— Մայրիկ, խնդրում եմ դուրս գնաս,— ասաց Մոյշե-Մենդլը:

Ուղեկցելով մորը մինչև դուռը, նա նորից վերադարձավ կնոջ մոտ:

— Ասա ինձ, քեզ ի՞նչ է պատահել,— հարցրեց Մոյշե-Մենդլը և առաջին անգամ նրա ձայնի մեջ զգացվեց խոր քնքշանք:

— Օ՛յ, Մոյշե-Մենդլ: Երդվի՛ր, որ դու ոչ ոքի չես պատմի: Երդվի՛ր, որ ամեն ինչ կմնա մեր մեջ: Խոստացի՛ր, որ ինձ կներես, որ քո դեմ... Եթե Խաե-Էթլը չլիներ, աստված հոգին լուսավորի, եթե Խաե-Էթլը ինձ չհիշեցներ: Մոյշե-Մենդլ, թանկագի՛նս:

— Ախր մտածիր, Ռոխելե, թե ինչեր ես ասում: Դու գառանցում ես: Նա չէ՞ որ վաղուց է մեռել:

— Ես նրան շատ եմ տեսնում երազում... Բայց այսօր... հենց հիմա... Ա՛խ, Մոյշե-Մենդլ, կռացիր, ավելի կռացիր... Ա՛յ, այսպես... ես վախենում եմ... ես զոջում եմ... զոջում եմ...

Ռոխելեն հետզհետե ավելի ու ավելի է ձգվում դեպի ամուսինը, մինչև որ հայտնվեց նրա գրկում: Մենյակում մուրճն էր: Միայն դրան ճեղքով սեղանատնից ներս էր թափանցում լույսի մի բարակ շերտ: Ռոխելեն և Մոյշե-Մենդլը հազիվ էին կարողանում միմյանց տեսնել: Նրանց հայացքները հանդիպեցին, նրանց աչքերում բռնկվեցին կայծեր, այդպես նայում են միմյանց առաջին տեսակցության եկած երջանիկ սիրահարները միայն, երբ որ սիրտն է խոսում և ոչ թե լեզուն, և որ աչքերը խոսում են բառերից էլ հասակ:

— Ասա ինձ, Մոյշե-Մենդլ, սիրելիս, իսկապե՞ս թանկ եմ քեզ համար:

— Այդ ի՛նչ հարց է:— Դուրս թռավ Մոյշե-Մենդլի բերանից:— Դու լցրել ես իմ ամբողջ սիրտը, ինչպես... Ես ինքս էլ չգիտեմ ինչպես...

Այլ կերպ Մոյշե-Մենդլը չկարողացավ արտահայտել իր սերը հանդեպ Ռոխելեն: Բայց կարելի էր հավատալ, որ ասում էր անկեղծորեն, որ այդ զգացումը նա ապրել էր նույնպիսի խորությամբ, թերևս առավել խորությամբ, ինչպես մի ուրիշը, որ գիտեր պերճախոսությամբ նկարագրել այն ամենը, ինչ տեղի էր ունենում իր հոգում:

Բայց եկեք մենակ թողնենք երիտասարդ երջանիկ զույգին մթին սենյակում, ուր նրանք իրենց մեկ տարվա համատեղ կյանքի ընթացքում՝ առաջին անգամն էին միմյանց հետ այդպիսի մտերմիկ զրույց ունենում, և թող քնեն, ինչպես երկու աղավնյակ: Այն, ինչ մի ամբողջ տարի խորունկ թաղված էր եղել յուրաքանչյուրի սրտում, այժմ ջրի երեսն էր ելել:

Երբ Ռոխելեն իրեն քիչ լավ զգաց, Մոյշե-Մենդլը նստեց նրա մոտ և նորից սկսեց աղոթք դնդնալ:

— «Եղիա մարգարե՛, Եղիա Տիշբայի՛ց» «Եղիա Գաղաադի՛ց...»:

Ռոխելեն ընդհատեց նրան:

— Ես մի խնդիրք ունեմ, Մոյշե-Մենդլ: Ասա ինձ, կկատարե՞ս թե ոչ:

— Այսինքն: Ի՞նչ խնդիրք է: Ասա, Ռոխելե, ես պատրաստ եմ ամեն ինչ անել քեզ համար: Թեկուզ լուսնյակը ցած բերել երկնքից...

— Հերիք է, Մոյշե-Մենդլ, հերիք է, որքան կերանք ծնողների հացը: Դու հո սինագոգի անկյալներից չե՞ս: Փա՛ռք ասածո: Մի փոքրիկ գումար ունենք, գնանք այստեղից մեծ քաղաքը, գնանք Եգուպեց: Այնտեղ հարազատներիս ու բարեկամներիս շրջանում և քեզ հետ միասին ապրելով, ինձ երջանիկ կզգամ: Ժամանակն է ինքնուրույն ապրելու: Հերիք է, որքան ամեն ինչ գտանք պատրաստի: Անկեղծ եմ ասում, ինձ այնպես է ձանձրացրել, այնպես է հոգնեցրել, որ կհավատա՞ս եթե ասեմ՝ ապրելս անգամ չեմ ուզում... Ես և դու ձերոնց շրջապատում մեզ զգում ենք օտար, միանգամայն օտար...

Մոյշե-Մենդլը մտքի մեջ ընկավ ու զարմանքով նայեց Ռոխելին: Հետո նորից սկսեց օրորվել ու դնդնալ՝ «Եղիա մարգարեն»:

— Օ՛խ, սքանչելի բան ասացիր... «Եղիա մարգարե՛...»: Թե ինձ կհարցնես... Ինչո՞ւ չէ... «Եղիա Գաղաադի՛ ց...»: Թեկուզ հենց այս շաբաթ:

— Դու ինձ համար պատրաստ ես ամե՛ն ինչ անել, Մոյշե-Մենդլ, ամե՛ն ինչ,— զգացված ասաց Ռոխելին:— Այնպես չէ՞: Մենք կապրենք առանձին, մեր ընտանիքով: Ես տնտեսությամբ կզբաղվեմ և քեզ կպահպանեմ, ինչպես աչքիս լույսը... Օ՛յ, Մոյշե-Մենդլ, դու այնքան անուշադիր ես, մի բարի խոսք չեմ լսել քեզանից: Բայց այսօր ուրիշ ես, միանգամայն ուրիշ:

— «Եղիա մարգարե՛»,— կիսաշշուկ շարունակեց Մոյշե-Մենդլը,— «Եղիա մարգարե Տիշբայի՛ ց... Եղիա Գաղաադ...»:

Հենց այդ ժամանակ սեղանատանը տանտերերի և հույրերի միջև միանգամայն այլ խոսակցություն էր գնում:

Ամեն մեկը գուշակություն էր անում ռեբ Աիզիկ-Նաֆտոլյայի հարսի հանկարծակի ուշաթափության պատճառների մասին: Մեկը ենթադրում էր, որ դա չար աչքից է, մյուսը, ընդհակառակն՝ միջանցուկ քամուց: Վերջապես երրորդն էլ, մի տարեց տղամարդ, որը ամուսնացած որդիների հայր էր, սա էլ իր գուշակությունն արեց:

— Լսեցեք, թե ձեզ ինչ պիտի ասեմ: Ես ինքս երեք հարս ունեմ: Ես արդեն բավականաչափ փորձառություն ունեմ նման գործերում: Հավատացնում եմ ձեզ, դա նախակարապետն է: Ռեբ Աիզիկ-Նաֆտոլյա, պատրաստվեցեք պապիկ դառնալու... Դվոյա-Մալկա, հոգով ու սրտով շնորհավորում եմ ձեզ: Դե, դե, ի՞նչ կա այդտեղ տարօրինակ: Ի՞նչ եք ամաչում, Դվոյա-Մալկա: Մովորական բան է:

Դվոյա-Մալկան երանությունից հալչում է, նա վաղուց էր սպասում այս բախտավորությանը:

— Դե՛, դե՛, — թողեք,— ասում է նա, ձևացնելով թե բարկացած է:— Ձեր կատակները ձեզ պահեք: Գնամ մի տեսնեմ բորշը ինչ եղավ: Այսօր ինչ-որ շատ եփվեց, ոչ մի օր այսքան չէր եփվել...

## XXV

### Մեկ տարի անց

«Քաղցրավուն պատմություն է», կասի թերևս հիասթափված ընթերցողը, որ դաստիարակված է «գրավիչ» վեպերով, ուր հերոսները կախվում են, գնդակահար լինում, իրենց անդունդը նետում կամ թույն ընդունում, ուր մեղամեղը դառնում է կոմս, իսկ կանտորի մոտ երգողը, ինչ-որ անհայտ գազան: Բայց ես ի՞նչ կարող եմ անել, երբ մեզ մոտ չկան ոչ կոմսեր, ոչ իշխանուհիներ: Կան միայն սովորական մարդիկ, հրեա կանայք և հարսանիքներում նվագող երաժիշտներ... Բայց արդարանալու հարկ չկա: Այժմ ընթերցողը ինչ-որ ցանկանա, կարող է ասել: Եթե մեզ հաջողվել է նրան հասցնել մինչև այստեղ, նա դարձյալ կգա մեր ետևից, չէ՞ որ նրան հետաքրքրում է, թե ինչ եղան Ռոխելին և Ստեմպեյնուն:

Բաց թողնենք մի ամբողջ տարի: Մարդու կյանքում ի՞նչ է մեկ տարին, և շաբաթ օրվա իրիկնապահին ներս մտնենք Աիգիկ-Նաֆտոլյայի տունը: Մենք այստեղ կհանդիպենք հենց այն նույն մարդկանց, որ հանդիպեցինք անցյալ տարի և կլսենք հենց նույն խոսակցությունը, ինչ որ անցյալ տարի — ոչինչ չէր փոխվել. գրուցում էին տոնավաճառից, օրվա վաստակից, երեխաներից, և վերջապես հասան Մոյշե-Մենդլին և Ռոխելեին, որոնք արդեն ապրում էին Եգուպեցում:

— Դվո՛ւյա-Մալկա, հապա ցույց տուր նամակը, որ երեխեքը ուղարկել են Եգուպեցից,— դիմում է Աիգիկ-Նաֆտոլյան կնոջը:— Ապա, ռեբ Յուդլ, մի կարդացեք, լսենք:

— Թո՛ղ նա կարդա,— պատասխանում է Յուդլը, ցույց տալով մի շիլ երիտասարդի:

Սա վերցնում է նամակը և վարժ, առանց կապ ընկնելու կարդում.

«Խաղաղություն և հավիտենական բարեհաճություն և իմ սիրասուն հորը, իմաստուն, ամենագետ, կրթյալ, ուսյալ, նշանավոր այր, մեծապատիվ պարոն Աիգիկ-Նաֆտոլյային, որդուն՝ Մոյշե-Հովսեփի, թող օրհնյա՛լ լինի հիշատակը նրա:

Եվ աստվածապաշտ, առաքինի իմ մորը, փառաբանված, ինչպես Եսթեր և Ավիգայիլ, ուսյալ, կրթյալ տիկին Դվոյա-Մալկային, դստերը Մոյշե-Մենդլի, թող օրհնյա՛լ լինի հիշատակը նրա:

Եվ բոլոր տնեցիներին՝ խաղաղություն և օրհնություն:

Ինչպես արևն է փայլում կապույտ երկնքում՝ ճեղքելով մութ ամպերը, և ինչպես նրա ճառագայթները՝ փայլատակելով բարձր երկնքով կապույտ եթերից քշում են գիշերվա խավարը...»

— Չէ՛, էդ չեղավ, էդ թող,— գոչում են հյուրերը:— Դա մենակ սիրունության համար է գրված, փուչ, դատարկ շատախոսություն, երեխայական խաղ, ուրիշ ոչինչ: Սյուս երեսից սկսիր:

Շիլը շրջում է էջը և շարունակում կարդալ:

«...Իսկ այն մասին, որ դու խնդրում ես գրել, թանկագին հայր, թե ինչն է լավ ծախվում և ինչն է լավ փող հանում մեզ մոտ՝ Եգուպեցում, ապա հաղորդում եմ քեզ...»:

— Ըհը, ա՛յ եղտեղից պիտի սկսեիր,— գոհունակությամբ նկատում են հյուրերը:— Կարդացեք, կարդացեք, շարունակեցեք:

«...Հաղորդում եմ քեզ, որ այստեղ ամենից լավ գնում է գեղեցիկ ապրանքը՝ ճոթեղենը և նույնպես արդ ու զարդի ապրանքեղենը, բայց ճոթեղենը՝ ավելի լավ: Նպարեղենն էլ նույնպես լավ է գնում, ոչ վատ, քան մեզ մոտ՝ Մազեպովկայում: Բրդյա կտորեղենը լավ գին ունի, քաշով մեկ ոսկի են տալիս: Շաքարը, այլուրը, թեփը, նույնպես շահավետ են, տանում են արտասահման և դրանցով մարդիկ մեծ և կարողության տեր են դառնում: Մի խոսքով, Եգուպեցը օրհնված տեղ է: Ինքը, քաղաքը շատ մեծ է, արժեր տեսնել: Դա, ընդհանրապես, մի ուրիշ աշխարհ է: Այստեղ, Եգուպեցում դուք կարող եք հանդիպել հրեաների, որոնք արտաքինով երբեք նման չեն հրեայի: Այստեղ թուղթն էլ է ապրանք: Եգուպեցում ամեն ինչ ապրանք է: Եվ մարդիկ քարշ են գալիս այդտեղ, բիրժայում առնում ու ծախում են ամեն տեսակի արժեթղթեր, և այդ գործից միջնորդները մեծ օգուտներ են անում:

Եվ իմ կինը նույնպես՝ տիկին Ռոխելեն, ամբողջ հոգով խոնարհ ողջույն է դրկում ձեզ բոլորիդ: Նա ինքը կգրի ձեզ: Եվ բարձյալն աստված թող մեզ նույնպես լսելու ձեզնից բարի լուրեր, ամեն՛ն:

Եվ նորից հաղորդում եմ ձեզ, որ վարձածս խանութը գտնվում է Ալեքսանդրյան փողոցի հենց կենտրոնում և, կամոքն աստծո, առևտուրն էլ լավ է գնում: Ես օգտվում եմ Մոսկվայի և Լոնդոնի վաճառականների վարկով: Մոսկվայի հետ գործ ունենալը լավ է: Մոսկվան խղճմտանքով է ծախում և հրեա գնորդին էլ սիրում է: Եթե մարդ նույնիսկ կոտր էլ ընկնի, Մոսկվան թույլ չի տա, որ նա կորչի:

Թող աստված ձեզ առողջություն և ուժ տա, և որպեսզի մենք էլ ձեզնից լսենք նույնպիսի մխիթարական լուրեր, որպիսիք ցանկանում եմ ձեզ:

Ինձնից, ձեր որդուց, որը խաղաղություն և երջանկություն է ցանկանում ձեզ՝ ամբողջ կյանքում:

### **Մոյշե-Մենդլ,**

Որդի մեծապատիվ Աիզիկ-Նաֆտոլյայի, ծնյալ ի Մազեպովկա:

Բարևում եմ իմ թանկագին քեռուն և թանկագին քեռակնոջը՝ հանդերձ ընտանյոք:

Բարևում եմ մեծարգո հարուստ ռեբ Սիմխե-Գերշին՝ հանդերձ ընտանյոք:

Բարևում եմ մեծարգո հարուստ ռեբ Դոյիվ-Բերին՝ հանդերձ ընտանյոք:

Բարևում եմ տիկին Ստիսե-Բեյլին՝ հանդերձ ընտանյոք: Նույնպես իմ որդին՝ Իոսիֆը, թող չմարի նրա կյանքի կանթեղը, սրտագին բարևում է բոլորիդ:

### **Վերոնիկայա:**

«Ես նույնպես խոնարհ ողջույն եմ հղում հարգարժան սկեսրայրիս և սիրելի սկեսրոջս, ցանկանում նրանցքախտավորություն: Հայտնում եմ ձեզ իմ քաջառողջության մասին, տա՛ աստված, որ հետագայում էլ այդպես լինի:

Նույնպես խոնարհ բարև է ուղարկում իմ Իոսելեն և շնորհակալություն հայտնում շատ ու շատ անգամ, թանկագին սկեսուրս, ուղարկածդ վերնաշապկի համար: Դրա փոխարեն ձեզ խոստանում է, եթե տերը երկարացնի նրա տարիները և նա, կամոքն աստծո, երեք-չորս տարուց հետո գնա խեղեր, բարեհաջող սովորի և, կամոքն աստծո, դառնա մի բարեպաշտ հրեա. տե՛ր իմ, երկար կյանք տուր նրան, ամեն:

Թանկագին սկեսուրս: Եթե դուք կարող եք Իոսելեի համար գործել երմուկա և մի գույզ գուլպա, ես շատ շնորհակալ կլինեի, այնքանով, որքանով որ շատ զբաղված եմ խանութում, ամուսնուս գործերով, մանավանդ որ Իոսելեի համար ծծմայր վարձել չեմ ցանկանում, չարժե: Ես միայն մի աղջիկ եմ վարձել և վճարում եմ չորս ռուբլի արծաթով հագուստն էլ հետը, նա օրորում է երեխային և կովը քշում դաշտ: Երանի մի տեսնեիք, թե ինչպիսի կով եմ առել: Չորս քվարտ<sup>12</sup>

կաթ է տալիս, շատ հրաշալի կաթ, և ես, փառք աստծո, անում եմ ժածիկ և կարագ: Բայց թանկագին Մոյշե-Մենդլը հանկարծ ձեռք է քաշել կաթնեղեն ուտելուց: Ոնց որ պետքն է դրան մի լավ խրատ

---

<sup>12</sup> Քվարտ — չափ, կես շտոֆ:

տվեք, խնդրո՛ւմ եմ ձեզ: Նա իր մասին բոլորովին չի հոգում: Իռուելեն ճչում է՝ ձայնը գրուխը զցած, ուտել է ուզում իմ խղճուկը, տե՛ր աստված, ապագայում կատարած նրա մեղքերի համար ի՛նձ հատուցիր: Վերջացնում եմ նամակս, ջերմագին բարևում եմ բոլոր բարեկամներին ու մոտիկներին ու խնդրում եմ ձեզ, աստծու սիրուն, պատասխանեք մեզ. մնամ մինչև վերջ ձեզ նվիրված և երջանկություն կամեցող ձեր հարս՝

### **Ռոխյա:**

— Դե,— գոչեց Հաստափոր Բերլը, երբ նամակի ընթերցանությունը վերջացավ:— Աստված իմ գավակներին թող հենց այդպիսի ապրուստ տա:

— Դուք իզուր եք անհանգստանում, Դվոսյա-Մալկա, դուք մե՛ղք եք գործում,— ասաց Յուդիլը,— ճիշտն ասած,մե՛ղք եք գործում...

— Միգուցե: Փառք քեզ, տեր աստված, փառք քո սրբազան անվանը: Աչքով չտանք, երեխեքս լավ են ապրում: Բայց ես կարոտում եմ նրանց: Հարսիս չե՛մ կարողանում մոռանալ, ոեք Յուդիլ, չե՛մ կարողանում...

Եվ Դվոսյա-Մալկան սկսում է Յուդիլին թվարկել հարսի բարեմասնությունները, նրա ամեն շարժուձևը, սովորությունները և բացատրել, թե ինչու չի կարողանում Ռոխյելին մոռանալ:

Նորից թեժանում է աշխույժ գրույցը՝ այժմ արդեն Եգուպեցից և Եգուպեցի գործերից: Հետո թասերը լցնելով օղիով, խվում են միմյանց, ձեռքներում երկար պահելով միմյանց մաղթում են հաջողություն, իսկ ամբողջ ժողովրդին բարի լուրեր, վշտերին մխիթարություն և փորձանքներից ազատություն: Վերջապես սեղանի վրա հայտնվում է բորշչը՝ սենյակով մեկ տարածելով իր ախորժեղի բուրմունքը: Բոլորի տրամադրությունը բարձրանում է, ընդհանուր աշխուժություն է տիրում ու շուտով մոռացվում են և՛ Մոյշե-Մենդիլը, և՛ Ռոխյելեն, և՛ Եգուպեց քաղաքը և մնացած ամեն ինչ:

## **XXVI**

### **Դժոխային տանջանքներ**

Մի մարդ միայն ոչ մի բուպե չի մոռանում Ռոխյելին:

Ընթերցողը կգուշակի, որ խոսքը վերաբերում է Ստեմպենյուին:

Այո, հենց նրա մասին է խոսքը: Ո՞ւմ ուժը կպատի նկարագրելու նրա տառապանքները: Ո՞վ կհասկանա նրա հոգու ցավը և վիրավորանքը:

«Որքա՛ն վիրավորական է, մտածում էր նա, որքա՛ն ցավալի: Մեկնել և նույնիսկ չհիշել, լուր չտալ: Գոնե որպես ձևականություն մի երկու խոսք գրեր, այսպես ու այսպես՝ իմացած եղիր, որ գնում եմ: Թո՛ւ, ինչպիսի խայտառակություն»:

Ստեմպենյուն դեռ երբեք չէր ճաշակել այդպիսի պարտություն: Չնայած նա զանազան կապերի մեջ եղել էր և մեկ անգամ չէր, որ այդ արկածները նրա համար ունեցել էին չափազանց ամոթալի վախճան, հաճախ հասել նույնիսկ սկանդալի, բայց այդպիսի խայտառակ տապալում, այդպիսի հարված, ինչպիսին վիճակվեց նրան, երբեք չէր սպասում: Ստեմպենյուն, որ այնպիսի պատիվ էր

վայելում հենց իրեն՝ ցաղիկի պալատում, որ այդ սրբազան այրի աղջիկները երբեմն թույլ էին տալիս իրենց նրա հետ կատակներ փոխանակել, Ստեմպենյուն, որը հիացնում էր պաներին և նույնիսկ կոմսուհի Բրեժնսկայային, որը քիչ անգամներ չէր կառեթ ուղարկել նրա ետևից և հետը գրուցել ֆրանսերեն լեզվով, այդ նույն Ստեմպենյուն հիմարաբար խայտառակված էր մի հրեա հասարակ կնոջ կողմից:

— Սիրտս թախծում է նրա համար,— խոստովանում էր Ստեմպենյուն երաժիշտներին,— ոչ մի կերպ չեմ կարողանում այդ կնոջը մոռանալ: Սիրով կզնայի նրա մոտ, Եգուպեց, եթե... եթե...

Ստեմպենյուն շուրջն է նայում, և ընկերները հեշտությամբ գլխի են ընկնում, թե ում է փնտրում հայացքով:

Երաժիշտները ամբողջ հոգով սիրում էին Ստեմպենյունին և պատրաստ էին նրա համար թեկուզ կրակը, թեկուզ ջուրն ընկնել: Բայց որքան նրան սիրում էին, այնքան ատում էին Ֆրեյդլին: Նրանց վանում էր Ֆրեյդլի ժլատությունը, ազահությունը, զզվելի վարքը:

Քանի դեռ Ստեմպենյուն ամուսնացած չէր, փողը նրա համար հեչ բան էր, և մի քանի ռուբլի ձեռք գցելն էլ դժվար չէր, կպատահեր նրանից մի երեքանոց, հնգանոց կվերցնեիր՝ անժամկետ, իսկ մի ուրիշ անգամ էլ ինքը կնվիրեր: Իսկ այն օրվանից, ինչ էս կախարդը, գրողը հոգին առնի, իր թաթերի մեջ է առել սրան, ինքն էլ է քոռ կոպեկի կարոտ մնացել, ու մի գրոշ հոգապահուստ չունի: Անցան լավ ժամանակները, այլևս չկան Ստեմպենյունի տված ընթրիքները, անցան զվարճալի ճամփորդությունները: Հիմի կուզես սովից ուռի, ոտներդ փռի, ոչ ոքից օգնություն մի սպասի: Նստած ես գրպանդ դատարկ, աչքդ չռած, թե երբ պիտի սկսվի հարսանիքների սեզոնը: Էդ անիծյալ կնիկը գոնե հենց քաղաքավարությունից դրդված, օրերից մի օր մի բաժակ թեյ դներ առաջներս կամ որևէ ուտելիք, ա՛յ որդերի բաժին դառնա էդ նզովյալ արմատը:

— Կհավատա՞ք, որ ասեմ, մեկ-մեկ էնպես եմ ուզում խժռել, թուքս վագում է, սատանեքը փորումս պար են գալիս, բայց եթե Ստեմպենյունի կնիկը ինձ համար ոսկի էլ դներ սեղանին, իսկի ձեռք էլ չէի տա, նրա նման չար ոգուց մի կտոր հաց էլ չեմ վերցնի:

— Եվ ոնց է կարողանում ապրել էդ տեսակ մողեսի, էդ տեսակ անզգամի հետ: Ես լինեի Ստեմպենյունի տեղը, հիմի վաղուց էի դրան կամ կախել, կամ թունավորել: Ես, ես չլինեի, թե նրան էն աշխարհը, գրողի ծոցը չլրկեի...

— Ա՛խ, Ստեմպենյու, Ստեմպենյու: Խե՛ղճ մարդ, լավ ընկար թալակը ու տապակվում ես գեհենի մեջ:

Այսպես էին իրար մեջ խոսում երաժիշտները, որոնք գիտեին նրա ծանր վիճակը և սրտները ցավում էր նրա դժվարին կացության համար, չնայած ինքը մի խոսք անգամ չէր ասել նրանց:

Երբ Ֆրեյդլը գնում է շուկա կամ զբաղվում է իր պարտապաններով ու առևտրով, նրանց քեֆին քեֆ չի հասնում, այդ ժամանակ Ստեմպենյուն ընկերներին հյուրասիրում է ծխախոտով: Անխնա ոչնչացնելով տիրոջ թուրթունքը, երաժիշտները թիկն տված, մասխարություն են անում, հիշում իրենց երբեմնի օյիններն ու կատակները: Բայց ահա հայտնվում է Ֆրեյդլը, և բոլորն արդեն զգում են իրենց փշերի վրա: Երաժիշտները մեկը մյուսի ետևից դուրս են ծլկում սենյակից:

— Տեսե՛ք, մի տեսե՛ք, ինչքան են ծխել: Ոնց որ գինետուն լինի,— գոչում է Ֆրեյդլը քիթը այս ու այն կողմ պահելով և խորտակված նայելով ծխախոտի փաթեթին, որը զգալիորեն կորցրել էր ծավալից:— Ծխում են, մխով լցնում, հագում: Գլուխս ուռել պայթում է: Ձեր ծխելով ինձ գերեզման

կտանեք: Ստեմպենյու, դու կարծում ես ծխելը քեզօգտ՞ւտ է: Հավատա, դու կործանում ես քո առողջությունը: Ի՛նձ լսիր, Ստեմպենյու, թո՛ղ ծխելը, հոգիս:

— Ֆրեյդլ, ինչի համար են իմ առողջության վերաբերյալ քո այդ դատարկ խոսքերը: Խոստովանիր, որ դու ուղղակի ափսոսում ես այն տասնհինգ կողպեկը, որը ես տալիս եմ ծխախոտին: Էլ ինչո՞ւ ես կատակերգություն խաղում:

— Բարո՛վ եկար: Ի՞նչ կատակերգություն: Իմ դարդն ու ցավը մենակ ինքն է, իսկ նա թե՛ կատակերգություն: Իսկապես որ, այսօրվա անախորժությունները կարծես քիչ էին: Առավոտից կոկորդ եմ պատռել, լեզվակոփվ տվել և քոզ գրոշ էլ չեմ վաստակել: Դա քիչ է, դեռ չորս կողմից էլ ինչ ասես որ չասացին, ինչպես կասեին մի քոծի, մի խոհարարի. սևացրին, ցեխին հավասարեցրին: Իսկ ապրանքը վեր ընկած մնում է ու փտում:

— Ես կուզեի իմանալ, Ֆրեյդլ, ինչու ես այդքան չարչարվում: Ինչի համար է քո այդ գծուծությունը: Երեխանե՞րդ են սոված, ինչ է:

— Մի նայեցեք ապա այդ աստծու գառին: Սրան հարկավոր է պատառը բերանը դնել, հետո էլ օգնել, որ ծամի: Դե, միգուցե ես եղած-չեղածը մորս եմ տանում: Այդպես չե՞, Ստեմպենյու: Կամ միգուցե բոլորը ուտում եմ: Չե՞ որ քո կինը հայտնի վատնող է: Աստվա՛ծ, դու փրկես ու ողորմաս: Դու ա՛յդ էիր ուզում ասել, Ստեմպենյու: Ապա, ուղիղ նայիր աչքերիս. ա՛յդ էիր ուզում ասել:

— Մի՞ թե ես ասում եմ, թե դու ես ուտում: Ես հենց դրա հակառակն եմ ասում, ես ասում եմ...

— Դու ասում ես... Գիտեմ, թե դու ինչ ես ասում: Դեռ մի բան էլ դժգոհ ես ինձնից, Ստեմպենյու, այդպես չե՛: Աստված քեզ մի այնպիսի կին է տվել, որը կարողանում է մի գրոշը դարձնել երկու, որը զօր ու գիշեր միայն քո մասին է մտածում: Ասա տեսնեմ, ի՞նչ է պակաս: Լոռ՞ում ես: Կուզեի իմանալ, թե ինչ կպատահեր քեզ ջութակովդ հանդերձ, Ստեմպենյու, եթե չունենայիր մի այնպիսի՛ կին, ինչպիսին ե՛ս եմ:

— Օ՛, սոսկալի բան: Պա՛, պա՛, պա՛:

Իսկասես որ՝ «պա՛-պա՛-պա՛»: Դու երևի արդենմոռացել ես, թե մինչև ամուսնանալդ ինչ օրի էիր: Հագիդ ոչ շապիկ ունեիր, ոչ մի գույգ գուլպա, ոչ բարձ, ոչ բարձի երես, ոչնչից ոչինչ: Այնինչ բեռով ոսկի էիր աշխատում: Ի՞նչ արեցիր այդքան փողը:

— Ուրեմն ես պիտի իմ ամուրի ժամանակվա մասի՞ն էլ քեզ հաշիվ տամ:

— Ա՛յ, հենց վատն էլ դա է, Ստեմպենյու, որ չես կարողանում լսել, երբ քեզ ճշմարիտ բան են ասում: Դու միայն կարողանում ես նախատել ինձ, քո կնոջը, որը քրտնամխած աշխատում է քեզ համար, որ պատրաստ է քեզ համար ճակատով պատը ծակել, որ մի կտոր հացը խնայում է իրենից և իր կյանքը, կարելի է ասել, թունավորում: Եվ հանուն ո՞ւմ, հարց է առաջանում: Հանուն քեզ: Եվ միտք ես անում, թե ինչ պարզն է սպասում ինձ: Դե ինչ խոսք, ոսկե հուշարձան կկանգնեցնես գերեզմանիս վրա: Ա՛խ, քոռանար իմ բախտը:

— Ես ի՞նչ եմ արել քեզ: Քեզ ո՞վ է բան ասել:

— Ինչ ես արել ի՞նձ: Է՛, դու արել ես բավականաչափ: Դու կործանել ես կյանքս: Դու հանդիպեցիր մի անմեղ աղջկա, մի երեխայի, գլուխը պտտեցրիր քաղցր խոսքերով, ոսկու սարեր խոստացար և խաբեցիր, ամեն ինչով խաբեցիր: Շատ ավելի լավ կլիներ, որ քեզ երբեք ճանաչած չլինեի: Ես իմ թայը կգտնեի: Դե, Ստեմպենյուի կնիկն էլ չէի լինի: Պահ, էլ ո՛նց կլիներ, մե՛ծ երջանկություն է:

— Դու միգուցե փոշմանել ես, Ֆրեյդլ: Այդ դեպքում ինչն է քեզ խանգարում: Մազեպովկայում կա ռաբբի, կա նաև գետ<sup>13</sup>— կարելի է բաժանվել:

— Ընր՛: Ա՛յ թե ինչ էիր ուզում: Վերջապես բերանից թոքրեց: Կարծում ես չգիտե՞մ, որ դու հենց այդ ես ցանկանում: Ուզում ես ազատվե՞լ ինձանից: Գիտե՞մ, Ստեմպենյու, ամեն ինչ գիտե՛մ: Խելքիս լիմոն չես քամի: Չանձրացել ես ինձանից, Ստեմպենյու: Բայց ասա՛, ինչո՞վ եմ դրան արժանացել: Դե, ասա՛, ձեռքդ դիր խղճիդ, ասա՛, ինչո՞վ ես արժանացել: Ես էլ կուզեի իմանալ...

— Գլուխս մի տար,— ձեռքը թափ է տալիս Ստեմպենյուն, գնում իր սենյակը և ջութակը պատից իջեցնում:

Ջութակ՛ կը... Ստեմպենյուի միակ ընկերը, նրա միակ մխիթարությունը: Նրա հետ մոռանում է հոգու տառապանքները, հիշում ջահելությունը, հավերժ կորցրած ազատությունը: Շատ թանկագին դեմքեր են նրա մտքում արթնանու ջութակի հնչյունների ներքո: Շատ ու շատ պայծառ, չքնաղ կենսախիհնդ կերպարանքներ են հառնում նրա առջև ու հենց որ նվագում է ջութակը: Հառնում են և իսկույն չքանում:

Անցյալի անհամար պատկերների մեջ Ստեմպենյուին ամենից ավելի հուզում է մի անմոռաց կերպար. դա Ռոխելեն է իր լուսապայծառ դեմքով, երկնագույն աչքերով, երկար թարթիչներով, ձյունաճերմակ պարանոցով: Իսկ ժպիտը բարի, նազելի: Հանուն Ռոխելելի, նա պատրաստ է տալ ամեն, ամեն ինչ աշխարհում:

Երգում, վետվետում է ջութակը: Երկար-երկար նվագում է Ստեմպենյուն՝ վախենալով հանկարծ չանկանա Ռոխելեն: Նրան հաճելի է տեսնել նույնիսկ Ռոխելելի ստվերը: Նրա մասին մտածելն անգամ անսահման թանկ է Ստեմպենյուի համար:

Դեռ երբեք Ստեմպենյուն այդպես ոգեշնչված չէր նվագել, ինչպես այդ ժամանակ: Նրա արվեստը հասավ անմատչելի բարձունքների: Ո՛վ այդ օրերին չի լսել նրան, չի լսել իսկական երաժշտություն:

Այդպես երբեմն հիանում ենք վանդակում գերված թռչնակի երգով: Նա երագում է կանաչ սաղարթը, փթթող ծաղիկները, ազատ օդը, դաշտերի հեռաստանները, և ցանկանում անվերջ երգել, երգի մեջ հեղել իր վիշտը: Եվ ջութակը երգում է, դայլայլում, գեղգեղում, թախծում, իսկ մենք հիանում ենք նրանով, սքանչանում, բավականություն ստանում:

— Չեմ կարողանում հաղթահարել թախիծս,— արդեն հարյուրերորդ անգամ ասում է Ստեմպենյուն երաժիշտներին:— Կարոտում եմ նրան, ինչպես կկարոտեն ամենամոտիկ մարդուն: Ես նրա ետևից կգնայի Եգուպեց, եթե...

Ստեմպենյուն անհանգիստ շուրջն է նայում և տեսնում Ֆրեյդլին, որն այդ միջոցին ինչ-որ մի կնոջ եռանդով համոզում է գնելու մանյակներ, մետաքսե թաշկինակներ ու բրոյա թելեր: Ֆրեյդլը հետզհետե իր տունը դարձրել էր մի կատարյալ խանութ, ինքն էլ դառնալով մի հմուտ առևտրական, որ ոտք է գցում Մազեպովկայի ամենափորձառու վաճառականների հետ:

Հաճախ Ֆրեյդլի մոտ հյուր էր գալիս նրա հաստիկ մայրը՝ Յիպոյրան: Նա ասում է, որ ջութակահար Շաիկան շատ է կարոտել աղջկան և իրեն ուղարկել է իմանալու, թե ո՞նց է ապրում

---

<sup>13</sup> Ըստ հրեական օրենքի, բաժանության արարողությունը պետք է կատարվեր այնպիսի վայրում, որտեղ գետ կար:

նա: Բայց Ֆրեյդը հրաշալի գիտե, որ դա սուտ է, նա գիտե, որ իր մայրը պարզապես քաղցած է, ու եկել է այստեղ «պասից դուրս գալու», իր քեֆին ապրելու:

— Գիտե՞ս ինչ, աղջիկս, լավ կլինեն կաթնահունց թխեիր, էն կաթնահունցից, որ մի ժամանակ ես թխում էի՝ ոլործուն ու լավ կարմրեցրած: Մի բաժակ եղարդակ էլ որ գցես, ավելի լավ կլինի, առողջության համար, ասում են, խիստ օգտակար է, իսկ եթե ժլատություն չանես, յուրը բոլ անես, ավելի լավ կլինի: Նախաճաշին էլ, վատ չէր լինի, որ սագի փորոտիք եփեիր սոխով: Հայրիկդ, հիշո՞ւմ ես, էդ ճաշը շատ էր սիրում: Առողջությունը, աղջիկս, ամանի մեջ է, և ոչ թե դեղ ու դարմանի:

Ցիպոյրան նույնիսկ շրթունքներն է լիզում և ամեն օր՝ ճաշին, նախաճաշին ու ընթրիքին նորանոր խորտիկներ պատվիրում: Չի կարելի ասել, որ Ֆրեյդը շատ գոհ է դրանից... Մկզբի մի քանի օրը աստամները հուպ տված ընդառաջ էր գնում մոր անհագ ախորժակին: Բայց անցնում է մի շաբաթ, և Ֆրեյդը սկսում է մոր վրա փքվել, սա էլ՝ նրա: Ստեմպենյուն լսելով նրանց լեզվակոխվը, փորձում է կնոջ ու գոքանչի միջև խաղաղություն հաստատել, և վերջ ի վերջո նրան էլ է հասնում, ընդ որում՝ ավելի շատ:

— Քո գործը չի,— խոսքը կտրում է Ֆրեյդը,— մի վախենա, քո ունեցվածքը մորս չեմ տա, կարող ես միանգամայն հանգիստ լինել:

— Լավ փեսա է,— թունտոտ Ֆշշում է գոքանչը իրհերթին,— եզն էլ ունի մեծ լեզու, բայց բառաչել չգիտի: Կանոնավոր մարդկանց մոտ գոքանչը նույն հարգանքն է վայելում, ինչպես որ մայրը, իսկ սրա համար՝ հե՛չ: Կարելի է կարծել, որ հրաշալի տեսնում է, որ իմ սիրելի աղջիկը իմ շշպոում է, էնպես է շշպոում, որ չգիտես ամոթից ուր կորչես, իսկ սրա լեզուն, ասա իսկի պտտո՞ւմ է, որ մի խոսք ասի: Ես էլ պիտի ասեմ տղամարդ ես ու փափախ ունես գլխիդ: Ջուրթակով ճզրվրզը անելուց բացի, ոչինչ չգիտես: Չեմ հասկանում, թե ոնց չի ձանձրանում: Եվ թե ինչի համար է էդ իմ աղջիկը քիթը եղպես բարձր պահում: Ում գործը հաջողակ է, նրա եզն էլ անգամ կթվում է: Դե լավ, դրանց նմաններին շատ ենք տեսել: Քո աները, Ստեմպենյու, չտեսնված ջութակահար էր, քեզնից էլ պակաս չէր լինի, բայց թե ինչ կարող ես անել: Նոր ավելը, ինչպես ասում են, լավ է ավլում: Ամեն ինչումն էլ հաջողություն է պետք, ինչպես առածն է ասում. «Աստված որ ուզեց, ավելն էլ կկրակի»: Դու ինձանից մի նեղանա, Ստեմպենյու, որ ճշմարտությունը երեսիդ եմ ասում: Եվ չնայած, ինչպես ասում են, ամեն մի շուն իր շեմքի տերն է, բայց և այնպես, և ես քեզ համար օտար չեմ, ինչքան չլինի քեզ գոքանչ եմ գալիս: «Կատվի հետ խաղ անողը, նրա ճանկերն էլ պիտի սիրի»:

Ցիպոյրան, ինչպես ջվալից, առածներ ու ասացվածքներ է, որ թափում է: Երբ նա տաքանում է, նրան չես կարող կանգնեցնել: Բայց Ստեմպենյուն մինչև վերջ չի լսում: Նա ձեռքն է առնում ջութակը ինչպես միշտ, երբ հոգին ծվատում է վիշտը: Երբ ջութակը ձեռքին է, նա մոռանում է և՛ կնոջը, և՛ գոքանչին, և՛ բոլոր փորձանքներն ու նեղությունները: Նրա հայացքի առջև նորից կանգնում է կապուտաշյա Ռոխելեն:

— Հոգիս նրան է ուզում, ա՛խ, ինչպես է ուզում...— շշնջում է ինքնիրեն Ստեմպենյուն: Նա հազար տեսակ միջոց է մտածում փախչելու նրա մոտ, տեսնելու նրան մի անգամ ևս...

Ձո՛ւր հույսեր...

Նա չի հասկանում, որ իր երզը երզված է, որ կյանքի լավագույն մասը արդեն ետևումն է, չի նկատում, որկամաց-կամաց նոսրանում են հրաշալի, սև գանգուրները, մարում աչքերի կրակը և թե ինչպես են կնճիռները ակոսում սպիտակ ճակատը:

Հիմա՛ր, հիմա՛ր հսկա: Մի՛ խաբվիր: Շուրջդ նայիր: Հենց կողքիդ նստած է քո Դալիան, քո կինը՝  
Ֆրեյդլը: Այդ Դալիան՝ գլուխդ դրած իր ծնկին օրոր ասաց քեզ, թմրեցրեց և ծածուկ կտրեց քո երկար  
զանգուրները և զրկեց ուժից, հսկայի քո ողջ ուժից, ինչպես աստվածաշնչի Դալիան իր հսկային՝  
Սամսոնին... Միայն մի ուրախություն է մնացել — քո ջութակը:

Դե՛, ուրեմն, նվագիր, Ստեմպենյու, նվագիր քո ջութակը: Սկսի՛ր, իսկ մենք էլ կլսենք: